This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.

+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.

+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.

+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES ·
1817

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Ե. Ա. Ք. ԳԵՂԱՄԵԱՆՑ

ՄՏՕՐՈՒՄՆԵՐ

Կարգաթիւ 807

Արտատպած «Հովիւ» շաբաթաթերթից

ТИФЛИСЪ
Электропечатня Груз. Издатель. Т-во.
1907

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES
Digitized by Google

GRAD
536
Digitized by Google

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ա.

Մի դար կը լինի, որ հայերիս մի ստուար բազմութիւն ապրում է ռուսաց իշխանութեան ներքոյ, իբրև նրա հպատակ։

Այդ ժամանակի երեք քառորդում կառավարութիւնը հաշտ աչքով է նայել մեզ վրայ, հովանաւորել, պաշտպանել է մեզ. այլ և այլ արտօնութիւններ՝ է տուել՝ տնտեսապէս, բարոյապէս և մտաւորապէս զարգանալու և յառաջադիմելու համար։ Եւ եթէ այսօր մենք բաւականին աչքի ընկնող մի տարր ենք ներկայացնում մեզնից,— դա հետևանք է ռուս կառավարութեան առանձին բարեհաճութեանը դէպ 'ի մեզ, նրա հոգատարութեանը, նրա գուրգուրանքին։

Այս պէտք է խոստովանենք և ընդունենք հրապարակօրէն, որովհետև չենք կարող երախտամոռ, ապերախտ լինել։

Բ

Իսկ կառավարութեան այդպիսի վերաբերմունքը՝ [illegible] անի վերագրել արդեօք։

Մեր բնավայրերի աշխարհագրական դիրքին և մեր ազգային մի քանի առանձնայատկութիւններին, որոնցից կառավարութիւնը,— յընթացս երկու հարիւր և աւելի տարիների,— մեծապէս օգտուել և հետըզհետէ յառաջ խաղացել Ասիայում։ Նա մեր միջոցաւ

Digitized by Google

ընդարձակել է իւր սահմանները, շէնացրել իւր ձեռք բերած անապատները, տարածել իւր վաճառականութիւնը, իւր ունեցած ազդեցութիւնն ու քաղաքակըրթութիւնը—կուլտուրան։

Գ

Այս ամենը ապացուցանող գրաւոր պատմութիւններ կան։ Կան և անգիր յուշարձաններ և կենդանի կոթողներ, որոնք ձգուած ու սփռուած են Երախսի խառնարանից՝ մինչև Նրա ակունքը՝ Բինգեօլի բարձրաւանդակում. Սիւնիքի և Արցախի կրճերիցն ու խոխոմներից՝ մինչև Զաթրդաղ, և Դոնի առազուտները. Խաղրաց անապատներից՝ մինչև Ծորա պահակը. Կուրի ակունքներից՝ մինչև Ամուդարիա...։

Դ

Մեր ազգային, այսպէս ասած, քաղաքային գործիչները՝ Իսրայէլ Օրիիցն սկսած՝ մինչև Խամսայի Մելիքները, Յովսէփ Արղութեանիցն ու Ներսէս Աշտարակեցուցն սկսած՝ մինչև Լազարեան իշխանները, —կարճ ասենք՝ մեր բոլոր՝ հին և նոր, առաջնակարգ և երկրորդական, յայտնի և անյայտ բոլոր գործիչներն՝ իրանց և իրանց ազգի կողմից մեծամեծ զոհեր են մատուցել ռուս դիւանագիտութեան սեղանին երկու ամբողջ դար շարունակ։

Եւ շարունակ... յուսախաբ եղել իրանց ակնկալութիւնների մէջ։

Այնպէս որ՝ եթէ կառավարութեան և հայ ազգի փոխադարձաբար միմեանց մատուցած ծառայութիւնները կշռելու լինենք.—Նժարի ծանրութիւնը անշուշտ մեր՝ հայերիս կողմը կը լինի։

Digitized by Google

Ե

Սրանով չենք ուզում ասել այժմ թէ՝ կառավարութիւնից որեւէ փոխարինութիւն, պարտքի որեւէ հատուցումն ենք պահանջում կամ խնդրում։—Ոչ, քաւ լիցի։—Ընդհակառակը՝ շնորհակալ ենք կառավարութիւնիցը և այն բարիքների համար, որ 75 տարի վայելել ենք նրա հովանույն ներքոյ՝ ի տրիտուր մեր մատուցած մեծամեծ ծառայութիւններին։

Բայց եթէ կառավարութիւնից որեւէ պահանջ անելն՝ մեզ իրաւունք չենք համարում, կամ ապարդիւն համարում,—գոնէ լիակատար իրաւունք ենք համարում և բաց ճակատով միշտ կարող ենք պահանջել, որ կառավարութիւնը մեզ ազգովին ողջակէզ չբերէ իւր այն քաղաքական նպատակին, որ վերջին արեւելեան պատերազմից յետոյ՝ սկսել է գործադրել մեզ վրայ։

Որպէս զի մեր ընթերցողները այդ նպատակի մասին փոքր ինչ գաղափար կազմեն, մենք ստիպուած ենք վերջին 30—40 տարուայ ազգային անցքերից մի քանիսն հարեւանցօրէն առաջ բերել մեր յօդուածներում, այն համոզմամբ, որ այդ անցքերի ծանօթութեամբն ու ըմբռնմամբ և եթ՝ կարելի կը լինի հասկանալ, թէ ինչու համար ռուս կառավարութեան նախկին բարեկամական, պաշտպանողական քաղաքականութիւնը՝ վերջին քառորդ դարում՝ ակնյայտնի թշնամական, հալածողական քաղաքականութեամբ, փոխուեցաւ։

Զ

Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցու ղեկավարութեամբ կազմուած հայկական կամաւորների գնդի

Digitized by Google

զօրեղ աջակցութեամբն՝ Արարատեան դաշտին տիրելով և յատուկ օրէնսդրութեամբ (положеніе) ամենայն Հայոց կաթուղիկոսութեան անունն ու նշանակութիւնը բարձրացնելով՝ ռուս կառավարութիւնը նոյն կաթուղիկոսութեան միջոցաւ ձեռնարկեց իւր ազդեցութիւնը տարածել մինչև Վոսփորի ափերը, մինչև Ոսկեղջիւրը։

Կ. Պօլսոյ Մատթէոս Պատրիարքին կաթուղիկոս ընտրել տալն՝ հէնց այդ նպատակն ունէր։ Իսկ նպատակի իրագործումը յանձնուած էր Միքայէլ Տարիելեան Լորիս-Մելիքովին, որ կառավարութեան կողմից կաթուղիկոսական յատուկ հրաւիրակ գնաց Պօլիս։

Լորիս-Մելիքովը պաշտօնով զինւորական էր, սակայն զօրավարութիւնից առաւել քաղաքագէտ անձն էր։ Նա իւր միսիան յաջողութեամբ կատարեց։

Է

Այդ միջոցներում տաճկահայերի ազգային—եկեղեցական գործերն վարում էր, այսպէս անուանեալ «Ազգային գերագոյն ժողով»՝ կազմուած 30 հայ իշխաններից (ամիրայ) և Պօլսոյ պատրիարքից, որ ժողովի նախագահն էր։ Որոշեալ օրերին ամիրաները հաւաքւում էին պատրիարքարան, այնտեղ կարդում, տեղեկանում այն ամենի մասին, ինչ որ մինչև ժողովի օրը ազգի մէջ տեղի էր ունեցել և լուռ ու մունջ քննում ու վճռում։

Լորիս-Մելիքովը յաջողեցաւ գերագոյն ժողովի անդամներին որսալ և հայ ու ռուս եկեղեցիների միացման ծրագիրը կազմեց։

Այդ ծրագրով, 'ի միջի այլոց, Էջմիածնի Սինո-

Digitized by Google

դէ անդամների մէջ մնում էին որոշ թւով Տաճկաստանի և Բուլղարիայի հայ եպիսկոպոսներից ու վարդապետներից։—Իսկ ծրագրի իրագործման հակառակորդները, և յատկապէս ռուսահայերը,—եթէ եղան այդպիսիք,—դատելու և պատժելու էին այն ժամանակւայ քրէական ծանր օրէնքներովը։

Սակայն գերագոյն ժողովի անդամների կողմից ընդունած յիշեալ ծրագիրը՝ չընդունեցին Մակար եպիսկոպոսը (վերջերում կաթուղիկոս), որ Էջմիածնի կողմից կաթուղիկոսին հրաւիրակ էր գնացել, և նորընտիր Մատթէոս կաթուղիկոսը։

Ը

Այս երկու հոգևորականները իրանց այդ ընթացքի համար թէպէտ և կողմնակի և անկողմնակի ճընշումների ենթարկւեցան Պօլսում,—այնուամենայնիւ մինչև վերջը անդրդւելի մնացին։

Մատթէոս կաթուղիկոսը միշտ այն էր պնդում թէ՝ քանի որ ինքը տակաւին Ս. Էջմիածնում ս. Օծումն ընդունած չէ, դեռ նա կաթուղիկոս չէ, հետևաբար իրաւունք չունի, որևէ թղթի կամ ծրագրի վաւերացումը տալ իբրև ամենայն հայոց կաթուղիկոս։

Նրա այդ պատճառաբանութիւնը, վերջ 'ի վերջոյ, յարգւեցաւ մինչև նրա Թիֆլիզ ժամանելը, ուր Վեհափառը կրկին մերժեց իրան եղած ստորագրելու առաջարկը։ Վերջապէս հասաւ Էջմիածին, օծւեցաւ և դարձեալ մերժեց, միշտ մերժեց։

Մատթէոսի այդ կուռ մերժումներն էին, որ նըրան և նրա կաթուղիկոսութիւնը, վերջին տարիներում, «վշտալի» դարձրին։

Digitized by Google

Այսպիսով ահա Լորիս-Մելիքովի ծրագիրը գլուխ չգալով՝ հայ եկեղեցւոյ միացումը տեղի չունեցաւ ռուսաց եկեղեցւոյ հետ։

Բ

Լորիս-Մելիքովը թէպէտև լաւ քաղաքագէտ էր, բայց Ալի փաշային չէր հասնում։ Որովհետև մինչդեռ առաջինը իւր լուռ ու մունջ և ծուռ ու մուռ գործողութիւններով, տաճկահայերի մէջ ներքին ատելութիւն էր ծնեցնում դէպ 'ի ռուս կառավարութիւնը, Ալի փաշան, ընդհակառակը, այդ ժողովրդի սիրտն ու հոգին ձեռաց դէպ 'ի Սուլթանի գահոյքն էր գրաւում մի փայլուն, ակնյայտնի և խորագէտ ձեռնարկութեամբ, որ էր տաճկահայերին ինքնավարութիւն կամ սահմանադրութիւն տալն, փոխանակ նախկին «գերագոյն ժողովին»։

Որպէսզի տաճկահպատակ հայերն կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ օտարազգի դիւանագէտների թալակը չընկնին՝ Ալի փաշան **ինքը, ինքնաբերաբար**՝ տաճկահայերին սահմանադրութիւն տուաւ, որպէսզի առանց այլ ևս գաղտնի և յայտնի ոստիկաններ և ժանդարմներ պահելու՝ հայերի իրանց բերանից, իրանց ճառերից և իրանց թերթերից լաւ և ճիշտ տեղեկութիւն ունենայ այն ամենի մասին, ինչ որ կատարւելու են նրանց մէջ, թող որ երեսփոխանների թւի մէջ պէտք է մտնէին Բարձր Դռան հայ ազգի պաշտօնեաները։

Այսպիսով Ալի փաշան մէկ ձեռքով երկու ձմերուկ բռնեց։

Digitized by Google

Ժ

Պօլսոյ ազատամիտ հայ երիտասարդութիւնը սահմանադրութեան ատեն, իւր ժամանակին, շատ խօսեց ու գրեց, շատ ճառեց ու ներբողեց և նոյն իսկ յինքն իրան հեղինակ հրատարակեց Ալի փաշայի այդ հարազատ զաւակին, որի ծնած օրն և եթ նա լաւ գիտէր, որ նա,—այդ զաւակը,—բնաւ չպիտի կարողանայ երբ և իցէ զօրանալ, կազդուրուել, ոտքի կանգնել և իւր ազատ կամքովը շարժուել։ Բայց այդ ինչ փոյթ։

Պօլսոյ հայութիւնը՝ նա մանաւանդ երիտասարդութիւնը շատ գոհ էր և երջանիկ. որ ամէն տարի մայիսին՝ կարողանում էր անարգել խմբուել Վոսփորի դալարագեղ, սաղարթախիտ ափերում և իբր թէ ազատ հայութեան ազատ երգերով օդը թնդացնել։

Լսելով այդ աղաղակները, այդ բարձրագոչ «կեցցէ ազգն ու սահմանադրութիւն» Ալի փաշան Վոսփորի միւս ափից քմծիծաղով անդրադարձնում էր «կեցցէ և հայ զէվզէկութիւնը»։

Սակայն բանն այդ չէ, այլ այն, որ 'ի շնորհս Լորիս-Մելիքովի տաճկահայերը սահմանադրութիւն ստացան ի մեծ ցաւ, մինչև իսկ 'ի զայրոյթ ռուս դիւանագիտութեան, որ սակայն տաճիկ դիւանագիտութեան, երեսից կրած այդ պարտութեամբ չխրատուեցաւ, այլ նորանոր փորձեր արաւ։

ԺԱ

Գէորգ Դ–րդ դեռ ևս Պրուսայի Առաջնորդն էր. երբ Պետերբուրգում նրան ս. Էջմիածնի ապագայ կաթուղիկոսացու էին համարում։ Մատթէոսի յան-

Digitized by Google

կարծական և անակնկալ մահից յետոյ, Պօլսոյ ազգայինք իրանց և ողջ տաճկահայերի ճնշող ձայներով (որ, սակայն, մի մարդու,—Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանին իբրև մի Թղթատարի էին յանձնել էջմիածին բերելու) երկրորդ անգամ ռուս կառավարութեան թեկնածուին կաթուղիկոս ընտրեցին ռուսահայ պատգամաւորների մասնակցութեամբ ՚ի հարկէ։

ԺԲ

Նորընտիր կաթուղիկոսը չէր ուզում Պօլսից մեկնել, մինչև որ պօլօժենիան չփոխւի, որպիսի հարցը բարձրացած էր և՛ Մատթէոսի օրով և լրագրութիւնով, մանաւորապէս «Ծիլն Աւարայրի»-ով։

Կաթուղիկոսին հասկացրին և համոզեցին, որ եթէ ուզում է իւր բոլոր խնդիրները յարգւած ու կատարւած տեսնել, թող նախապէս թագաւոր կայսեր ներկայանայ։ Եւ Գէորգ Դ. ներկայացաւ։ Պետերբուրգից վերադառնալիս՝ նա ծանրաբեռնւած էր ինչպէս իրաւունքներով, նմանապէս և պարտաւորութիւններով։

ԺԳ

Իրաւունքների մէջ մտնում էր, ՚ի միջի այլոց, նաև էջմիածնում հոգևոր ճեմարանի հիմնումը և առանց գրաքննչի «Արարատ» ամսագրի հրատարակումը, որոնք և գլուխ եկան, իրականացան։ Իսկ պօլօժենիայի փոփոխումը ձգձգւեցաւ... մինչև կաթուղիկոսի մահը։ Դրա պատճառը այս էր։ Կառավարութիւնը առաջարկեց կաթուղիկոսին, որ նա ինքը նոր պօլօժենիա խմբագրէ և ներկայացնէ, ինչպէս որ իւր նախորդ Մատթէոսն էր արել. Գէորգը պնդում էր,

Digitized by Google

որ Նոր պօլօժենիայի խմբագրութեանը պիտի մասնակցեն ո՛չ միայն հոգևորականները, այլ և աշխարհականները։ Եւ ոչ միայն ռուսահայերը, այլ և տաճկահայերը, պարսկահայերը և հնդկահայերը։

Կառավարութիւնը առաջարկեց կաթուղիկոսին մատնանիշ լինել այն աշխարհական անձերին թէ Ռուսաստանում՝ և թէ արտաքոյ նրան, որպէս զի դեսպանների միջոցաւ ազդարարուեն ու հրաւիրեն Էջմիածին։ Կաթուղիկոսը պատասխանեց, որ աշխարհական պատգամաւորներին. երբ նրանք ընտրուեն. նա ինքը իւր կողմից կը ազդարարէ և կը հրաւիրէ։

Համաձայնութիւն չկայացաւ.

ԺԴ

Գէորգ Դ.-ի ստանձնած պարտաւորութիւնների թւումն էին ա) Սսի կաթուղիկոսութեան հեստեալ հրատարակելն 'ի պաշտօնէ և Կիլիկիայում՝ ձեռնադրուած եպիսկոպոսներին Էջմիածնի հպատակութիւն ընդունել տալն և բ) Կ.-Պօլսում՝ կաթուղիկոսական փոխանորդութիւն սահմանելն և նրա իրաւասութեան ներքոյ Բերայում, 'ի հաշիւ ռուս դեսպանատան, մի հայկական դպրոց հիմնելն *)։

Սակայն այս պարտաւորութիւններից ոչ մէկն էլ գլուխ չեկաւ։ Եւ չեկաւ կաթուղիկոսից բոլորովին անկախ պատճառներով։

ԺԵ

Առաջին հարցի վերաբերութեամբ՝ կաթուղիկոսը պաշտօնական կոնդակաւ արաւ, ինչ որ խոստացած

---

*) Ծանօթ. Թէոդոսիայում Խալիբեան դպրոցը կառավարութեան յոյսը չկարողանալով արդարացնել՝ արդէն փակուած էր այդ ժամանակ։

Digitized by Google

էր. Կիլիկիայում ձեռնադրուած Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանից և մի երկու ուրիշներից ստորագրութիւն ևս առաւ Սսի կաթուղիկոսութեան հետևեալ լինելուն։ Սակայն Գէորգ Դ.-ի այդ կոնդակի և վարմունքի դէմ տաճկահայք բողոք բարձրին և միահամուռ ձայնակցեցին Օտեանի այն կրակոտ ճառին թէ՝ «Սիսը պէտք է պահենք, որպէսզի Էջմիածինը պահած լինենք»։—Ռուս դիւանագիտութիւնը մի անգամ ևս յաղթուեցաւ։ Եւ յաղթողն էր... մի Գրիգոր Օտեան, որը, սակայն, ստիպուած եղաւ շուտ թողնել Պոլիսը։

ԺՁ

Գալով երկրորդ հարցին,—կաթուղիկոսական փոխանորդութեան,—դա էլ խափանեց Բարձր Դուռը, երբ Ջալալեան Սարգիս եպիսկոպոսը, իբրև կաթուղիկոսական փոխանորդ, Ալի փաշայի ապարանքը մտաւ Գէորգ Դ.-ի նամակը ներկայացնելու, փաշան՝ նախ քան նամակի կնիքը քանդելն մօտաւորապէս այս ասաց։ Սիրով և յարգանքով ընդունում եմ Ձեզ, իբրև հայ ազգի մի եպիսկոպոսի, **բայց ոչ երբէք իբրեւ կաթուղիկոսական փոխանորդի,** որպիսի պաշտօնը՝ ինչպէս որ ցարդ վարել է, այսուհետև էլ պիտի վարէ այստեղ Կ.-Պոլսում նստող՝ բոլոր տաճկահայերի պատրիարքը։

Կաթուղիկոսին շատ բարև գրեցէք ինձնից և ասացէք թէ՝ երբ Մատթէոս կաթուղիկոսը փոխանորդութեան այս հարցը հրապարակ հանեց՝ չէ՞ որ Գէորգն էր, (այն ժամանակ պատրիարք Պոլսում), որ ինձ ասաց «աս հարցին մէջ՝ ես Ռուսիոյ մատը կը տեսա-

Digitized by Google

նամ»։ Արդ՝ այն ժամանակ Գէորգ Դ.-րդ Պօլսէն Ռուսիոյ մասն կը տեսնար, հապա ինչպէս բան է, որ նոյն մասը էջմիածնէն տեսնել չէ կարող։

Ջալալեան Սարգիս եպիսկոպոսը յետ դարձաւ.

ԺԷ

Գէորգ Դ.-ի սահմանած պարտաւորութիւններին չիրականանալն՝ կառավարութիւնը վերագրում էր թէ իրան կաթուղիկոսին և թէ առաւելապէս Վահրամ եպիսկոպոս Մանկունուն, որ արդարև, որոշ ազդեցութիւն ունէր Վեհարանում և ընդհանրապէս յայտնի էր իբրև ոչ ռուսասէր։ Այս պատճառաւ կառավարութեան կողմից մի հալածանք սկսեցաւ դէպ 'ի կաթուղիկոսը, նա մանաւանդ դէպ 'ի Մանկունի եպիսկոպոսը։ Հալածողների թւումն էր «Մշակ» լրագիրը, որ իւր գոյութեան օրից սկսած՝ դէպ 'ի Հայ հոգևորականութիւնը ու հոգևոր հաստատութիւնները մի այնպիսի դիրք բռնեց, որ կառավարութեան քաղաքականութեան նկատմամբ՝ շատ նպաստաւոր եղաւ։ Հետևաբար 'ի զուր չէր, որ «Մշակը» համարւում էր «կառավարութեան օրգան, առանց սուբսիդիայի»։

Դէպքերը հետզհետէ վրայ եկան աւելի սաստկացնելու կառավարութեան կասկածը և... «Մշակի» յարձակումները։

ԺԸ

Քաղաքական որոշ նկատումներով՝ կառավարութեանը անհրաժեշտ էր Երուսաղէմում մի վանք ունենալ։

Երուսաղէմի Հայոց պատրիարքին առաջարկու-

Digitized by Google

թիւն եղաւ՝ Ս. Յակոբայ վանքը վաճառել Ռուսներին մեծագնով։—Եւ որովհետև այդ բանը պատրիարքի իրաւասութիւնից վեր էր, ուստի նա մատնանիշ եղաւ Պօլսոյ պատրիարքի վերայ։ Սա էլ՝ միևնոյն պատճառաւ, մատնանիշ եղաւ ամենայն Հայոց կաթուղիկոսի վրայ։ Գէորգ Դ. էլ, իւր հերթում, յայտնեց, որ նա ինքը ևս անկարող է ինքնագլուխ մի այդպիսի հարց վճռել, այլ հարկաւոր է համազգային ժողով գումարել ամեն տեղի հայերի ներկայացուցիչներից։

ԺԹ

Կաթուղիկոսի այս հիմնաւոր և անկեղծ պատասխանը՝ կառավարութիւնը իրան համար ծանր, վիրաւորական համարեց։ Եւ էլ աւելի աչքից ձգեց կաթուղիկոսին։—«Մշակը» աճապարեց և, Րաֆֆիի ստորագրութեամբ, մի շարք յօդուածներ տպագրելով ապացուցանում էր Ս. Յակոբայ վանքի և միաբանութեան՝ վնասակար լինելն ազգի համար։ Եւ թէ՝ ազգին այդ մեծ չարիքներից ազատելու միակ ելքը՝ յիշեալ վանքի վաճառումն է։ Ափսո՛ս, որ «Մշակը» վանքը գնող մուշտարու անունը չէր յայտնում։

Յօդուածները, ըստ սովորականին, լի էին նախատական և վիրաւորական բառերով ու տգեղ բացականչութիւններով դէպ 'ի հայ հոգևորականութիւնը։ Եւ կարծեմ հէնց այդ յօդուածների առթիւ էր, որ «Արարատը» «Վաճառուած գրիչ» անուանեց «Մշակին»։— Սա, 'ի հարկէ, վրդովուեցաւ և «Արարատին» դատի կանչել սպառնաց, բայց դժբաղդաբար չկանչեց։

Ի

Ասում ենք դժբաղդաբար, որովհետև դատավարութեան ժամանակ շատ և շատ հետաքրքիր դօկումենտներ, փաստեր էին հրապարակ ելնելու, ծածուկ մնացած շատ իրողութիւններ էին պատմուելու սկսեալ գրաքննական ատենում տեղի ունեցած հայ խմբագիրների ժողովից, ուր ժեներալ Մաքսիմովիչ նախագահը ժողովականներին ազատամտութեան դասեր տալով՝ բացարձակ հրահանգ և արտօնութիւն էր տալիս հայ կղերին տապալելու,—այո, այդ պատմական ժողովից սկսեալ՝ մինչև այն զազիր պատմութիւնը, որով «Մշակը» իւր ընթերցողներից բակած էր 5 կոպէկանոց նուէրներ հանգանակել «օրիորդ» Մանկունուն արձան կանգնեցնելու համար»։

Բայց անցնենք մենք միտրումներին*)։

ԻԱ

Նախ քան արևելեան վերջին պատերազմի ձեռնարկելն՝ ռուս դիւանագիտութիւնը բաւականին փորձեր կատարեց տաճկահայերի մէջ ևս այնպիսի խլրտումներ առաջացնել, որպիսիք առաջացրել էր Բալկանեան թերակղզու Սլաւոն փոքրիկ ազգութիւնների մէջ։

Սակայն դիւանագիտութեան ջանքերն ապարդիւն անցան։

Ճշմարիտ է՝ Իգնատիեվ դեսպանը յաջողած էր Կ.-Պօլսում ստւար ստորագրութիւններով մի խնդրագիր կորզել Տաճկահայերից յանուն ռուս իշխանու-

*) Ցարդ գրածներս և այսուհետև գրելիքներս՝ հիմնուած են յիշողութեանս վրայ, ուստի թող ներեն ինձ, եթէ ժամանակագրական սխալների հանդիպեն մարդիկ։

Digitized by Google

թեան, սակայն այդ կրաւորական միջոցն եւս գործին չօգնեց։

ԻԲ

Պոլսոյ ողջ հայ մամուլը, կարծեօք «Մասիս»-ի խմբագրի—Իւթիւճեանի—թելադրութեամբ մի օր մի այսպիսի միտումնաւոր լուր հրատարակեց, իբրեւ թէ Գէորգ Դ. յանկարծակի Սիբիր է աքսորուած և այնտեղ հացով և կվասով միմիայն կը կերակրուի՝ սուսերամերկ ժանդարմների խիստ հսկողութեան տակ։

Ողջ Պոլիսը դղրդաց։ Իգնատիեւին տրուած խընդրագրոյն ստորագրող ամբոխը՝ դէպ 'ի դեսպանատուն դրոհ տալով՝ խնդիրը յետ էր պահանջում. Եւ թէպէտ այլանդակ լուրը թէ 'ի պաշտօնէ և թէ մասնաւոր միջոցներով հերքուեցաւ, սակայն նա իւր որոշ ազդեցութիւնը գործել պրծել էր և նպատակին հասել։

Տաճկահայերը թէ Պոլսում և թէ Փոքր Ասիայում տեղերից շարժ չեկան. Սլաւոնների օրինակին նրանք չկամեցան հետեւել։

ԻԳ

Տաճկահայ գործիչները լաւ վարուեցան արդեօք թէ վատ, որ չհամակերպելով Իգնատիեւի քաղաքական ծրագրին՝ նրան եղջիւր ցոյց տուին,—դա բոլորին այլ հարց է, կարօտ թեր և դէմ վիճաբանութեան։ Գլխաւոր բանը նրանումն է, որ նրանք,—այդ գործիչները,—իրանց ազգայինների համար նախապատիւ և օգտակար համարեցին իրանց թագաւորին,—Օսմանեան Գահակալին—հաւատարիմ մնա-

Digitized by Google

յով՝ առանց այն էլ նրա նոյն օրերի դժւարին կացութիւնը՝ իրանց կողմից ևս չդժուարացնել։

ԻԴ

Տաճկահայ գործիչների կարծիքն ունէր նաև ամենայն Հայոց կաթուղիկոսը, որ և պարզ 'ի պարզոյ յայտնեց Լորիս-Մելիքովին, երբ սա պատերազմի նախնթաց օրերից մէկում Ս. Էջմիածին ուխտի գնալով՝ կաթուղիկոսից կոնդակ էր խնդրում յանուն Փոքր Ասիոյ տաճկահայերին, որպէս զի նրանք ռուս բանակի դէմ արգելքներ չհանեն, այլ ձեռքներիցը եկած օգնութիւնը ցոյց տան։

—«Դժբաղդաբար,—պատասխանել էր Գէորգ Դ. —տաճկահայերը ինչպէս մինչև հիմայ օգնել են ռուս բանակին, այսուհետև նոյնպէս կօգնեն, մանաւանդ երբ անոր (բանակի) գլուխ անցած են, տղմս. քեզ և Լազարովի նման հայ զօրավարներ, Ուստի ինձ, կաթուղիկոսիս ալ հարկ չկայ քաղաքական այդ խաղերուն մէջ մտնալ։ Ինձի միայն սա կը մնայ իմ և ազգիս կողմէն կրկնել՝ Տէր, զի՛ բազում եղեն նեղիչք իմ»։

ԻԵ

Սակայն ինչ որ Իգնատիեվ և Լորիս-Մելիքով չյաջողեցան ձեռք բերել Պօլսում և Էջմիածնում, նոյնը ձեռք բերեց ամենայն հեշտութեամբ Կովկասեան իշխանութիւնը Թիֆլիզում ըստ այն ռուսական առածին թէ «ձուկ չեղած տեղում, խեցգետինն եւ ձկան տեղ է անցկենում»։

«Մշակ» լրագրի ջանքով Թիֆլիզի հայերի կողմից մի ադրես խմբագրուեցաւ և յատուկ պատգա-

Digitized by Google

մաւորութեամբ, որի նախագահը Գրիգոր Արծրունին էր, ներկայացրեց մեծ իշխան փոխարքային՝ Թագաւոր կայսեր ներկայացնելու համար.

Ադրես տուողները կայսեր պաղատում էին իւր քաղցր ուշադրութիւնը դարձնել իրանց տաճկահայ եղբայրների վրայ։

Եւ «ազատարար կայսրը իւր ուշադրութիւնը դարձրեց տաճկահայերի վրայ, պատուիրելով Բալկանեան բանակի ղեկավար մեծ իշխանին Ս. Ստեֆանոյի դաշնագրութեան մէջ 16-րդ յայտնի յօդուածը ներմուծելով։

Այդ յօդուածի առթիւ՝ մեծ իշխանին անձամբ անձին խնդրել տւին նաև Ներսէս պատրիարք Վարժապետեանին, միայնգամայն հակառակ իւր կամքին, գրեթէ բռնազբօսիկ կերպով, նրան Ս. Ստեֆանօ ուղարկելով։

Կարծեօք իւր հէնց այս տատանւող վարմունքի համար էր, որ «Մշակը» Ներսէս պատրիարքին «դաւաճան» անւանեց։

Բայց մենք դառնանք Ս. Ստեֆանօյի դաշնագրութեան 16-րդ յօդուածին։

ԻԶ

Ս. Ստեֆանօյի դաշնագրութեան 16-րդ պարբերութեամբ, ինչպէս յայտնի է, Օսմանեան Կառավարութիւնը պարտաւորւում էր ռուսաց զօրքը Անատօլիայից դուրս գալուց յետոյ՝ այնտեղ ռեֆօրմներ մտցնել Ռուս կառավարութեան հսկողութեան ներքոյ։

Այս նշանակում էր, որ Փոքր Ասիայի հայերը

Digitized by Google

տաճկաստանին հպատակ մնալով հանդերձ՝ միեւնոյն ժամանակ Ռուսաստանի հովանաւորութեան տակն էին մտցնում ի պաշտօնէ։

Այս դրութիւնը, ինքնըստինքեան, շատ էլ նախանձելի դրութիւն չէ, նա մանաւանդ երբ յայտնի է, որ թէ տիրապետող և թէ հովանաւորող տէրութիւններից. ոչ մէկի էլ հոգսը՝ իսկապէս հայերը չէին, այլ իրանց առանձին առանձին իրերահակառակ շահերը, փորացաւերը։

ԻԵ

Ռուսաստանի փորացաւը, սկզբից ի վեր, միշտ այն է եղել, որ կարողանայ այս կերպ կամ այն կերպ տիրել Փոքր Ասիային։ Բայց որովհետև այդ նպատակին ուղիղ ճանապարհաւ հասնելը՝ չարունակաբար խոչընդոտների էր հանդիպել՝ ոչ այնքան Թոյլ տաճիկ կառավարութեան, որքան խորամանկ Ալբիոնի կողմից, ուստի ռուս դիւանագիտութիւնը այս անգամ իւր գործելու եղանակը փոխեց։

Փոքր Ասիային տիրելու յետին նպատակը՝ նա այս անգամ հայկական ռեֆորմներով կամեցաւ պատրուակել, վարագուրել։

ԻԶ

Եւ արդարև. Ս. Ստեֆանոյի դաշնագիրը ստորագրելուց անմիջապէս յետոյ՝ զաղտնի հրահանգ ուղարկւեցաւ Էրզրում՝ Լազարեան ժեներալին, որ չթոյլ տայ հայերին գաղթելու և ամէն կերպ աշխատի, որ հայ ժողովուրդը այս անգամ տեղից չըշարժ գայ։ Եւ Լազարեանը իրան ուղղւած պատւէրը ճշտութեամբ կատարեց։

Digitized by Google

Ո՞վ չի յիշում Ղարաբաղի այդ սէգ հերոսի յայտնի սրտառուչ կոչը, որով ռուս բանակի հրամանատարը, (Լազարեանը) յորդորում և խրատում էր Անատոլիայի հայերին՝ չթողնել իրանց հայրենի օջախը, իրանց պապերի ու հայրերի շիրիմները, իրանց եկեղեցիները՛ և այլն և այլն։

Դարձեալ՝ ով չէ մտաբերում այն ներբողները, որ յիշեալ կոչի առթիւ «Մշակ»-ը,—միշտ և հանապազ փայլերի և լոյսի վրայ նետուող այդ գրական թիթեռնիկը,—շռայլում էր ժենեռալ Լազարեանի **ճայասիրութեանը, ազգասիրութեանը։**

Մինչդեռ հարցը շատ պարզ էր։ Լազարեանին՝ իբրև մի զինուորի հրամայեցին թոյլ չտալ հայերին գաղթելու։ Եւ նա թոյլ չտուեց։ Իսկ դրանից մի քանի ամիս առաջ՝ հրամայել էին ժենեռալ Տէր-Ղուկասեանին՝ գաղթեցնել Ալաշկերտի հայերին։ Եւ նա գաղթեցրեց։ Դեռ մի կողմ մնան նախկին գաղթականութիւնները։

Հաստատապէս չեմ կարող ասել՝ Լազարեանի ազգասիրական տեսակէտով թէ՝ հայկական ազգասիրական տեսակէտով, կամ թերևս տաճկական ազգասիրական տեսակէտով էր, որ Ներսէս պատրիարք Վարժապետեանն ևս՝ ձայնակցեց Լազարեանին և զօրեղ աջակցութիւն ցոյց տուեց նրան գաղթականութիւնը խափանելու համար։

ԻԹ

Այսպէս թէ այնպէս պատերազմից յետոյ ռուս դիւանագիտութիւնը տաճկահայերի նկատմամբ թողեց նախկին եղանակը։ Առաջ նա տաճկահայերին

Digitized by Google

գաղթեցնում էր (նորանուաճ երկիրները մշակելու, զարգացնելու համար), այժմ գաղթականութիւն խանգարում է, չէ թոյլ տալիս։

Պատճառ.

Պատճառը նախ և առաջ այն է, որ մշակելու և զարգացնելու նոր երկիր առ այժմ չկայ։ Եւ երկրորդ՝ որ ամենագլխաւորն է՝ տաճկահայերը պէտք է իրանց հայրենիքում մնան, որպէս զի կարելի լինի նրանց համար ռեֆօրմներ պահանջել տաճիկ կառավարութիւնից։

Քրիստոնեայ տարրից իսպառ դատարկուած մի երկրի համար՝ ինչ առիթ գտնել և ռեֆօրմ պահանջել։ Եւ ում համար պահանջել։ Ո՛չ, տաճկահայերը թող այս անգամ տեղերիցը չշարժուէին, դիւանագիտութեան համար անհրաժեշտ է։

Միտքս պարզեմ։

Լ

Մենք տեսանք, որ վերջին արևելեան պատերազմին ձեռնարկելուց առաջ ռուս դիւանագիտութիւնը շատ աշխատեցաւ՝ տաճկահայ տարրին եւս ոտքի հանելու, Տաճիկ տիրապետութեան դէմ նրան ապստամբեցնելու։

Սակայն դիւանագիտութիւնը յաջողութիւն չըգտաւ։ Ոչ մի արդիւնք չարտադրեցին նմանապէս «Մշակ»-ի այն ամեն թմբկահարութիւններն ու գրգռուչութիւնները, որ պատերազմի տևողութեան ժամանակ շարունակ անում էր այդ թերթը, երբ թէ՝ տաճկահայերը արդէն ոտքի են կանգնել, երբ թէ՝ Վանայ բերդի վրայ ուժեղ յարձակումներ են գործել, երբ

Digitized by Google

թէ՝ յարձակւող հայ կտրիճներից 70 և աւելի զոհեր են եղել և այլ այսպիսի առասպելներ ու զառանցանքներ, որոնք,—կրկնում ենք,—այնուամենայնիւ չկարողացան հայերի մէջ խլրտիւն առաջ բերել Կովկասում կամ Տաճկաստանում։

ԼԱ

Սակայն դրանով դիւանագիտութիւնը չվհատեցաւ։ Այլ խլրտիւնների առաջացնելը թողեց ապագային, մինչև պատերազմի վերջանալուն։ Եւ արդարև հէնց որ պատերազմը վերջացաւ՝ Ս. Ստեֆանօյի դաշնագրում յօդուած տաճկահայերին իբր թէ՝ դուրս եկաւ 16-րդ պարբերութիւնը, որով ռեֆօրմներ պահանջելու և նրանց իրագործման վրայ հսկելու իրաւունքը ձեռք բերեց, կորզեց ռուս կառավարութիւնը՝ իւր զօրքի ոտքերի տակ տապալուած հակառակորդից։

Իրաւունք ձեռք բերելով հանդերձ՝ ռուս կառավարութիւնը շատ լաւ իմանում էր, որ Բարձր Դուռը յօժարակամ ռեֆօրմներ չի մտցնել։ Գիտէր և այն, որ տաճիկ կառավարութիւնից՝ լոկ պահանջ անելուցն ևս՝ բան չի դուրս գալու։ Այլ հարկաւոր է գործնական միջոցների դիմելը։

ԼԲ

Միջոցներից ամենալաւը համարուեցաւ Փոքր Ասիայի հայերի մէջ խլրտիւն առաջացնել՝ Կովկասի հայերի միջոցաւ։ Ուստի և որոշուեցաւ ռուսահայերից կամաւորների խմբեր կազմակերպելով՝ ուղարկել Տաճկահայաստան։ Եւ ահա Թիֆլիզում և գաւառական յայտնի քաղաքներում սնկի պէս սկսան բանել

Digitized by Google

հայկական կենտրոնական և գաւառական կոմիտէտները։ Դրանք փոքր և մեծ կամաւորների խմբեր կազմեցին, զինեցին և սահմանն անցկացրին։ Իսկ սահմանապահ զօրքերը գաղտնի հրահանգ ստացան՝ կազմ և պատրաստ լինել և անմիջապէս սահման անցնել, հէնց որ այն կողմում խլրտումն ծագի և սուր կերպարանք ստանայ։

ԼԳ

Կենտրոնական կոմիտէտի հոգին, ղեկավարը ժենեռալ Տէր-Աստուածատրեանը և Գրիգոր Արծրունին էին։—Իսկ գաւառական կոմիտէտները ղեկավարւում էին զանազան երիտասարդների ձեռքով, որոնցից շատերը ցարդ կենդանի են և գործում են «Դաշնակցութեան» գործիչների շարքում թէ մեր կողմերում և թէ արտասահմանում։ Յիշեալ երիտասարդների շարքումն է եղել և այս տողերի գրողը*)։

Մեր այժմեան, այսպէս ասած, պաշտօնական «Դաշնակցութիւնը»,—ինչպէս յետոյ կը տեսնենք,—կազմակերպւել է ուշ, 1900 թուականին, բայց նրա հիմքը դրուած է, նա անպաշտօն կերպով կազմուած Ս. Ստեփանօյի դաշնագրի ստորագրւելուց անմիջապէս յետոյ։

Եւ կազմուած, հիմնաւորուած է Կովկասեան իշխանութեան գաղտնի թելադրութեամբ, նրա անպաշտօն աջակցութեամբ։

ԼԴ

Այս ասելով՝ մեր միտքն անգամ չի անցկենում

*) Տես «Լումայ» № 4 –1906. «Յիշողութիւններ» յօդ.

Digitized by Google

որ և է ստուեր ձգել մեր հին և նոր գործիչների յիշատակի և անուան վրայ։—Ո՛չ, քաւ լիցի։ մենք գիտենք, քաջ համոզուած ենք, որ նրանք ամենքն էլ ոգեւորուած են եղել և հիմայ էլ ոգևորւում են ազնիւ զգացմունքներով։ Նրանք գործել են, նրանք զոհուել են իրանց տաճկահայ եղբայրներին օգնելու սուրբ գաղափարով։

Այս ճիշտ է, ինչպէս 2 անգամ 2 անում է 4։ Բայց ճիշտ է և այդ ամէն գործունէութիւնը, այդ ամէն բարոյական և անձնական-նիւթական շահաբերութիւնը՝ կատարուած է յօգուտ և 'ի շահ ռուս քաղաքականութեանը և եթ։

Այս ճակատագրական երևոյթը 200 տարուց 'ի վեր ծանրացել է մեզ վրայ։ Եւ դեռ շարունակում է ծանրանալ։

Դառնանք հարցին։

Լե

Անգլիան շատ լաւ հասկանում էր, թէ ինչ նպատակաւ ռուսական դիւանագիտութիւնը Ս. Ստեֆանօյի դաշնագրի մէջ ռեֆօրմների պահանջ դրեց տաճկահայերի օգտին և ռեֆօրմների վրայ հսկելու իրաւունք ձեռք բերեց։

Ուստի և Լայարդը,—Կ.-Պօլսոյ անգլիական դեսպանը,—անմիջապէս ձեռնարկեց 16-րդ յօդուածի չեզոքացմանը ռուսական ազդեցութիւնից։

Դեսպանը նախապէս Սուլթանի հետ տեսակցելով և նրա հաճութիւնը ստանալով՝ հրապարակ հանեց հայ պատւիրակների Եւրոպա ուղղևորւելու և Բեռլինի վեհաժողովին ներկայանալու հարցը։

Ինչպէս յայտնի է՝ պատւիրակներն էին՝ Մկրտիչ

Digitized by Google

եպիսկոպոս (այժմեան Վեհափառ Կաթուղիկոսը), Խորէն եպիսկոպոս Նարպէյ, Մինաս Չերազ և Փափազեան։

ԼԶ

Կ.-Պոլսոյ հայ ժողովրդին այնպէս էին հասկացրել, իբրև թէ պատւիրակութիւնը Եւրոպա գնաց Բարձրագոյն Դռնից ծածուկ և իբրև թէ՝ պատւիրակութեան ու պատրիարքի՝—Ներսէս Վարժապետեանի մէջ տեղի ունեցած բանակցութիւնները՝ կատարւում են Բարձրագոյն Դռնից ծածուկ։—Մինչդեռ պատւիրակների ամեն մի քայլափոխը, նրանց տեսակցութիւններն ու խօսակցութիւնները եւրոպական քաղաքագէտների հետ, մասնաւորապէս Նարպէյի խօսակցութիւնը Պետերբուրգում իշխան Գորչակօվ կանցլերի հետ և նրանց ուղարկած ու ստացած, նոյն իսկ ծածկագիր, հեռագիրների բովանդակութիւնը՝ աւելի ճիշտ և աւելի մանրամասն կերպով անգլիական դեսպանին և Բ. Դռանն էին յայտնի՝ քան Հայոց պատրիարքին և հայ ժողովրդին։

Վերջիններս մի տեսակ մանեքէնի պաշտօն էին կատարում Անգլիայի և Բ. Դռան համար։

ԼԷ

Մասնաւոր շրջաններում էլ, լրագրութիւնում էլ շատ անգամ խօսւած ու գրւած է, թէ հայկական հարցը փչացնողը Անգլիան է եղել. թէ՝ եթէ որ 16-րդ յօդւածը Բերլինում չյեղաշրջւէր՝ Ռուսաստանը վաղուց ռեֆորմներ մտցրած կը լինէր Տաճկահայաստանում։—Մասնաւորապէս «Մշակը» այս կէտը շատ է շօշափել ու պաշտպանել ոչ միայն Գրիգոր

Digitized by Google

Արծրունու, այլ նա և այժմեան խմբագրի—պ. Քալանթարի օրով։

'Ի հարկէ ամեն ոք ազատ է իւր կարծիքն ունենալ և նրան պաշտպանել։ Բայց պնդել թէ Ռուսաստանը ռեֆորմների հարցը բարձրացրեց ռեֆորմների համար և յատկապէս տաճկահայերի օգտին՝ նշանակում է իսպառ անտեղեակ լինել ռուսական քաղաքականութեան ոգւոյն ընդհանրապէս և մեր ազգի վերջին երկու դարերի պատմութեանը մասնաւորապէս։

ԼԸ

Երբ Անգլիան հայ պատուիրականութիւն էր ուղարկել տալիս Բերլին՝ նպատակը ռեֆորմների գործը փչացնելը չէր, այլ ռուսաց ազդեցութեան ջնջելն էր (և այդպէս էլ եղաւ) գէթ դաշնագրով։ Եւ երբ որ Աբդիւլ Համիդ Սուլթանը Լայարդի խորհրդին համակերպում էր՝ իրան մտքումն այն ունէր թէ՝ թող առայժմ որսը Ռուսաստանի ճանկից ազատուի, այնուհետև ռեֆորմներ մտցնելն ու չմտցնելը կախուած կը լինի եւրոպական տէրութիւնների մրցակցութիւնից։ Իսկ եւրոպական մրցակցութիւնից օգտուելու, նրանից մեծապէս շահուելու մէջ՝ Օսմանեան խորամանկ դահակալը հօ խամ չէ՞ր։

Գալով Ռուսաստանին՝ եթէ նրա էլ նպատակը Տաճկահայաստանը չէր, այլ տաճկահայերը,—նա միշտ կարող էր յօգուտ վերջիններիս ռեֆորմներ պահանջել՝ նոյն իսկ Բերլինի դաշնագրութիւնից յետոյ՝ իբրև մինը նոյն դաշնագրին ստորագրողներից։

Ընդհակառակը՝ փաստեր կան, որ Ռուսաստանը

քանիցս անգամ հակառակեցաւ Տաճկահայաստանում ըեֆօրմներ մտցնելուն։ Ռուսաստանը մինչև անգամ հանդիսաւոր կերպով իւր արտաքին գործոց նախարարի բերանով հրատարակեց 'ի լուր աշխարհի թէ՛ «իրան հարկաւոր է Տաճկահաստանը, միայն թէ առանց հայերի»,

ԼԹ

Լաբանօվ—Ռաստօվսկու վերջին բառերն շատ և շատ նշանակալից են։—Եւ ցոյց են տալիս, ուղղակի մատնում են Սասնոյ և առհասարակ տաճկական միւս հայաբնակ վայրերի, նոյն իսկ Պօլսոյ հայերի համար արեան բաղանիքներ սարքողին,—Եւ, յիրաւի, այն օրից երբ Սան Ստեֆանօյի դաշնագրի 16-րդ յօդուածը Բերլինում 61-ի փոխարկւեց, այսինքն՝ երբ հայկական հարցը՝ ռուսական հարցի փոխանակ՝ միջազգային հարց դարձաւ,—հէնց այն օրից 'ի վեր ռուսաց քաղաքականութիւնը դէպի մեզ՝ հայերս բոլորովին փոխւեցաւ։ Եւ հրապարակ հանւեցաւ հայերիս ջնջման ծրագիրը։ Այդ ծրագրի փազերին հետ մենք հետզհետէ կը ծանօթանանք այսուհետեւ։

Խ

Ս. Գրքում մի այսպիսի ասացւած կայ թէ՝ «դեւք միմեանց հակառակ են, բայց 'ի կորուստ մարդկանց միաբանին»։

Դարերից ի վեր միմեանց թշնամանող, միմեանց հալածող, միմեանց համար գուբ և հոր փորող ռուս և տաճիկ դիւանագէտները, Բերլինի վեհաժողովից յետոյ, յանկարծ միացան, մտերմացան... մի բուռ հայութիւնը բնաջինջ անելու համար։

Digitized by Google

Պատճառ։

Պատճառներ կային։

ԽԱ

Ռուս կառավարութեան պատճառը այս էր, որ ա) հայերը և նրանց կաթուղիկոս Մատթէոսը՝ ռուս և հայ եկեղեցիների միացման գործը խանգարել էին. բ) Ալի փաշայի տուած «Ազգային Սահմանադրութիւնը» սիրով ընդգրկելով՝ ապագայ Լորիս-Մելիքովների և Ջալալեանների ապագայ և գաղտագողի ձեռնարկութիւնների հանդէպ պատնէշ էին քաշել տուել. գ) վերջին արևելեան պատերազմի նախընթաց օրերում՝ ռուս դիւանագիտութեան յայտնի և գաղտնի հրաւէրների հանդէպ խուլ և համր էին ձևացել, մինչև իսկ եղջիւր ցոյց տուել, և վերջապէս դ) պատերազմից յետոյ՝ անգլիական դեսպանի խորհրդին անսալով և վեհաժողովին հայ պատուիրականութիւն ուղարկելով՝ ռուս քաղաքականութեան ունեցած ծրագիրը Տաճկահայաստանի վերաբերութեամբ՝ յեղաշրջելու քարուքանդ լինելու առիթ էին տուել Բեռլինում։

ԽԲ

Ամբողջ երկու հարիւր տարի, մերթ գիտակցօրէն, մերթ անգիտակցօրէն, ռուսաց շահերին ծառայող մի ժողովուրդ՝ այժմ անհաւատարմութեան նշաններ է ցոյց տալիս և նախկին, սովորական վստահութեամբն ու հլութեամբը չէ գալիս և մեր գիրկը չէ ընկնում,—ուստի թող կորչի նա, այդ ժողովուրդը, որ ինձ թողած Անգլիայի խորհրդին ու օգնութեանն է դիմում։

Digitized by Google

Այդ դիմումը այդ ժողովուրդը ինքնուրոյնաբար, գիտակցաբար է անում թէ՝ այլոց թելադրութեամբ և առանց գիտակցութեան ու խոր կշռադատութեան,— դա միևնոյն է ինձ համար։

Այսպէս էր խորհում և ինքն իրան ասում ռուս կառավարութիւնը՝ երբ իւր բարեկամական ձեռքն էր մեկնում դէպ 'ի տաճիկ կառավարութիւնը.

ԽԳ

Վերջինիս համար ռուսաց առաջարկութիւնը մի կատարեալ երկնային մանանայ էր։ Ուստի և Կարմիր Սուլթանը ապաճարանօք բռնեց այդ բարեկամական ձեռքը և պինդ սեղմեց՝ միևնոյն ժամանակ՝ մեկնողի փոփոխամտութեան, միամտութեան վրայ մտքումը պինդ ծիծաղելով։

Հայութեան ջնջումը՝ օսմանցիների համար՝ համահաւասար էր ռուսաց և նրանց դարաւոր քաղաքականութեան ջնջմանը՝ նրա վրայ խաչ քաշելուն Փոքր Ասիայում։ Որովհետև հայերը ռուսաց քրիստոնեայ լինելուցը հրապուրւելով ու խրախուսւելով մի կատարեալ գործիք էին դարձել նրանց ձեռքին։ Նրանք նրանց լրտեսներին ու տօպօգրաֆներին շարունակ և անարգել պտտացնում էին Փոքր Ասիայի այս և այն մասում նախ քան պատերազմների հրատարակումը։ Իսկ պատերազմների ժամանակ՝ ռուս բանակներին ուղղակի առաջնորդ և ուղեցոյց էին լինում, կրօնական հանդէսներով նրանց դիմաւորում, նրանց առատ պաշար մատակարարում և այլն. և իրանց ստրուկ և ռայա տեղով՝ յանկարծ միջազգային ժողովների և դաշնագրերի մէջ ևս՝ ձայն ու տեղ են

Digitized by Google

տանում ու դրաւում։ Եւ ո՛վ է իմանում, թէ նրանց երեսից և նրանց անունից դեռ ինչ տեսակ խաղեր են խաղալու մեր,—տաճիկներիս, գլխին ընչաքաղց եւրոպացիք։

ԽԴ

Հինգ հարիւր տարի լուռ ու մունջ, խաղաղ, գլխակոր, հլու՝ և հաւատարիմ կերպով ծառայելուց յետոյ՝ յանկարծ՝ այսքան և այսպիսի փոփոխութիւն,—ոչ, այլ ևս մեզ պէտք չէ այդ ժողովուրդը, թող ուրեմն, կորչի,

Նա մանաւանդ որ դրա կորստեան, ոչնչման գործում՝ միայնակը և պատասխանատուն միայն ես չեմ, այլ և դրանց երէկւայ և նախընթաց օրւայ պաշտպանը,—Ռուսաստանը։

Այսպէս էր խորհում և ինքն իրան ասում տաճիկ կառավարութիւնը՝ երբ համակերպում էր ռուս կառավարութեան ծրագրին։

Կաթնատու կովը՝ երբ իւր տիրոջը այլևս կաթ չէ տալիս և մինչև անգամ կթողին քացի է տալիս,—տիրոջ համար ուրիշ ոչինչ չէ մնում անել, եթէ ոչ մորթել այդ կովը։

Եւ ռուս ու տաճիկ քաղաքագէտները իրանց դանակները սրելով ընկան այդ **հայվան** հայի ջանին և ձեռնարկեցին նրա մորթոտմանը։

ԽԵ

Ո՛չ Մատթէոս և ոչ էլ Գէորգ կաթուղիկոսները չարդարացրին՝ ռուս կառավարութեան իրանց վրայ դրած **քաղաքական յոյսերը**։

Digitized by Google

Այդ դեռ բաւական չէր։

Նրանք ռուսատեցութեան ակնյայտնի ապացոյցներ ցոյց տւին՝ շատ անգամ արհամարհելով պօլօժենիան և կառավարութեան երբեմնական մանաւոր հրահանգները, որոնք հակառակ էին հայ ժողովրդական եկեղեցւոյ ոգւոյն և շահերին,

Դարձեալ՝ այդ երկու կաթուղիկոսները՝ իրանց հիմնած դպրոցներով. ու ճեմարանով ռուսահայերի մէջ՝ նրանց մայրենի լեզւին ու գրականութեան ծաղկմանն ու զարգացմանը զգալի զարկ տւին։

Վերջին հանգամանքը մանաւանդ՝ կառավարութեան աչքում շատ վտանգաւոր թւաց։ Ուստի իւր զայրոյթը նա ամենից առաջ դրանց վրայ թափել փորձեց։

ԽԶ

Ինչպէս միշտ, այս անգամ էլ «Մշակը» հաւատարիմ մնալով իւր դերին, չարաչար յարձակումներ սկսեց գործել հայ դպրոցների վրայ, որոնք, 'ի հարկէ, թերութիւններ, պակասութիւններ ունէին, բայց երբէք արժանի չէին այն բուռն կատաղի և անզուսպ հայհոյութիւններին, որոցմով «Մշակը» վարկաբեկ անում, կոտրում էր այդ դպրոցները հայ ժողովրդի աչքում։

«Մշակը» բաւն այնտեղ հասցրեց, որ պահանջում էր թէ՝ հայոց եկեղեցական ծխական դպրոցների դռները բաց պէտք է լինի ոչ միայն այլակրօն հայերի,—կաթոլիկների, լիւտերականների և մու-

սուլմաններին,— այլ նաև ամեն մի այլազգիի,—թուրքի, ռուսի, քրդի․ վրացու, առաջ*)։

Արծրունու այս միտքը՝ այն ժամանակուայ հայ երիտասարդութիւնը հայ ազատամտութեան թագն ու պսակն էր համարում։ Իսկ կառավարութիւնը այդ մտքի վրայ՝ իւր կազմած մօտակայ ձուլման ծրագրի հիմքն էր կառուցանում։

Ինչ և իցէ։

ԽԷ

Վերևում յիշեցինք, որ Մատթէոս և Գէորգ կաթուղիկոսներից կառավարութիւնը խէր չտեսաւ։

Ժամանակները փոխուել էին։ Փոխուել էին և մարդկանց գաղափարները։ Ժողովրդեան աչքում հոգևորականութիւնը իւր նախկին հմայքը այլ ևս չունէր։ Այնպէս որ այն ահագին ծառայութիւնները, որ կառավարութեանը մատուցել էին Յովսէփ Երկայնաբազուկ, Ներսէս Աշտարակեցի և Աղուանից մի քանի կաթուղիկոսները․—այդպիսի ծառայութիւնները այլ ևս չէին կարող մատուցանել ոչ Մատթէոսը և ոչ էլ Գէորգը, եթէ նոյն իսկ շատ էլ ցանկանային։

Միւս կողմից՝ տէրութեան սահմանները շատ ա-

---

*) Այդ կողմից «Մշակը» և նրա ղեկավարները անհամեմատ աւելի յառաջադէմ էին, քան մեր այժմեան «Ալիք—Զանգակն» և նրանց ղեկավարները, որոնք Էջմիածնի կենդր․ ժողովում, ինչպէս յայտնի է, որոշեցին հայ դպրոցների դռները բանալ միմիայն այլադաւան հայերի առաջ՝ միմիայն և ոչ թէ նաև այլազգիների։—Միւս կողմից՝ ժամանակակից ազատամիտ հայ երիտասարդութիւնը՝ իւր նախորդից նրանով գերազանցեց, որ որոշեց թէ՝ հայ եկեղեցական կալուածքից պէտք է անխտիր օգտուին և թուրքերը, և քրդերը, և արաբները։

Digitized by Google

ռաջ էին գնացել՝ հիւպատոսների և քաղաքական ագենտների համար նորանոր տեղեր և ասպարէզներ էին բացել։ Այնպէս որ մի Հայ Կամսարական հիւպատոս, օրինակի համար, Վանում՝ և նրա շրջակայքում կառավարութեան օգտին աւելի շատ բան կարող էր անել, քան Էջմիածնում նստած մի կաթողիկոս։

ԽԸ

Կաթողիկոսը անհրաժեշտ էր, որպէսզի նրա կոնդակով, նրա այս կամ այն կերպի ու եղանակի ազդեցութեամբ՝ տաճկահայ ժողովուրդը, հարկաւոր դէպքում, ոտքի կանգնէ և կառավարութեան ածած գուդուկովը պարէ։

Այժմ կաթողիկոսներից ոչ պակաս ազդեցութիւն են գործում ժողովրդի վրայ գրականութիւնը, մամուլը։

Ուրեմն թող մէջտեղից վերանան «սևագլուխները», «փտտած պահպանողականները» «նեխած կղերամիտները» և հրապարակ իջնեն «ազատամիտները», «յառաջադիմականները», «կօսմօպօլիտները», — թող գան և գործեն հրապարակախօս «Մշակ»-ներն ու „Խենթ“—„Կայծեր“ շարադրող վիպասաններն։ Եւս և՝ դրանց երկնած ու ծնած կենդրոնական և գաւառական կոմիտետներն ու Տաճկահայաստան ուղևորւող կամաւորների խմբերն։

Որոշւեցաւ՝ Էջմիածնի կաթողիկոսութիւնը՝ ամփոփել և կաթողիկոսին համարելով վանահայր՝ նրա վրայ այսուհետև նայել իբրև ռուսահայերի կրօնական գործերի պետի, ղեկավարի վրայ։

Digitized by Google

Տաճկահայ եպիսկոպոսներից կաթուղիկոս ընտրելու քաղաքականութեան վրայ՝ խաչ քաշել։

ԽԹ.

Դեռ եւս Գէորգ կաթուղիկոսը կենդանի էր, որ բարձրագոյն կարգադրութիւն եղաւ՝ նրա իրաւասութիւնից վերցնել եկեղեցական ծխական դպրոցները և յանձնել լուսաւորութեան նախարարի իրաւասութեանը։

Սակայն Ներսէս պատրիարքի բողոքի վրայ՝ Իգնատիեւ դեսպանը միջամտեց և կայսր Աղէքսանդր II մի նոր հրովարտակով վերականգնեց կաթուղիկոսի իրաւունքը դպրոցների վրայ՝ առնելով 'ի նկատի գլխաւորապէս երեք հանգամանք։

Ծ.

Դրանցից առաջինն այն էր, որ Բալկանեան թերակղզու վրայ քաղաքական հորիզոնը արդէն սկսել էր մթագնել։ Եւ հետզհետէ կուտակւում էին այն ամպերը, որոնք ամենակարճ ժամանակից զկնի, վերջին արևելեան պատերազմով պայթեցան վերջ 'ի վերջոյ։

Երկրորդ հանգամանքը այն էր, որ կաթուղիկոսը ազդարարել և զգուշացրել էր թեմերի Առաջնորդներին, որ նրանք յօժարակամ դպրոցները չըյանձնեն, այլ միմիայն ուժի առաջ տեղի տան։

Այդ այն դժբաղդ օրերն էին, որ հայ մամուլը և մասնաւորապէս ազատամիտ „Մշակ“-ը Զաքարիայի նման պապանձւել էին և միմիայն „կղերական“ „Արարատն“ էր, որ բաց ճակատով կռւում էր կառավարութեան քաղաքականութեան դէմ դպրոցնե

վերաբերութեամբ։ Կռուողների պարագլուխը Մանկունին էր։

Վերջապէս երրորդ հանգամանքն այն էր, որ թէպէտ կառավարութիւնը այլ ևս կորցրել է իւր հաւատը Գէորգ Դ.-ի վրայ, բայց և այնպէս յոյս ունէր, որ գուցէ կարելի լինի այս կամ այն կերպ, մի օր, շուռ տալ, գրաւել այդ „փառասէր“ կաթուղիկոսին, թէ որ... Մանկունի եպիսկոպոսը Էջմիածնից հեռանայ։

ԾԱ

Փոխարքայ մեծ իշխանը այդ մասին, մի օր, Էջմիածնի վեհարանում նախաճաշիկի վրայ՝ անձամբ յայտնեց կաթուղիկոսին իւր դժգոհութիւնը առ այն, որ չնայած իրան՝ փոխարքային քանիցս անգամ արած առաջարկութեանը՝ նորին սրբութիւնը շարունակում է պահել ս. Էջմիածնում Մանկունի եպիսկոպոսին։

Գէորգ Դ., իւր հերթում, իւր դժգոհութիւնը յայտնեց փոխարքային՝ կառավարութեան բռնած դիրքի վերաբերմամբ դէպ 'ի ինքը, որին կառավարութիւնը ուզում է զրկել նաև՝ իրան փոքրաւորը՝ ծառան ընտրելու իրաւունքից.

'Ի վերայ այսր ամենայնի՝ Մանկունին ստիպուած եղաւ Էջմիածնից հեռանալ, որպէս զի „գնդակահար չլինի“, ինչպէս որ պատերազմի տարին սպառնացած էր փոխարքան իւր վերջին ազդարարութիւնը Թիֆլիզից Էջմիածին անելիս։

ԾԲ

Մանկունու հեռանալուց յետոյ՝ անմիջապէս կար-

դադրութիւն եղաւ՝ այդ եպիսկոպոսի վերստին մուտքը Ռուսաստան արգելելը։

Սակայն որքան մեծ եղաւ Ստարոսելսկու (որ Կովկ. գլխաւոր կառավ. մեծաւորն էր) զարմանքն ու զայրոյթը, երբ պատերազմը վերջանալուց յետոյ Մանկունին յանկարծ Էջմիածնում բուսաւ էլի։

Կարծես Հայրենիքը վտանգի մէջ լինէր. սկսուեցան բանակցութիւններ, ծածկագրեր, դեսպանատների և մաքսապետների մէջ իրարանցում.

Վերջ 'ի վերջոյ՝ Կովկասի մեծ բիւրօկրատի առաջ՝ Պօլսոյ դեսպանատան և Փօթիի մաքսատան փոքր բիւրօկրատները նրանով արդարացան, որ իրանք բաց են թողել ոչ թէ Մանկունի եպիսկոպոսին, այլ Վահրամ եպիսկոպոսին։

Անեկդօտային բնաւորութիւն կրող այս հաստատ իրողութիւնը՝ ամենալաւ ապացոյց է ռուս բիւրօկրատիայի խելքի և իմաստութեան չափին,

Անցնենք խնդրոյն.

ԾԳ

Գէորգ Դ. մինչև իւր վերջին շունչը հաւատարիմ մնաց իւր հայեացքներին։

Նրա մահուանից յետոյ՝ արդէն մեր դպրոցների բաղդը վերջնականապէս պէտք է վճռուէր։

Կամ պէտք է փակուէին նրանք և կամ կառավարութեանը յանձնուէին։

Բանակցութիւններ սկսուեցին կառավարութեան և Էջմիածնի Սինօդի մէջ։

Կովկասեան ուսումն. Շրջանի Հոգաբարձու Եանովսկին իւր բոլոր հանճարը գործ դրեց յափշտակ-

Digitized by Google

ման քաղաքականութիւնը՝ իրական հողի վրայ դնելու։ Մանկավարժական ասպարէզում Գորչակովի հոգւոյն ու ուղղութեամբը ընթացող այդ բիւրօկրա-տը մինչև իսկ չխնայեց զրպարտութիւն, չար ձգել Էջմիածնի վրայ։

Սակայն նոյն „կղերական“ „Արարատը“ քաղա-քացիական քաջութիւն ունեցաւ (երբ աշխարհիկ հայ մամուլը դարձեալ պապանձւել էր) պաշտօնական փաստերով ջախջախել Եանովսկու զրպարտութիւն-ները։

Կառավարութեան և Սինօդի մէջ եղած բանակ-ցութեան հետևանքն այն եղաւ, որ Մայր Աթոռի միաբանութիւնը՝ տեղապահ Բաբամեան Մկրտիչ ե-պիսկոպոսի նախագահութեամբ՝ չընդունեց կառավա-րութեան առաջարկը և... դպրոցները փակւեցան։

ԾԴ

Այնուհետև փոխարքայի պալատում „իշխանք ժողովեցան 'ի միասին“ պատժելու և պատուհասա-կոծ անելու Էջմիածնի „ըմբոստ“, „բունտովշչիկ“ միաբանութիւնը։

Այդ ժողովում մի անգամ ևս երևաց, որ ամ-բողջ հայութիւնը իւր մասին փաթաթան անել ձըգ-տող ռուս բիւրօկրատիան, ոչ միայն Վահրամ և Մանկունին մի և նոյն անձը լինելը չէ իմանում, այլ և այն էլ չէ իմանում, որ հայ կուսակրօնութիւնը իւր աղքատիկ գոյութիւնը պահում է իւր աղքատիկ ժողովրդի լումաներով, այլ ոչ թէ արքունի գանձա-րանից իբր ստացւած ռոճիկներով,

Եթէ այդ ժողովի մէջ հայ պաշտօնեայ,—կար-

Digitized by Google

ծեմ Ամբարդանով,—չլինէր, թերևս «իշխաններից» ժողովը, համակերպելով Եանովսկու արած մեծ գիւտին, միայն վճռէր „հայ կուսակրօն հոգևորականութիւնը զրկել ռոճիկներից“։

Դպրոցները մօրթելուց յետոյ՝ կառավարութիւնը իւր դանակի բերանը շուռ տուեց դէպ 'ի կաթուղիկոսութիւնը:

ԾԵ

Գէորգ Դ-ին յաջորդացու ընտրող ժողովի նախագահը,—տեղապահ Մակար Արքեպիսկոպոսը.— իւր ճառի մէջ բաւականին պարզ կերպով հասկացրեց պատւիրակներին կառավարութեան որոշումը կաթուղիկոսութեան մասին։

—«Եթէ ուզում էք,—մօտաւորապէս այս էր ասում տեղապահը,—որ ազգի կաթուղիկոսը միմիայն ռուսահայերիս ներքին՝ եկեղեցական գործերին նուիրէ իրան,—ընտրեցէք այս եպիսկոպոսներից (ցոյց տալով ռուսահայ եպիսկոպոսներին), որին որ ուզում էք։ Նրա մասին ես երաշխաւորում եմ ձեզ։ Իսկ եթէ ուզում էք, որ ձեր ընտրելին ամբողջ հայ ազգի կաթուղիկոսը լինի և ողջ ազգի հոգսերին նուիրուի,— ապաքէն ընտրեցէք այն հոյակապ անձին, որ եւրոպական պետութիւնների դռները բաղխեց և մեր ազգի մեծամասնութիւնը կազմող մեր տաճկահայ եղբայրներին համար՝ իրաւունք և արդարութիւն հայցեց։ Ընտրեցէք սրբազան Ներսէս պատրիարքին»։

Եւ Ներսէսը ընտրւեցաւ։ Բայց նա դարձեալ հրաժարւեցաւ, ինչպէս որ ընտրութիւնից առաջ էլ հրաժարւած էր։

Digitized by Google

ԾԶ

Ներսէսի ընտրութեան հետեւանքն այն եղաւ, որ Մայր Աթոռի գահը՝ մի տարի եւս թափուր մնաց եւ նրա,—Ներսէսի,—մահը աւելի շուտ տեղի ունեցաւ, քան թէ սպասւում էր։

Ահա թէ ինչու։

«Մշակ»-ի խմբագրին պատկանեալ՝ Թիֆլիզի յայտնի Արծրունու քարվանսարայի վրայ՝ մեծաքանակ պարտք կար դիզւած։

Գրիգոր Արծրունին ոչ մի հնար չէր գտնում պարտքը թափելու։

Հէնց որ Ներսէս պատրիարքին կաթուղիկոս ընտրեցին՝ կարծեօք Համբարձում Առաքելեանի ստորագրութեամբ՝ «Մշակ»-ը մի քանի յօդւածներ բաց թողեց, որոցմով հրաւիրում էր ռուսահայերին իւր քարվանսարայը 600,000 ռուբլիով գնել եւ յանուն նորընտիր կաթուղիկոսին՝ ս. Էջմիածնին նուիրել։

Այս առաջարկը, որ ինքն ըստ ինքեան մի անմեղ եւ խելացի առաջարկ էր, հայութեան դէմ զինւած քաղաքագիտութիւնը ուրիշ կերպ մեկնեց։ Մինչեւ իսկ այդ առաջարկութիւնում խորամանկ Ալբիոնի մատը տեսան դիւանագիտութեան խիկարները։

Շաքարի լուրջ հիւանդութեամբ տառապող Ներսէս պատրիարքը՝ կայսերական պալատ հրաւիրեցաւ՝ իւր անունով իբրեւ թէ արդէն Թիֆլիզում հանգանակւած 600,000 ռուբլու գործադրութեան մասին՝ բացատրութիւն տալու։

Փատիշահի խիստ նկատողութեանը՝ Ներսէս թէպէտ եւ վայելուչ պատասխան տւեց, սակայն դառ-

Digitized by Google

նալով պատրիարքարան՝ անկողին մտաւ և... այլ ևս չվերկացաւ։

ԾԷ

Ներսէսի հրաժարականն ու մահը՝ որքան որ վիշտ պատճառեցին հայութեան սրտին, թէ՛ տաճիկ և թէ՛ ռուս կառավարութիւններին, ընդհակառակը, շատ ուրախացրին։

Եւ թէպէտ երկու իսկ կառավարութիւններն ևս՝ Ներսէսից ոչ մի առանձին երկիւղ չունէին, բայց և այնպէս շատ անախորժ բան կը լինէր՝ ողջ Եւրոպային յայտնի եղող, նրանց դեսպաններին այցելող և նրանց այցելութիւնները ընդունող պատրիարքին էջմիածին բերել և 'իբրև ամենայն Հայոց կաթուղիկոս, ենթարկել Սինոդի պրօկուրօրի և Էջմիածնի դաւառապետի ընկերակցութեանը, հսկողութեանը։

Այս առաջինը:

Երկրորդը՝ Ներսէս պատրիարքը խելքը գլխին մարդ էր, խոհեմ, շրջահայեաց, անարծաթասէր։ Նա իւր մեծ ժողովրդականութիւնը ձեռք էր բերել ոչ թէ խաժամուժ ամբոխի աչքերին փոշի շաղ տալով՝ այլ իրական և ուղղամիտ գործունէութեամբ։

Ուրեմն այդպիսի կաթուղիկոսից էլ կառավարութիւնը խեր չէր տեսնել։ Ուր մնաց որ՝ Ներսէս իւր ահագին ժողովրդականութեամբ կարող էր նոր տեսակ գլխացաւանք պատճառել։

ԾԸ

Յայտնի է, որ Ներսէսի հրաժարումից յետոյ կաթուղիկոսութեան առաջին թեկնածու ընտրեցաւ

Digitized by Google

Գարեգին եպիսկոպոս Մուրադեանցը, որ իւր մի քանի յատկութիւններովը՝ մինչև իսկ բարձր էր Ներսէսից։ Ճիշտ է Մուրադեանցի գործունէութիւնը Վարժապետեանի գործունէութեան չափ փայլուն չէր, բայց աւելի արդասաւոր էր։

Սակայն կառավարութեան համար՝ ինչ արժէք ունէր Էջմիածնում եղած ընտրութիւնը, երբ ներքին գործոց նախարար Տօլստօյը, տակաւին ամիսներ առաջ, Մուրադեանցի համար ասած էր թէ՝ „ушей его не выдать Эчміадзина“։

Խրիմեանին (այժմեան Վեհափառ կաթուղիկոսին) համակրողների թիւը նոյնպէս բաւականին մեծ էր ռուսահայերիս մէջ։ Եւ նա թեկնածու էր ընտրուած։

Սակայն կառավարութեան համար՝ Խրիմեանը այն ժամանակը ձեռնտու չէր:

Այն ժամանակ կառավարութիւնը որոշել էր, որ Էջմիածնի կաթուղիկոսը ռուսահայ եպիսկոպոսներիցը լինի։ Եւ այդպէս էլ եղաւ՝ յանձին Մակար արքեպիսկոպոսի։

ԾԹ

Մակար արքեպիսկոպոսը առաջինը չէր, որ թէև երկրորդ թեկնածու, այնուամենայնիւ կառավարութիւնից հաստատուեցաւ կաթուղիկոս։

Պօլօժենիայի տրամադրութեամբ ընտրուած և հաստատուած մեր հէնց առաջին կաթողիկոսն եւս, —Յովհաննէս Կարբեցին,—նոյնպէս երկրորդ թեկնածու էր։

Առաջին թեկնածուն, կարծեմ Մարտիրոս ա-

Digitized by Google

նունով եպիսկոպոսն էր, որի բաղդին ենթարկւեց, 50 տարի յետոյ Մուրադեան Գարեգին եպիսկոպոսը։

Կ

Եթէ ուրիշ փաստեր չլինէին՝ հէնց այս մէկն էլ, կարծում ենք, բաւական է մեզ համոզելու, որ ըսկզբից մինչ այսօր՝ ռուս կառավարութիւնը մեր ազգային եկեղեցական գործերին այնպիսի ընթացք է տուել միշտ, ինչպէս որ ինքն է ցանկացել։

Ռուսահայերիս՝ յանձին մեր ներկայացուցիչների, մեր հոգևորական և աշխարհական պատգամաւորների՝ միշտ և հանապազ կաթուղիկոսացու ենք ընտրել այն անձին, որի վրայ նախօրօք կառավարութիւնը իւր մատը դրած է եղել։ Մակարի և իւր նախորդների ընտրութեանը և հաստատման մէջ եղած միակ տարբերութիւնը այն է, որ նախորդներին ընտրելիս մենք կառավարութեան մատը չէինք տեսնում։ Սակաւաթիւ տեսնողներն էլ՝ չտեսնել էին ձևացնում և լռում, լռութիւնը խոհեմութիւն համարելով։

Մինչդեռ Մակարի ընտրութեան ժամանակ՝ կառավարութեան մատը մենք տեսանք։ Եւ չլռեցինք, այլ բողոքեցինք։ Թէպէտ և, վերջ 'ի վերջոյ, մեր բողոքն էլ դարձեալ լռութեամբ վերջացաւ։

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։—Մեծ անմտութիւն է „խթանի դէմ աքացելն“։

ԿԱ

Ռուսահայերի վարմունքը՝ այնքան զարմանալի չէ։ Առաւել զարմանալին այն է, որ այսպիսի հան-

Digitized by Google

դամանքներում ճիշտ մեր օրին են լինում տաճկա-հայ եղբայրները։

Եւ այս ոչ միայն այն ժամանակ, երբ Մայր Աթոռը ռուսաց տիրապետութեան տակն էր գըտնւում, այլ աւելի առաջ, էջմիածինը պարսից իշխանութեան տակ եղած ժամանակ ևս։

Այո, տակաւին այն ժամանակներից սկսած՝ ռուսաց Թամար դեսպաններն Կ.-Պոլսում՝ փոփոխակի երբեմն Դաւթին, երբեմն Դանիէլին էին ընտրել տալիս էջմիածնի կաթուղիկոս։

Եւ ողորմելի հայ ժողովուրդը, թէ Տաճկաստանում և թէ Ռուսաստանում, գէթ մի անգամ գլխի չընկաւ, որ իրան միմեանց դէմ հանողը, իրան միմեանց գլուխ թակել տւողը՝ իսկապէս ոչ մեր Դանիէլներն են և ոչ մեր Դաւիթները, այլ դիւանագիտութեան ճարպիկ ձեռքը։

Եւ հէնց այդ ճարպիկ ձեռքն է, որ մինչև օրս էլ, այո, մինչև այսօր էլ, պարացնում է մեզ մեր ամեն կարգի եւ տեսակի գործիչներով։—Հետզհետէ մենք այդ ցոյց կը տանք մեր ընթերցողներին։

ԿԲ

Որքան էլ որ ռուս և տաճիկ դիւանագիտութիւնը՝ ձեռք ձեռքի տւած՝ որոշել էին հայութիւնը ջնջել՝ նախապէս տաճկահայերից սկսելով, և դրա համար Կովկասեան արիւնկզակ մահմեդականներին, չերքէզներին, խումբ խումբ Փոքր Ասիա էին փոխադրել, այնտեղի հայերին ամեն կողմից քայքայելու նպատակաւ, որքան էլ որ ռուս և տաճիկ իշխանութիւնները՝ միմեանց հետ խօսք* էին կապել՝ որ Բեր-

լինի դաշնագրութեան 61-րդ յօդւածի առթիւ՝ Թոյլ չտան եւրոպացիների միջամտութիւնը, բայց և այնպէս կարող էր պատահել, որ քաղաքական հանգամանքներն ,այնպէս տարւէին, որ, գուցէ, մի այդպիսի միջամտութիւն տեղի ունենար, գուցէ, օրինակի համար, Անգլիան կամենար ու կարողանար,—նոյն իսկ Սուլթանի գաղտնի համաձայնութեամբ,—Նուբար Փաշային ընդհանուր նահանգապետ, կամ գուցէ իշխան կարգել Փոքր Ասիայի հայաբնակ Վիլայէթների վրայ, —այն ժամանակ,

—Այն ժամանակ Սուլթանը նորից իւր Թակարդին մէջ ձգած կը լինէր ռուս քաղաքագէտներին։ Եւ իւր հպատակ հայերին՝ քաղաքական ազատութիւն տալով՝ Աբդիւլ Համիդը՝ բնականաբար ցարի հպատակ հայերին մղած կը լինէր դէպ 'ի շարժում, դէպ 'ի պահանջ ու խլրտումն Կովկասի սահմաններում։

Եւ ով գիտէ, Թէ այդ խլրտումներն ուր և ինչով կը վերջանային։

Այսպիսի հարցեր ու խոհեր ինքնիրան տալիս և անում էր ռուս դիւանագիտութիւնը. իրաւունք էլ ունէր, „у страха глаза велики“.

ԿԴ.

Թարմ և կենդանի փորձերը դեռ աչքի առաջ էին։ Նրանք ցոյց էին տալիս, որ ռուս դիւանագէտների ձեռքով և իրանց համար եփած պատրաստած փլաւի վրայ 'ի վերջոյ ուրիշներն են վրայ Թափում և անուշ անում։—Այսպէս, օրինակ, Լորիս-Մելիքովի ջանքերով տաճկահայերը, յանուն կրօնի, եկեղեցիների միացման, Ռուսաստանի գիրկը պիտի նետւէին։

Բայց նրանք ոչ միայն գիրկ չնետւեցան, այլ նաև «Ազգային սահմանադրութիւն» ստացան 'ի չար օրի-նակ և 'ի գայթակղութիւն ռուսահայերին։

Դարձեալ՝ մեծ իշխան Կոստանդինը՝ Ս. Ստեփա-նոսի դաշնագրի մէջ 16-րդ յօդւածը մոռցրեց, բայց գլխաւորապէս հէնց այդ յօդւածի պատճառաւ՝ Անգ-լիան նախ և առաջ՝ Կիպրոսը կորզեց և երկրորդ՝ Բերլինում Ս. Ստեփանոսի յօդւածի նպատակը յօդս ցնդեցրեց։

Ո՛վ գիտէ, կարող է պատահել, որ նոյն խորա-մանկ Ալբիօնը յաջողի մի նոր թալակ ևս սարքել Ռուսաստանի համար։ Կարող է պատահել, որ մինչև իսկ Օրինների, Արղութեանների, Աշտարակեցիների ե-րազները հրապարակ հանւին։ „чѣмъ чортъ не шу-тить»։

Արդ այս ամենայն հաւանականութիւններին և երևակայութիւններին, մի անգամ ընդ միշտ, վերջ տալու համար՝ ռուս դիւանագիտութիւնը հաստատա-պէս որոշեց **ռուսահայերին ձեռաց ձուլել ռուսնե-րի հետ**։

Իսկ ձուլման գաղափարի իրագործման համար՝ ռուս քաղաքական խիկարները՝ մինչև անցեալ 1905 թւականի հոկտեմբերի 17-ին, ուրիշ ոչ մի եղանակ և միջոց չէին ճանաչում, եթէ ոչ միմիայն կրօնը, ե-կեղեցին։

Փոյթ չէ, եթէ հայ և ռուս եկեղեցիների միաց-ման փորձը մի անգամ գլուխ չեկաւ։ Այդ ձեռ-նարկութիւնը այն ժամանակ շատ մեծ ծաւալով էր կւած, օտարահպատակ հայերն էին գլխաւորապէս նկատի առնւած. այն ժամանակ այդ խնդիրը դրած

Digitized by Google

էր՝ յառաջ գնալու յարձակւելու համար, այժմ յետ քաշւելու, պաշտպանւելու համար է և գլխաւորապէս այժմ մենք գործ ունենք մեր հպատակների հետ, որոց հետ և սուս ու փուս, տանս տանու կերպով մեր գործը կը վերջացնենք։

Այսպիսի «խորհուրդ էր խորհում» ռուս դիւանագիտութիւնը, երբ Մակար արքեպիսկոպոսին կաթուղիկոսացու էր ընտրել տալիս և հաստատում։

ԿԴ

Մակար եպիսկոպոսի «անյուսալիութեան» մասին՝ կառավարութիւնը երեք փաստ ունէր ձեռին։

Առաջինը այն էր, որ երբ նա Ներսէս կաթուղիկոս Աշտարակեցու դիակը տանելու համար՝ ս. Էջմիածնից Թիֆլիզ էր եկել՝ հակառակ փոխարքայ Բարեատինսկու հրամանին՝ նրա կողմից նշանակւած պաշտօնէին չյանձնեց հանգուցեալ կաթուղիկոսի ինչ ինչ նամակներն ու կոնդակների սեւագրութիւններն, այլ կնքելով հետը Էջմիածին տարաւ։

Երկրորդն այն էր, որ Լորիս-Մելիքովի կազմած՝ եկեղեցիների միացման ծրագրին Մակար եպիսկոպոսը ոչ միայն չստորագրեց, այլ որպէս ուխտաւոր Կ.-Պօլսից յանկարծ Երուսաղէմ մեկնեցաւ, այնտեղից էլ, իբրև թոքախտաւոր, Եգիպտոս մեկնեցաւ և այսպէս գլխաւոր առիթ եղաւ տաք տաք ծեծւած երկաթի սառչելուն։

Վերջապէս երրորդ փաստը այն էր, որ ՚ի պատիւ կաթուղիկոսին (Մատթէոսին) տրւած պաշտօնական ճաշի ժամանակ,—կարծեմ Պօղոսբէյ Դադեանի հայազգի մինիստրի տանը,—Մակարը ռուս կառավա-

Digitized by Google

րութիւնից ստացած մի ինչ որ շքանշանը կախած չէր։ —Այո, այս էլ «անյուսալիութեան» նշան էր այն Ե-րանելի ժամանակներումը։

ԿԵ

Բայց այս ամէն «անյուսալիութիւնները» այն ժամանակներն էին տեղի ունեցել, երբ Մակարը մի երիտասարդ վարդապետ էր և, որպէս խելքը գլխին պարտաճանաչ երիտասարդ, բնականաբար, իրան չէր թոյլ տալ, որպէս Էջմիածնի միաբանութեան ներկա-յացուցիչ, ինքնագլուխ հանդուցեալ կաթուղիկոսի թղթերն կառավարչական պաշտօնէին յանձնել, այն էլ մասնաւոր, այլ ոչ պաշտօնական կերպով, թագնա-բար։ Չէր կարող նմանապէս ինքնագլուխ ստորա-գրել այնպիսի լուրջ բովանդակութեան մի թղթի, որ-պիսին եկեղեցիների միացման թուղթն էր։

Այս մի կողմից։

Միւս կողմից՝ գործերում եղած և նոր 'ի նորոյ ժողոված պաշտօնական տեղեկութիւնները, դրեթէ միաբերան, վկայում էին, որ Մակար եպիսկոպոսը ընդհանրապէս շատ կարգապահ և օրինապահ, անձն է, լուրջ և ծանրաբարոյ։ Ճշմարիտ է, նա ռուսասէր չէ, բայց Մատթէոսի և Գէորգի նման ռուսատեաց էլ չէ։ Եւ երբէք չէր կարելի սպասել, որ Մակար եպիս-կոպոսը թոյլ տար իրան արհամարհել պետական օ-րէնքները, 'ի մասնաւորի Պօլօժենիան, ինչպէս որ այդ-անում էին յիշեալ երկու կաթուղիկոսները։

Վերջապէս Մակարի ամենագլխաւոր արժանիքն այն է, որ նա քաղաքական ձգտումներ չէ տածում իւր մէջ և չունի, հետևաբար հայ երիտասարդութեան

մէջ երևացող քաղաքական ձգտումներն ու ցանկու-
թիւններն՝ նրանում խրախոյս և թարգման չեն կա-
րող գտնել։

Վերջ ամենայնի՝ Ռուսաստանի բոլոր հայ եպիս-
կոպոսների թւում առ այժմ չկայ մին ուրիշը, որին
կարելի լինէր նախապատւութիւն տալ։

Ռուս կառավարութեան ներկայացուցիչները՝ Մա-
կարի «անյուսալիութեան» մասին եղած՝ վերոյիշեալ
փաստերը կարդալուց յետոյ, իրանց կողմից այսպիսի
խորհրդածութիւններ էին անում յօգուտ Մակարի
թեկնածութեան։ Եւ մեծայոյս էին, որ օրինապահու-
թեան, կարգապահութեան նախանձախնդիր և քա-
ղաքական ձգտումներից խուսափող մի այսպիսի հո-
գևորականի կաթուղիկոսանալուց՝ կառավարութիւնը
անշուշտ իւր նպատակին շուտ կը հասնի։

Միայն թէ բանը նրանումն էր, որ Մակարը
ժողովրդականութիւն չունէր։ Մինչև անգամ նրա
անունը՝ ընտրութիւնների նախընթաց օրերում՝
չարաչար կոտրեցաւ։ Եւ կոտրողը ինքը, հայ մա-
մուլն էր։

Այն ժամանակուայ լրագիրներից միմիայն «Մեղու
Հայաստանին» էր, որ ջատագով էր Մակարին։ Մնա-
ցածները՝ «Մշակ»-ը և «Արձագանքը» անխնայաբար
հարուածելով Մակարին՝ Վարժապետեանի և Խրիմ-
եանի թեկնածութիւնները յառաջ էին մղում ամե-
նայն ուժգնութեամբ։

«Նոր-Դարը» նոյնպէս չէր ուզում Մակարին կա-
թուղիկոս տեսնել, այլ Գարեգին եպիսկոպոս Սու-
րադեանցին։ Բայց «Նոր-Դարը» Մակարի վերաբե

րութեամբ գոնէ այն կրքոտ դիրքը չբռնեց, ինչ որ «Մշակն» ու «Արձագանքը» *)։

Իսկ «Մեղուի» կարծիքը, նրա բոլոր ասածը այս էր՝ թէ մենք պէտք է համակերպուենք կառավարութեան պահանջին, ինչպէս որ մեր հայրերն ու աւագ եղբայրներն համակերպւում էին Մատթէոսի և Գէորգի ընտրութիւնների ժամանակ։ Եւ թէ՝ ինչպէս որ տաճկահայ եպիսկոպոսներից ընտրուած կաթուղիկոսներից՝ հայ ազգը վնաս չտեսաւ, նա նոյնպէս վնաս չի տեսնի, եթէ որ ընտրելի կաթուղիկոսը այժմ էլ, ըստ ցանկութեան միևնոյն կառավարութեան, ռուսահայ եպիսկոպոսներից լինի։ Առաւել լաւ՝ եթէ Մակար եպիսկոպոսը լինի (որի անունը, սակայն՝ երբէք չէ յիշել «Մեղուն»), որի անբասիր և ջերմ սիրոյն ու հաւատարմութեան մասին առ եկեղեցին Սիմէօնեանցը ոչ մի կասկած կամ երկիւղ չունի։

Մի և նոյն միտքը յայտնում էր նաև Ներսէս պատրիարքը Կ.-Պօլսից՝ պնդելով, որ միմիայն Մա-

*) «Արձագանքը», մի օր, մինչև անգամ հրատարակեց 'ի յուր հայութեան (հնախօս Աղէքսանդր Երիցեանի մի յօդուածով) թէ Մակարը, մի ժամանակ, Ներսէս կաթուղիկոսին մատնել է կառավարութեան առաջ։ Եւ թէ՝ այդ «մատնութեան թղթին» ստորագրել է նաև «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր Պետրոս Սիմէօնեանցը։

Այս տողերի հեղինակը այդ ժամանակ «Մեղուի» աշխատակիցն էր թէպէտ, բայց կաթուղիկոսութեան մասին՝ խմբագրի կարծիքը չէր բաժանում և միևնոյն «Մեղուի» մէջ գրում էր, որ ինքը այն կարծիքին է, որ այս հարցում «Մեղուն» սխալւում է։

Երիցեանի յօդուածը «Արձագանքի» մէջ կարդալով՝ ես այն եզրակացութեան եկայ մի րոպէ, որ «Մեղուն ոչ թէ սխալւում է, այլ գիտակցաբար մեղանչում է։ Աճապարեցի խմբագրատուն Սիմէօնեանցից բացատրութիւն պահանջելու «մատ-

Digitized by Google

կարը կարող է իւր ընտրութեամբ փրկել Էջմիածինը մօտալուտ վտանգից, որ կախուած էր նրա գլխին այն ժամանակ։

ԿԷ

Ասացինք, որ «Մշակ» «Արձագանք» և «Նոր-Դար» Մակարի կաթուղիկոսանալուն հակառակ էին։ Նրանց կարծիքը, նրանց ամենքի,—մանաւանդ առաջին երկուքի,—սաածների միտքն էլ այս էր թէ՝ ռուսահայ որ և է եպիսկոպոս, նոյն իսկ Մակարը, իբրև Ռուսաստանում մեծացած մարդ, իւր նեղ միակողմանի հասկացողութեամբ, իւր հայեացքով շատ յետ է մնացել ժամանակակից պահանջներից։ Թէ՝ նա, գիտակցօրէն կամ անգիտակցօրէն, գործիք կամ խաղալիք կը լինի բիւրոկրատիկ կառավարութեան ձեռին։

Մասնաւորապէս «Հայկական հարցին» ընթացք, ցանկալի ուղղութիւն տալու համար, «Մշակն»—«Ար-

---

նութեան» թղթի տակ եղած իւր ստորագրութեան մասին»։

Սիմէօնեանցը շարունակ ծիծաղում էր հնախօս Երիցեանի վրայ, աւելացնելով, որ ինքը ոչինչ չգիտէ յիշեալ «մատնութեան թղթի» մասին, որ նա այն ժամանակ դեռ ուսանող էր և Մակարին չէր էլ ճանաչում։ Թէ՝ եթէ մինչև անգամ Մակարը մի այդպիսի թուղթ գրած էլ լինի,—յամենայն դէպս՝ այդ թղթի տակ իրան, Գէորգ Սիմէօնեանցի, ստորագրութիւնը երբէք չէ կարող լինել,—Թէ՝ հէնց այս իսկ պատճառաւ նա համոզուած է, որ „մատնութեան թուղթ“ կոչուածը կամ գլխովին սուտ է կամ ապօգրիֆ կեղծ։

Այս իմաստով էլ կարծեմ, Սիմէօնեանցը մի երկու տողով պատասխան գրեց «Արձագանքի» յօդուածի առթիւ։

Բայց ես դրանով չբաւականացայ։ Ու ինքս ինձ շարունակ կասկածում էի Մակար եպիսկոպոսի անցեալի վրայ։—Երկու ամիս այս և այն կողմ ընկնելուց ու քլքրելուց յետ

ձագանքը» անհրաժեշտ էին համարում, որ ամենայն հայոց կաթուղիկոսը անշուշտ նա լինի, ով այդ հարցը զարթեցրել և նրա համար այս ու այն ջանքն է դրել,—այն 'է՝ Վարժապետեանը կամ Խրիմեանը։

Առաւելապէս առաջինը։

Կարճ խօսելով՝ այն ժամանակւայ ռուսահայ թերթերի մեծամասնութիւնը աշխատում էր կառավարութեան ցանկութիւնը, նրա նպատակը 'ի դերև հանել բացարձակ բողոքելով, իսկ «Մեղուն» առանց բողոքելու՝ աշխատում էր կառավարութեան ցանկութեանը համակերպւիլ՝ համոզւած լինելով, որ այդ ճանապարհով աւելի շուտ կարելի է՝ նրա ցանկութիւնը նոյնպէս 'ի դերև հանել։

Անտարակոյս երկու կողմի թերթերի նպատակն ևս՝ բարի էր։ Երկու կողմն էլ ազգի, եկեղեցւոյ բարիքն էին ուզում, նրա համար աշխատում, տքնում։ Վիճաբանութիւնը, տաք բանակռիւը լինում էր միմիայն այդ նպատակը իրագործելու եղանակի և անձի շուրջը։

վերջապէս հաղիւ ես գտայ “մատնութեան թղթի» պատճէնը։ —Դա Սինօդի մի պաշտօնական թուղթն է նախարարին գրած, որով, յիրաւի, գանգատւում են՝ թէ կաթուղիկոսը ինքնագլուխ վարում է եկեղեցական գործերն և սինօդականների ու միաբանութեան հետ չէ խորհրդակցում։ Սինօդի անդամները, տեղապահ և միւս եպիսկոպոսները ստորագրել են։ Իսկ ամենից յետոյ՝ Մակար վարդապետ։—Իսկ ատենադպիրը՝ որ ստորագրել է, է ոմն Ցովհաննէս Սիմէօնեանց, այլ ոչ Պետրոս Սիմէօնեանց։

Ահա այս էր Երիցեանի գտած „մատնութեան թուղթը“։

Այժմ հարց. այս թուղթը «մատնութեան» թուղթ է արդեօք, մատնիչը միմիայն երիտասարդ Մակար վարդապետն է եղել, թէ նրանից մեծագոյն խելահաս փորձառու արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ և աւագագոյն վարդապետներ։

Եւ որովհետև վիճաբանութիւններն, բանակռիւներն լինում էին յախուռն, անվայելուչ կերպով, կրքով, ցասկոտութեամբ, ուստի և նրանից ամենից լաւ կառավարութիւնն էր օգտւում։

Որքան որ կառավարութեան թեկնածուն անուանարկւած, վարկաբեկ եղած լինէր հայ ժողովրդեան աչքում, որքան որ նա ժողովրդականութիւնից զուրկ լինէր, որքան որ ժողովուրդը նրա վրայ արհամարհական և թշնամական աչքով՝ նայէր,—կառավարութեան համար աւելի լաւ։ Նա նրան, իւր թեկնածուին՝ —նոյնքան աւելի կը սեղմէր իւր պինդ ձեռքերի մէջ։

Ճիշտ այս դրութեան մէջն էր գտնւում Մակար արքեպիսկոպոսը, երբ կաթուղիկոսական աթոռի վըրայ բարձրացաւ։

Անշուշտ նա իւր այս աննախանձելի դրութիւնը ըմբռնում և գիտակցում էր։

Գոնէ այս տողերի գրողը այդ համոզմանը եկաւ, լսելով Վանից աւագ եկեղեցում Մակար կաթուղիկոսի անդրանիկ քարոզը, որի մէջ նա ամենայն պարզութեամբ յայտնեց, որ նա իւր եկեղեցուն դաւաճանած կը լինէր, եթէ մերժէր. թէ՝ նա այժմ Պօղոս առաքեալի նման գնում է Երուսաղէմ (Էջմիածին) և չգիտէ, թէ այնտեղ ինչ բաներ պատահելու են իրան հետ։ Բայց՝ յոյսը Աստուծոյ այն խոստման վրայ թէ՝ զօրութիւն իմ 'ի տկարութեան կայ», լի յուսով և հաւատով մեկնում է։—Եւ մեկնեց։

ԿԷ

Մենք տեսանք, որ Էջմիածնի միաբանական ժողովը՝ Բաբամեան Մկրտիչ եպիսկոպոսի նախագահ-

Digitized by Google

թեամբ յանձն չառաւ կառավարութեանը յանձնել մեր եկեղեցական ծխական դպրոցներն։

Ուստի և Կովկասեան կառավարչապետը Դոնդուկով-Կորսակով՝ յիշեալ դպրոցների փակման հարցը՝ պետական խորհրդի վճռահատութեան ներկայացրեց։

Վերջինս և մասնաւորապէս նրա նախագահ մեծ իշխան և նախկին փոխարքայ Միխայիլ Նիկոլաեվիչը և անդամ Լորիս-Մելիքովը՝ կառավարչապետի զեկուցումը, իբրև անհիմն և ապօրինի, մերժեց՝ յիշեցնելով կառավարչապետին, որ եթէ, յիրաւի հայոց դպրոցների ուսուցիչների մէջ յեղափոխական, հակապետական անձինք կան, կառավարչապետը իրաւունք և ձեռնհասութիւն ունի միշտ այդպիսիներին պատժելու, դպրոցներից հեռացնելու, այլ ոչ թէ անհատների պատճառաւ՝ հարիւրաւոր կրթական հիմնարկութիւններն փակելու 'ի մեծ վնաս երկրի քաղաքակրթական գործին։

Սակայն պետական խորհրդից իրան տրւած այս ապտակը՝ Դոնդուկով-Կորսակովի վրայ ոչ մի ազդեցութիւն չգործեց։ Եւ Պետական խորհրդում կրածպարտութիւնը՝ նա ձեռաց փոխանակեց նախարարների կոմիտետում՝ տարած յաղթութեամբ,—դպրոցներն փակելու որոշմամբ։ Բայց դպրոցների փակման վճիռ տուողներն թէպէտ և Կովկասեան կառավարչապետի խաթրը չկոտրեցին, այնու ամենայնիւ շատ լաւ զգում էին իրանց վարմունքի ամօթալիութիւնը։ Մանաւանդ երբ եւրոպական մամուլը ևս շեշտեց ռուս այս բարբարոս վարմունքը։

Այս պատճառաւ՝ կառավարութիւնը առիթի էր սպասում նորից հայ դպրոցները բանալ տալու։ Եւ

առիթը, որ գուցէ նախատեսնուած էլ էր, եկաւ հասաւ, այն է՝ Մակարի կաթուղիկոսանալը։

ԿԸ

Կաթուղիկոսի միջնորդութիւնը անմիջապէս յարգուեցաւ. դպրոցները բացուեցան, միայն՝ յայտնի սահմանափակումներով։ Սակայն այդ սահմանափակումները արգելք չեղան, որ Մակար և իւր շրջապատող ինտելիգենտ ոյժերը մեր դպրոցական գործը՝ դեռ մինչև այդ ժամանակ չտեսնուած կանոնի ու կարգի տակ ձգէին։—

Մակարի մի այլ խնդիրն ևս յարգեց կառավարութիւնը։—Դա հայ մամուլին վերաբերեալ խնդիրըն էր։

Բանը նրանումն է, որ Մակար կաթուղիկոսը շատ լաւ տեսնում էր, որ հայ մամուլը մի տեսակ գործիք է դարձել կառավարութեան ձեռին։ Թէպէտ մամուլի վերաբերեալ միատեսակ օրէնք կայ, բայց այդ օրէնքի գործադրութիւնը տարբեր կերպով է լինում 'ի շնորհս կառավարութեան միտումներին։

Այսպէս գրաքննիչը մի բառ, մի տառ անգամ, որ վերաբերում է ռուս՝ նոյն իսկ յետին հոգևոր պաշտօնէին, բաց չէ թողնում տպագրելու։

Մինչդեռ մի և նոյն գրաքննիչը անարգել բաց է թողնում, մինչև իսկ խրախուսում է այն ամէն ափեղ-ցփեղ, սուտ-ղորդ, միտումնաւոր լուրեր, յօդուածներ, թղթակցութիւններ անխտիր ամեն մի կարգի և աստիճանի հայ հոգևոր պաշտօնէի վերաբերութեամբ։—

Digitized by Google

Կաթուղիկոսը պահանջում էր, որ օրէնքը հաւասար աչքով նայէ ամէն հոգևոր պաշտօնաների վրայ։ Եւ եթէ կառավարութիւնը ռուս հոգևորականութեան կոչումն ու վարկը մամուլի նիւթ չէ չինել տալիս, նա թող նոյնը անի հայ հոգևորականութեան նկատմամբ։

Գրաքննիչը հրահանգ ստացաւ **առ ժամանակ մի քաշել հայ մամուլի սանձը։**

ԿԹ

Այս կրկնակի զիջողութիւնները, կամ պաշտօնական լեզուով խօսելով, չնորհները կառավարութիւնը ձրի չէր անում կաթուղիկոսին։ Նա նրանից ակնկալութիւն ունէր։

Եւ, յիրաւի, շատ չանցած՝ յայտնի կարգադրութիւնները դուրս եկան հայ կրօնի աւանդման մասին պետական դպրոցներում և հայերին ռուսերէն երդւացնելու մասին՝ պետական հիմնարկութիւններում։

Այս կարգադրութիւնների առթիւ՝ կաթուղիկոսին տեղեկութիւն տալով՝ կառավարութիւնը նրանից, իբրև մի չինովնիկից, պահանջում էր, որ նա իրան ստորադրեալ հոգևոր դասը պարտաւորացնէ ճշտութեամբ 'ի կատար ածելու յիշեալ կարգադրութիւնները։

Մակարը, կառավարութեան համար միանգամայն անսպասելի կերպով, ոչ միայն 'ի կատար ածելու հրաման չարձակեց իրան ստորադրեալ հոգևորականներին, այլև խստիւ պատուիրեց, որ ոչ ոք չհամարձակւի 'ի կատար ածել։

Մի և նոյն ժամանակ մի գրութիւնում բացա-

Digitized by Google

տրեց նախարարին, թէ ինչու համար նա չէ կարող կառավարչական կարգադրութիւնը ընդունել և բողոքում է մի այդպիսի ոտնձգութեան դէմ հայ լեզուի և կրօնի վերաբերութեամբ։

Հ

Մի այլ թղթով կաթուղիկոսը խնդրում՝ էր, որ պետական դպրոցների հայ կրօնուսոյցների ընտրութիւնում՝ հայ հոգևոր իշխանութիւնը որոշ իրաւունք ունենայ։ Եւ դրա համար յանձն էր առնում նիւթական յատուկ միջոցներ չունեցող դպրոցների կրօնուսոյցների ռոճիկը՝ տեղական եկեղեցիների հասոյթներովը հոգալ։

Այս առաջարկութիւնը ևս չյարգուեցաւ։ Բացի դրանից կաթուղիկոսը կասկածի տակ ընկաւ։

Կառավարութիւնը բնաւ չէր կարծում, որ Մակարի նման «կարգապահ և օրինապահ» կաթուղիկոսն ևս՝ կառավարչական կարգադրութիւնների դէմ կըմբոստանայ։ Ուստի և մտքումը դրեց պատժել նրան՝ ջախջախելով և խորտակելով նրա այն հըմայքն ու իրաւասութիւնը, որ նա ունէր, իբրև կաթուղիկոս, գոնէ հոգևոր դասի վրայ։—

Մի գեղեցիկ օր յանկարծ հրաման դուրս եկաւ, որ հայ հոգևորականներին,—երբ նրանցում այս և այն քաղաքական (?) յանցանք նկատուի, պատժելու է ինքը կառավարութիւնը՝ այն էլ՛ ոչ թէ դատաստանական, այլ վարչական ճանապարհաւ։

Սակայն առնելով 'ի նկատի նրանց կոչումը, սատիճանը՝ կառավարութիւնը այնքան բարի էր գըտնուել, որ որոշել էր հայ յանցաւոր հոգևորականներ

րին հեռու վայրեր չաքսորել, այլ հայկական վայրերը։ Ուստի և կաթուղիկոսից պահանջւում էր, որ նա այժմեանից կառավարութեանը ցոյց տայ, թէ ո՞ր վանքերն են աքսորավայր լինելու։

Մակարը մի նոր և բուռն բողոք գրեց, ուր, 'ի միջի այլոց, ասում էր, որ նա հակառակ չէ իւր հոգևորականների պատժելուն՝ երբ սրանք քաղաքական յանցանքների մէջ բռնուին, բայց պահանջելով պահանջում է, որ այդպիսի հոգևորականները քննուին և դատուին ոչ թէ վարչական, այլ դատաստանական ճանապարհաւ։

Գրելով այս բողոքը Մակար կաթուղիկոսը, մի և նոյն ժամանակ, շատ լաւ հասկանում էր, որ իւր բողոքին կառավարութիւնը նշանակութիւն չպիտի տայ,—ուստի որոշեց թօթափել իւր ոտքերից Ռուսաստանի փոշին։ Կարգադրեց, որ Պարսկաստան անցնելու պատրաստութիւն տեսնեն վանքում իրան համար։—

Մի և նոյն ժամանակ սինօդի պրօկուրօրին 'ի պաշտօնէ իրան մօտ կանչելով՝ պաշտօնապէս յայտնեց նրան՝ զեկուցանել ներքին գործոց նախարարին, որ ինքը, իբրև կաթուղիկոս, այլ ևս անկարող լինելով տանելու կառավարութեան ոտնձգութիւնները՝ հաստատապէս մտքումը դրած է թողնել Ռուսաստանը և անցնիլ Պարսկաստան, եթէ կառավարութիւնը իւր ոտնձգութիւններին վերջ չի դնել։

ՀԱ.

Պրօկուրօրի հեռագրին՝ պատասխան եկաւ Պետերբուրգից, թէ երկու բարձրաստիճան անձինք էջ-

Digitized by Google

միածին են մեկնում՝ կաթուղիկոսի և կառավարչապետի մէջ ծագած թիւրիմացութիւնները (?!) պարզելու։

Ինչպէս յայտնի է, բարձրաստիճան անձինքը եկան։ Նրանք կաթուղիկոսի հետ տեսակցելուց յետոյ այն եզրակացութեան եկան, որ Մակարը իւր խղճի և կոչման հետ կոմպրոմիսներ անող մարդիկներից չէ. որ կառավարութիւնը Մակարին կաթուղիկոսացնելով՝ 'ի զուր կարծել է, թէ նա կոյր գործիք կը լինի ռուսացուցման գործը 'ի կատար ածելու։—

«Ես իմ ամբողջ կեանքում հաւատարիմ եղել եմ կայսրին և կը մնամ։ Բայց ես ամբողջ կեանքում հաւատարիմ և աւանդապահ եմ եղել նաև իմ հայրենի եկեղեցուն. և այդպէս էլ կը մնամ ցվերջին շունչս։ Ես միշտ աւետարանական այն ոգունն եմ ընթացել թէ՝ «տուք զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։—Վերադառնալիս՝ հաճեցէք յիշեցնել պ. Նախարարին, որ երբ ես, իբրև տեղապահ, կայսեր թագադրութեան հանդէսը վերջանալուց յետոյ՝ Պետերբուրգ հրաւիրուեցայ, չգնացի, մերժեցի ինձ եղած առաջարկն։

Իսկ եթէ կայսեր կողմից հաստատուելուցս յետոյ էլ, չկրկնեցի մերժումս,—դրա պատճառը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ այն, որ յանցանք համարեցի Նորին Մեծութեան արդար զարոյթին կամ արհամարհանքին ենթարկել մանկութիւնիցս 'ի վեր իմ պաշտած հայրենի եկեղեցէն, Նրա Մայր Աթոռը»։—

ՀԲ

Կառավարութիւնը համոզուեցաւ, որ Մակարի

Digitized by Google

կաթուղիկոսացնելումը, ևս սխալուած է իւր հաշւեներում. թէ՝ այս կաթուղիկոսի օրոք ևս՝ իւր յոյսերը չպիտի արդարանան։

Ուստի և սպասում էր նորա մահուանը, որպէս զի բարեմիտ խեղճ ու մոլոր Երեմիա եպիսկոպոսին կաթուղիկոսացնելով՝ նորա առաջը դնէ յանթերի գործադրութիւն այն նոր Պօլօժենիան, որ ներքին գործոց նախարարութիւնում վաղուց 'ի վեր խմբագրուած տպագրուած էր։

Սակայն... քաղաքական հորիզոնում տեղի ունեցած ինչ ինչ դէպքերն, մանաւորապէս Ստամբուլովի երևան գալն Բուլգարիայում. նորա յայտնի ռուսատեցութեան ցոյցերն ու գործառնութիւններն, Աբդուլ Համիդի կողմից նրան տրուած սիրալիր ընդունելութիւնը և այլն,—այս ամենը զգալի յեղաշրջում յառաջացրեց ռուս դիւանագիտութեան հայեացքի և գործունէութեան եղանակի մէջ։

Հինաւուրց, փորձառու և Պօլսոյ նախկին դեսպան Իգնատիեվի խորհուրդն ու կարծիքն մի կողմից և Վանի հիւպատոս Կամսարականի զեկուցումները միւս կողմից, կառավարութեան ձեռին եղած բոլոր հայ կրօնաւորների կենսագրական տեղեկութիւնները երրորդ կողմից՝ յաղթանակը տարան։ Որոշուեցաւ ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի վրայ այս անգամ բազմացնել Մկրտիչ եպիսկոպոս Խրիմեանին, այսպէս անուանեալ «Հայոց Հայրիկին»։—

Եւ նա բազմեց՝ ռուսահայերի և նրանց պատգամաւորների ամենաբուռն ցոյցերի և ցնծութեան աղաղակների մէջ,—աղաղակներ, որոնք յար և նման էին սահմանադրութեան առթիւ՝ Պօլսոյ դալարագեղ

Digitized by Google

ափերում լսւած «կեցցէ ազգն ու սահմանադրութիւն» աղաղակներին։

Այդ աղաղակների միակերպութիւնից ձանձրանալուցն էր անշուշտ, որ Նորին Վեհափառութիւնը Երեւանի Առաջնորդարանի շուրջը խմբւած ամբոխին ծանօթացնելով իւր մի այլ մոռացւած տիտղոսի հետ բացականչեց. «ծօ, քիչ մըն ալ կանչեցէք «կեցցէ Արծիւ Վասպուրական»։—

Եւ Հրազդանի հովիտը արձագանգ տւեց հազարաւոր մարդկանց ձայնին՝ „կեցցէ Արծիւ Վասպուրական“։—

Ընթերցողին հասկանալի պատճառաւ՝ մեր գրիչը այստեղ կանգ է առնում։ Եւ մենք հարկադրւած ենք ընդհատել մեր մտորումները։

Բայց մենք չենք կարող փոքր ինչ էլ կանգ չառնել «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» էութեանը և գործունէութեանը վրայ, որպէսզի աւելի ծանօթ լինենք «ազգերնուս վիճակին»։

ՀԳ

Նախընթաց երեսներում մենք ասել ենք, որ Ս. Ստեփանոսի դաշնագրում 16-րդ յօդւածը մտցնելուց անմիջապէս յետոյ՝ կառավարութեան գաղտնի թելադրութեամբ և անպաշտօն աջակցութեամբ՝ Կովկասի հայերի մէջ կոմիտեներ կազմւեցան՝ զինւած խմբեր Տաճկահայաստան ուղարկելու նպատակաւ։

Այդ խմբերից նրանց, որոց տաճիկ սահմանապահները նկատում էին և բողոքի առիթ դառնում, կառավարութիւնը իսկոյն յետ էր դարձնում, թոյլ

Digitized by Google

տալով, սակայն, որ նրանք ուրիշ կողմերից անց-կենան։

Իսկ անընկատելի կերպով անցնող խմբերը՝ մըտ-նում էին «երկիրը»—Տաճկահայաստան և գրգռում ժողովրդին, առաւելապէս գիւղացուն, որոց համար Ռուսաստանից եկած այս անկոչ հիւրերը՝ մի նոր տե-սակի ենիչերիների դեր էին կատարում յաճախ։

Պատահում էր, որ տաճիկ ոստիկանութիւնը այս-տեղ կամ այնտեղ հանդիպում էր խմբերին և ընդ-հարւում։ Երկու կողմից էլ, 'ի հարկէ, զոհեր լի-նում էին։

Բայց, վերջ ի վերջոյ, հայդուկները, ի հարկէ, տե-ղի տալիս, փախչում էին՝ անճարակ, անզէն հայ գիւ-ղացուն տաճկի վրիժառութեան յանձնարարելով։

ՀԴ

Ամեն անգամ երբ Բարձրագոյն Դուռը ռուս կա-ռավարութեան ուշադրութիւնը հրաւիրում էր իւր հպատակ հայերի այդ օրինակ գործողութիւնների վրայ,—կառավարութիւնը միշտ և հանապազ չքմեղ էր ձևանում,—знать не знаю, вѣдать не вѣдаю.

Բանից դուրս էր գալիս, որ Կովկասեան իշխա-նութիւնը իբրև թէ միանգամայն տեղեկութիւն չունի ոչ միայն անդադար սահմանն անցնող հայ կամաւոր-ների մասին, այլ և «Մշակի» գրգռչական,—պրովո-կատորական յօդւածների և սուտ ու զորդ թղթակ-ցութիւնների մասին, այլ և Րաֆֆու «Կայծերի» մա-սին,—վիպասանութիւն կոչւած այն հեքիաթաբանու-թեան մասին, որոյ կոնսպէկտը հեղինակին տւեց Ժե-նեւայ Տէր-Աստուածատրեանի տանը՝ Գրիգոր Արծ-ը

րունուց և մի քանի հայ ազգի սպաներից և աստիճանաւորներից բաղկացած՝ քաղաքական գործիչների խմբակը։

Կառավարութիւնը որպէս թէ տեղեկութիւն չունէր նմանապէս և «Ազատութեան Աւետաբեր» լրագրի գոյութեան մասին, որ Մոսկվայի հայ ուսանողներն էին հրատարակում իբրև թէ կառավարութիւնից թաքուն։

Աղնիւ, սակայն անփորձ, խեղճ ուսանողներ, նըրանք չէին իմանում, որ ծածուկ լրագրի չրիֆտները ամբողջապէս մատակարարում էր,—ինչ էք կարծում՝ ով,—Մոսկվայի նահանգի **ժանդարմական կառավարութիւնը**, որ, միևնոյն ժամանակ, ուսանողներից թաքուն՝ հետևում և հսկում էր թերթին։

ՀԵ

Սակայն Բերլինի վեհաժողովից յետոյ՝ երբ ռուս և տաճիկ դիւանագիտութիւնը միացաւ ընդդէմ հայութեան գործելու,—այն ժամանակ այլևս թաքնուելու, ծպտելու հարկ չկար։—Հարկ չկար նմանապէս գործունէութեան եղանակն ևս փոխելու։ Ո՛չ, գործունէութեան միևնոյն եղանակաւ, բայց բոլորովին տարբեր նպատակաւ սկսաւ գործել այնուհետև ռուս դիւանագիտութիւնը։

Յայտնի է, որ հպատակ ազգերին տրորելու, նըրանց ճզմելու և ջնջելու ամենալաւ առիթ, նոյն իսկ օրինական հիմք, ծառայել են միշտ այդ ազգերի քաղաքական ձգտումները, նրանց արած քայլերը այդ ուղղութեամբ։

Այդպիսի ձգտում մեր մէջ կար։—Քաղաքական

Digitized by Google

վերջին անցքերը, 1870 թւականի Ռուսաստանի շարժումները յօգուտ Սլաւօնների, Ս. Ստեֆանօյի 16 և Բերլինի 61 յօդւածներն, կառավարութեան գաղտնի, իսկ հայ մամուլի և գրականութեան յայտնի թելադրութիւններն, բնականաբար, բաւականին պարարտ հող պատրաստել էր մեր մէջ։

Թէ Ռուսաստանի և թէ Տաճկաստանի հայ՝երիտասարդութիւնը արդէն ոգևորուած էր և պատրաստ պատերազմի դաշտը նետուելու։

Մեքենան լարուած, պատրաստուած էր. հարկաւոր էր միայն զարկ տալ նրան, որ շարժի։

Եւ զարկ տւողը գտնուեցաւ յանձին... անգլիացի ոմն, Ֆէտջերալտի։

ԻԶ

Այս մութ անձնաւորութիւնը, որ ինքնիրան անգլիական ազատամիտ թերթերից մէկի աշխատակիցն էր անուանում, Կովկասի ողջ հայաբնակ, փոքր 'ի շատէ յայտնի, վայրերն իւր ոտքի տակն առաւ։ Ամեն հայի տուն մտաւ, ամեն մի հայ գործչի հետ տեսնուեցաւ, շատերի հետ էլ մտերմացաւ։ Ամենքին և ամենուրեք խօսեց, յորդորեց, քաջալերեց, խրախուսեց անյապաղ ձեռնամուխ լինել Տաճկահայաստանի ազատութեան գործին։

Ֆէտջերալտի այդ թունդ քարոզ ու յորդորների օրերումն էր, որ Պետերբուրգից Թիֆլիզ ժամանեց Սարգիս Կուկունեանցը՝ մայրաքաղաքում ծրագրուած կամաւորների խումբը կազմակերպելու։

Նա, Կուկունեանցը, երկու անգամ Թիֆլիզում տեսակցութիւն ունեցաւ Ֆէտջերալտի հետ։ Եւ երկու

Digitized by Google

անգամին էլ Նրա մօտ հանդիպեցաւ... Կովկասի կառավարչապետ Շերեմետևին, որ Ֆէտջերալտի հետ, երևի, Տաճկահայաստանի ազատութեան մասին էին խորհում ու խորհրդածում։

Եւ որպէսզի ազնուամիտ հայ երիտասարդը՝ այդ տեսակցութիւնից չգայթակղի, Ֆէտջերալտը Նրան— Կուկունեանցին, հարևան սենեակում էր թագցնում մինչև Շերեմետևի հեռանալը։

Չմոռանամ յիշել, որ հէնց այդ օրերում Թիֆլիզին իւր երրորդ թէ չորրորդ այցելութիւնը գործեց Կ.-Պօլսոյ դեսպանատան հինաւուրց ագենտը՝ հայազգի Զ-եանը, նոյն միսսիայով, ինչով որ այցելել էր Ֆէտջերալդը։

Այսպէս թէ այնպէս Կուկունեանցի խումբը Թիֆլիզում ձեռաց կազմւեցաւ և կանոնաւոր ու փառաւոր կերպով զինւեցաւ։

Խումբը բաղկացած էր 100 հոգուց, ամէնքն էլ երիտասարդ մարդիկ. ամենքն էլ իրանց տաճկահայ եղբայրների սիրոյն ու վիճակովը տոգորւած ու ոգևորւած։

Դոյն այդ Թիֆլիզ քաղաքն էր, սիրելի ընթերցող, որ ճիշտ 80 տարի առաջ ևս՝ մի այդպիսի, բայց աւելի մեծ, խումբ կազմեց և յանձնեց աշտարակեցի Ներսէս եպիսկոպոսին, որ գնայ պարսից ձեռքից Արարատեան դաշտը ազատէ։

ՀԷ

1890 թւականի աշնանային մի գիշերում՝ Կուկունեանցը իւր խմբով սահման անցաւ և մտնելո

Այաշկերտ՝ մի յանկարծական յարձակում գործեց մի քրդական գիւղի վրայ։

Ճիշտ է մեր քաջերը իրանց այդ յարձակումով՝ մի քանի քրդերի սպանեցին, բայց երբ հետեւեալ օրը նկատեցին 2000 զինեալ քրդերի ձիարշաւը դէպ իրանց կողմը՝ ստիպւած եղան յետ դառնալ, յետ փախչել դէպ 'ի ռուսական սահմանը, որի ճանապարհը դժբաղդաբար կորցրել էին։

Ուր ուրեմն գտան ճանապարհը։ Սակայն հէնց որ սահմանագլխին մօտեցան, ռուս կոզակների մի խումբ դիմաւորեց նրանց իւր հրացանների համազարկերով։

Կուկունեանցը հեռուից, այլ և այլ նշաններով, 'իզուր էր ճիգ թափում կոզակներին և նրանց սպային հասկացնել իւր խմբի ով լինելը,

Նրանք,—կոզակները, այդ բանը շատ լաւ իմանում էին և... կրակում էին Ղարսի նահանգապետի հրամանաւ, որ Պետերբուրգից առանձին հրահանգ էր ստացել յանկարծակի և ուղղակի։

Էլի լաւ էր, որ խմբի անդամներից շատերը քերծերում, փոսերում, լերան մացառուտներում թաքչելով ու պահւտելով մի կերպ իրանց գլուխը պրծացրին, ազատեցին։

Մնացեալ փոքր մասը,—բացի 'ի մի քանի սպանւածներից,—իրանց խմբապետով—Կուկունեանցի հետ միասին՝ անձնատուր եղան։ Եւ, ինչպէս յայտնի է, Թիֆլիզի դատաստանական պալատի վճռահատութեամբ՝ աքսորւեցան Սախալին։

Այսպէս ահա վերջացաւ այս կօմեդիան՝ թէ

նիւթական և թէ անձնական կեանքի, համեմատաբար, շատ չնչին զոհաբերութեամբ։

Այսուհետև սկսում է տրագեդիան, ողբերգութիւնը՝ իւր մեծամեծ և ահռելի զոհաբերութեամբ։

ՀԸ

1890—1903 թուականները հայ տարեգրութեան մէջ անջնջելի պիտի մնան այն մռայլ, բարբարոսական և եղերերգական դէպքերով, որոնք ծըրագրուած էին՝ հայ ժողովուրդը ևս աստիճանաբար ջնջելու համար, ինչպէս որ ջնջուած էին նրա ազգային հիմնարկութիւնները։

Ժողովրդի ջնջմանը ձեռնարկեցաւ երկու ճանապարհով,—մինը այստեղ, Ռուսաստանում, միւսը՝ այնտեղ, Տաճկաստանում։

ՀԹ

Մինչև ռուս-ճապօնական պատերազմի վերջանալն և ռուսական յեղափոխութեան երևան գալն՝ ընդունուած էր Ռուսաստանը համարել եւրոպական փոքր 'ի շատ է քաղաքակիրթ պետութիւն։

Եւ երբ այդպիսի, բնական է, որ կառավարութիւնը չէր կարող իւր սահմաններում կազմակերպել կամ թոյլատրել այն կոտորածն ու աւերածներն Կովկասում մանաւորապէս և բուն ռուսիայում՝ ընդհանրապէս, որոյ ականատես է լինում աշխարհը 1905 թւականիցը սկսեալ։

Այս պատճառաւ ռուսահայերի ջնջումը սրով ու կրակով չսկսւեցաւ, այլ, այսպէս անուանեալ՝ Գօլիցինեան ռեժիմով։

Digitized by Google

Զ

Այդ ռեժիմի հետեւանքը մեզ համար՝ արդէն ամեն մի հայ մարդ անգիր է իմանում։

Ուստի ես միմիայն այդ հետեւանքի չոր ու ցամաք ցանկն եմ դնում այստեղ.

ա) Մեր բարեգործական ընկերութիւնները փակւեցան։

բ) Լրագրութիւնը մասամբ փակւեցաւ և մասամբ խստագոյն ճնշման ենթարկւեցաւ։

գ) Քաղաքացիական ծառայութեան ամեն մի ասպարէզից էլ, անխտիր, հայերը վտարւեցան։ Իսկ զինւորական ասպարէզում գտնւածներն էլ՝ մասամբ յետ մղւեցին և մասամբ յատուկ սահմանափակումների ենթակայեցան։

դ) Մայրենի լեզւով երդւելը արգելւեցաւ։

ե) Հայերէն գրքեր հրատարակւելն չէր թոյլատրւում։

զ) Ինքնուրոյն բեմական գրւածքներ բեմի վրայ չէին թողնում խաղալու։

է) Եկեղեցական ծխական դպրոցները փակւեցան։ Իսկ ճեմարանի և դպրանոցների փակման կամ գրաւման ծրագիրներ կազմւեցան։

ը) Հող չունեցող հայ գիւղացիներին խոստացւում էր հող տալ միմիայն այն դէպքում, եթէ որ նրանք պրօվասլաւ եկեղեցւոյ ծոցը մտնեն։ Իսկ այդ եկեղեցւոյ միսիօնարական ընկերութեան ագենտներն հրահանգ ստացան՝ համարձակ քայլեր անելու հայութեան մէջ։

Digitized by Google

թ) Սակաւահող հայ գիւղացիներին արգելեցաւ սահմանակից, արքունի հողերից՝ այլ ևս օգտուելու։

ժ) Մի կողմից տխրահռչակ Վելիչկոն՝ մի կեղծ անուան տակ, իւր «Удавъ» կոչուած պասկւիլ—վէպն էր գրում ու ցրւում, միւս կողմից պաշտօնական «Кавказъ» լրագիրը Նամենաանբարեխիղճ արշաւանք էր մղում հայերիս դէմ։

ժա) Կաթողիկոսի մի քանի իրաւունքները իւր ստորադրեալների վրայ՝ վերացուեցան։—Սինոդի կանցելարեան ամբողջովին պրօկուրօրի տեսչութեանը և իրաւասութեանը ենթարկուեցաւ։

ժբ) Վերջապէս եկեղեցական կալուածքներն օրով ցերեկով յափշտակուեցան։ Եւ այդ առթիւ՝ ամեն կարգի, աստիճանի և հասակի ու սեռի հայեր բանտարկուեցան, աքսորուեցան, սպանուեցան, նահատակուեցան։ Իշխան Գօլիցինը պարզ ասել էր, որ նա հայութիւնը Կովկասում պիտի ջնջէ և միմիայն մի հայ տղամարդու և մի հայ կինարմատի խրտուիլակները պիտի թողնէ կովկասեան հնութեան թանգարանում ՚ի տես և ՚ի ցոյց ապագայ սերնդին։

—Թող կորչեն, գնան այդ օրերը, ինչպէս և կորան էլ։—Որովհետև, ով գիտէ, «եթէ ոչ էին կարճեալ աւուրքն այնոքիկ, ոչ ապրիւր ամենայն մարմին»։ (Աւետարան)։

ՁԱ

Տաճկահայերի ջնջումը սկսուեցաւ տարբեր եղանակաւ, որ աւելի յատուկ էր ասիական բիրտ ու բութ մի պետութեան։—Ռուսահայերին ձեռնարկեցին ջնջել ձուլմամբ, իսկ տաճկահայերին՝ ուղղակի սպանմամբ։

Digitized by Google

Վերոյիշեալ թուականներում Տաճկաստանի մէջ կատարուած արիւնըռուշտ, եղերերգական տեսարանների մէջ՝ գլխաւոր դերակատարը «Դաշնակցութիւն» էր, որ մեր մէջ երևան եկած քաղաքական կուսակցութիւններիցը թէև ամենիցը ուշ ծնաւ, բայց ամենից շուտ աճեցաւ և զարգացաւ։

«Դաշնակցութեան» ՚ի պաշտօնէ հրապարակ իջնելն՝ սերտ կապ և առնչութիւն ունի Խրիմեանի կաթուղիկոսութեան հետ։

Ես արդէն ասել եմ, որ այդ կաթուղիկոսութեան մասին խօսելու չեմ։—Հետևաբար «Դաշնակցութեան» ծագման և զարգացման մանրամասնութիւնների մէջ մտնելն ևս՝ չեմ կարող։

Ընդհանուր կերպով այսքանս միայն կընկատեմ, որ հայ նորագոյն պատմութեան արդանդում «Դաշնակցութիւնը» երկնեց Ս. Ստեփանոսի դաշնագրութիւնից անմիջապէս յետոյ։ Նա ծնեցաւ, լոյս աշխարհ ընկաւ ժեներալ Տէր-Աստուածատրեանի և Գրիգոր Արծրունու կազմակերպած խմբերի գործունէութեան օրերին։

Ոտքի ելաւ, կանգնեցաւ Կուկունեանցի «արշաւանքի» օրերին. իսկ գործելու ասպարէզ նետուեցաւ ՚ի պաշտօնէ՝ Խրիմեանի կաթուղիկոսութեան օրերին։

Շատ հասկանալի՝ է, որ մեր ամենագեղեցիկ քաղաքական կուսակցութեան, — „Դաշնակցութեան“ թէ՛ երկունքի և թէ՛ զարգացման աստիճաններին քաջածանօթ և տեղեակ էր Կովկասեան իշխանութիւնը։

Եւ եթէ ոչ մայրական՝ գէթ տատմօրական գթութեամբ, եթէ ոչ հայրական՝ գէթ խնամակալա-

կան հոգատարութեամբ հետևում և հսկում էր նրա վրայ։

Պարզ խօսենք։

ԶԲ

Քրքրեցէք ամեն մի ժամանակի և ամեն մի ազգի պատմութիւնը և կը տեսնէք, որ ամեն մի տիրապետող տարր՝ ամեն մի ներքեյի և աններքեյի միջոցներով աշխատել է միշտ՝ իւր թոյլ հարևանին կամ հպատակ տարրին իւր օգտին ծառայեցնելու, իւր ուզածով նրան պարացնելու։

Նոյն իսկ այսօր, այս րոպէիս՝ երկրագնդիս ամենից աւելի զարգացած ու կրթւած և ամենից աւելի ազատամիտ ու արդարամիտ մեծ հասարակապետութիւնը՝ յանձին իւր նախագահի,—Ռուզվէլդի,—անգութ ու անարգ, եղբայրասպան կռւի ասպարէզ է դարձրել Կուբա կղզին, որպէսզի նրան... իւր ճանկը ձգէ։

Կուբայի երկու, յայտնի գործիչներ, երկուքն էլ անկաշառ ու հայրենասէր, աշխարհիս ամենահարուստ կղզիներից մէկի մէջ մի ահագին հրդեհ են առաջացրել և միացեալ նահանգների համար... շագանակ են խորովում։

Ուրիշ օրինակներ, կարծեմ, աւելորդ են։

ԶԳ

Բնական է, որ Ռուսաստանն էլ, իբրև մի խոշոր ու տիրապետող ազգութիւն, չէր կարող այս պարագայում բացառութիւն կազմել։

Եւ ինչու կազմէր։ Չէ՞ որ նա ինքն էլ, ուրիշնե-

Digitized by Google

րի նման ուզում էր կրակից շագանակ հանել։

Եւ ահա նա էլ իրան համար՝ շագանակ խորովող գտաւ յանձին հայ «Դաշնակցութեան», որ մինչև 1903 թուականի երկրորդ կիսամեակը՝ գործում էր,— ինչպէս ասած էր իւր կանոնագրութեան, կարծեմ, 2-րդ յօդուածում,—բացառապէս Տաճկահայաստանում։

«Դաշնակցութեան այդ գործունէութիւնը միանգամայն համապատասխանում էր ռուս քաղաքականութեան 1877 թուականում ունեցած ծրագրին, որ մինչև 1903 թուականը թէև ընդարձակուած ու կատարելագործուած էր, բայց էութեամբ նոյնն էր։

Եթէ Տաճկահայաստան արշաւող դաշնակցական զինուած խմբերը՝ կարողանային մի այնպիսի դրութիւն ստեղծել, որ ռուս բանակը հիմք ու հնար ունենար այնտեղ (Տաճկահայաստան) մտնել,—նա կը մտնէր։ Եւ, 'ի հարկէ, այլ ևս չէր դուրս գայ, ինչպէս որ ցարդ Աւստրիան դուրս չէ գալիս Բոսնիայից և Հերցեգովինայից և ինչպէս որ Անգլիան դուրս չէ գալիս Եգիպտոսից։

Սա ռուս դիւանագիտութեան նախկին ծրագիրն էր, ու իւր գոյութեամբը պարտական էր արտաքին գործոց նախարար իշխան Գորչակովին և Կ.-Պօլսոյ դեսպան Իգնատիեվին։

Իսկ եթէ դաշնակցական խմբերը՝ յաջողէին սոսկ կոտորած առաջ բերել Տաճկահայաստանում,—դրանով նրանք իրագործած կը լինէին ռուս դիպլոմատիայի վերջին ծրագիրը, այն է՝ տաճկահայերի ջնջումը, Տաճկահայաստանը հայերից դատարկել տալը,—մի ծրագիր, որ իւր գոյութեամբ՝ պարտական է արտա-

Digitized by Google

քին գործոց նախարար Լաբանով-Ռոստովսկուն, իսկ գործադրութեամբ՝ Կ.-Պօլսոյ դեսպան Նելիդովին։

ՁԴ

Բանից դուրս եկաւ, որ «Դաշնակցութեան» գործունէութեամբ Լաբանով-Ռոստովսկու ծրագիրն իրագործուեցաւ,

Եւ ահա, պարբերաբար, միմեանց ետեւից սկըսուեցան Սասնոյ, Վասպուրականի, Բաղէշի, Տրապիզոնի, Պօլսոյ և առհասարակ ամեն մի փոքր 'ի շատէ հայաշատ քաղաքում ու գաւառում այն կոտորած ու աւերածութիւններն, որոնք իրանց խժդժութեամբ գերազանցեցին Բարդուղիմեան գիշերներն էլ, Սիկիլիոյ երեկոներն էլ և Ստոկհոլմի արեան բաղնիսներն էլ։

Եւ որպէսզի այդ մարդախօշոշ ոճիրներն յառաջացնող դաշնակցական «հերոսների» կեանքն Պօլսում չվտանգուի,—Նելիդովը՝ ինչպէս որ որոշուած էր՝ այդ հերոսներին Օսմանեան բանկի վրայ ուղղելիս՝ յուսապում էր՝ իւր օգնական Թէ Թարգման Մաքսիմովի միջոցաւ՝ մի կողմից նրանց չոգենաւ նստեցնել և Մարսելիա փոխադրել և միւս կողմից՝ կարմիր Սուլթանին ակնածաբար խորհուրդ էր տալիս թէ՝ „Massacrez, Majesté“,—«կոտորեցէք, ձերդ մեծութիւն»։

Այս ձեւով և այս եղանակով ռուս դիւանագիտութիւնը իւր վրէժը լուծեց Անգլիայի դիւանագիտութիւնից,

1878-ին Լայարդը՝ Սուլթանի թոյլտուութեամբ հայ պատուիրակներ ուղարկեց Բերլին և 16-րդ յօդուածը 61-ի փոխարկել տուեց։

Digitized by Google

1896-ին Նելիդովը՝ նոյն Սուլթանի թոյլտուութեամբ՝ դաշնակցական հերոսներին՝ Օսմանեան բանկի վրայ ուղարկեց և Պօլսում հայ արեան բաղնիսներ սարքեց։

Զե

Ընթերցողի նեարդերը խնայելով՝ մենք չենք նկարագրել բուն երկրի,—Տաճկահայաստանի մէջ կատարուած ոճիր ու եղեռնները։

Չենք պատմել թէ՝ ինչպէս երկրի երեսից խափառ անյետացան Խանասորի 8 հայկական գիւղերն, իսկ նրանց դժբաղդ բնակիչներն «քարկոծեցան, սղոցեցան, կոչկոճեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լեաշկամաշկօք և մորթօվք այծենեօք, կարօտեալք, նեղեալք, չարչարեալք, զորս ոչ արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք, և 'ի լերինս, և յայրս և 'ի փապարս երկրի» (Եփր. ժա։ 37—38)։

Չենք նկարագրել նմանապէս, թէ ինչպէս Սասնոյ գագաթներում, ինչպէս արծիւներն իրանց երկրաբերձ բներում, դարերով, և ապահով ու անվրդով ապրած 300,000 հայ շինականներն մասամբ թրի ու թնդանօթի բերանն ընկան, մասամբ Մշոյ դաշտավայրում ջերմեցին, տապեցան, տագնապեցան և կենսազրաւ եղան, մասամբ էլ մազապուրծ Ռուսաստան փախչելով ըստ առածին՝ «Մրից դուրս եկան, մրաջուրն ընկան»։

Չենք նկարագրել, թէ ինչպէս տաճիկ խուժանի ձեռքով Պօլսոյ փողոցներն հայի արիւնով սրսկելուցը, շաղախելուցը չբաւականանալով՝ մայրաքաղաքի պահակախումբը գիշեր ժամանակ յանկարծակի

Digitized by Google

յարձակւեց հայ բանւորների և արհեստաւորների խիտ թաղերի վրայ և քնաթաթախ ժողովրդին մորթոտեց, դիակները նաւակների մէջ գետեղելով և վրան քարեր դարսելով՝ թոկերով կապում, ամրացնում էր և ծովափը տանելով նաւակը ծակում և անդունդն էր իջեցնում։

Իսկ երբ որ սրերը բթացան՝ այնուհետև սկսեցին հայերին ողջ-ողջ բռնոտել, ձեռքերն ու ոտքերը կապոտել, բերանները խցել և վզներին քար կապելով ծովը շպրտել։

Այո, այս ամենը չենք նկարագրել, այսքանս միայն կարձանագրենք 'ի տեղեկութիւն հայ ապագայ սերնդին և պատմութեանը, որ երբ անարգ դիւանագիտութեան անարգ հաշիւներով՝ այս խժդժութիւնները կատարւում էին հայերի գլխին։ Թոփ-Հայանում Նելիդովի Донецъ անունով դեսպանական նաւի վրայ՝ ծառայողները եարալաշ էին խաղում։ Կովկասեան ադմինիստրացիայի օրգանն էլ հայերի գլխին եկած այս փորձանքներն՝ Աստուծոյ արդար պատիժն էր համարում այդ մեղապարտ ազգի համար։ Երրորդ կողմից՝ մայրաքաղաքի ադմինիստրացիայի օրգան՝ անարգների անարգագոյն „Новое Время“-ն հայ նահատակներին և նրանց յիշատակը ծաղրածութեան և ծանականքի նիւթ էր շինել գրելով «Վոսփորի մէջ ձկները հայի շատ դիակներ ուտելուց՝ սաստիկ չաղացան»։

22

Բայց իմանում էք ինչ կայ, թող խօսքը մեր մէ
մնայ—օտարները մեզ հետ այդպէս վարւելու, կա

ծես, իրաւունք ունին, քանի որ մենք ինքներս մեր ծիծաղաշարժ վարմունքներով, մեր երեխայական գործողութիւններով և մեր քաղաքական ծայրայեղ-տհասութեամբ՝ առիթ և զէնք ենք տալիս նրանց ձեռքը:

Հարիւրաւոր օրինակներից՝ վերցնենք միմիայն մէկը,—Թէկուզ Դաշնակցական «Հերոսների» գործած յարձակումը Օսմանեան բանկի վրայ:

Յարձակւողները, 'ի հարկէ, գիտէին,—իսկ եթէ չգիտէին՝ պարտաւոր էին անշուշտ տուգել, իմանալ,—որ Օսմանեան բանկը միջազգային հաստատութիւն է և միջազգային դրամներով է գործ կատարում:

Եթէ «Դաշնակցութեան» հերոսները յարձակւելով այդ հիմնարկութեան վրայ՝ ուզում էին բանկի տէրերի,—Եւրոպացիների,—ուշադրութիւնը Տաճկահայաստանի վրայ հրաւիրել, կամ նրանց ստիպել,—յայն դէպս նրանք **պարտաւոր էին անշուշտ յօդս ցնդեցնել բանկը**, ընչաքաղց և չահամոլ եւրոպացիների դրամնիրն և անձին խփել փոքր ինչ՝ համաձայն ռուսական առածին թէ „бей мужика не дублемъ, а рублемъ“:

Սակայն «Դաշնակցութեան» հսկաները այդ չարին, հասա՛ն:—Մաքսիմովին անսալով նրանք՝ յանկարծ մի գաճաճ դարձան, զէնքերը վար դրին, **վատաբար** յետ դարձան և'... և'... չոգենաւ նստելով Եւրոպայ, Մարսելիա փախան:

«Ռօդրիգօ, մեկնիր ինձ զարմանալի
Այս հանելուկը նախախնամութեան,
Հէր հազարաւոր հայրերից իսկ այս
Հայրը տուեց ինձ, և հազարաւոր,

Digitized by Google

Լաւ զաւակներից, նրան էլ այս որդիս.
Բնութիւնն իւր բոլոր տարածութեան մէջ
Չունի սրա նման հակադրութիւններ»։
(Շիլլեր. Դոն Կարլոս).

Շարունակենք։

Մի քանի տաք գլուխ երիտասարդներ, յիմարաբար ոչ միայն մի անհաջողին դաւադրութեան նկատմամբ կոյր գործիք և խաղալիք դարձան, այլ և իրանց կեանքը աւելի թանգ գնահատեցին, քան հազարաւոր անմեղ հայերի կեանքը։

Եթէ որ «Դաշնակցական» հերոսները միջազգային բանկը յօդս ցնդեցնէին, հարկաւ, հայերի կոտորածը դարձեալ անխուսափելի կը լինէր։ Բայց կարող էր պատահել, որ այդ ժամանակ եւրոպական դեսպանների նաւերը իրանց չէզօք դիրքից դուրս գալու ստիպուէին։

Եթէ այդ էլ չլինէր,—անշուշտ միջազգային քըննութիւն կսկսուէր և ոճիրի իսկական հեղինակները հրապարակ կուգային։

Մի խօսքով՝ եթէ հայերի համար դրանից ոչ մի օգուտ չդուրս գար,—աւելի ևս չէր դուրս գալ, քան ինչ որ եղաւ։

Թողնենք «Դաշնակցութեան» գործունէութիւնը Կովկասում։

Զէ

Մինչև 1903 թւականի կէսը՝ հայ և թուրք՝ քաղաքացին էլ, գիւղացին էլ, արհեստաւորն ու բանւորն էլ, վաճառականն ու ծառայողն էլ,—ամենքը, անխտիր ամենքը սիրով, եղբայրաբար ապրում էին Կովկասում միմեանց կողքին։

Digitized by Google

ժամանակ առ ժամանակ թրքաշատ այս ու այն գաւառում լոյս ընկած աւազակային Թուրք խմբերը՝ հաւասարապէս ատելի էին ինչպէս հայ, նոյնպէս և Թուրք ազգաբնակութեանը, վասն զի երկու ազգաբնակութիւններն եւս անխտիր ենթակայ էին նրանց յարձակումներին, նրանց կողոպուտներին։

ՁԸ

Թուրք և հայ հարևանութեան, դրկեցութեան ընտիր և ազնիւ օրինակը՝ նկատելի էր նա մանաւանդ Բագու քաղաքում և նրա շրջակայ գիւղերում, ուր քաղաքի միջին դասակարգը մեծ քանակութեամբ, ամառանոց էր դուրս գալիս ամեն տարի։

Մաշդաղա, Բզովնա, Շիվալան, Մարդաքեան, Բիլկեա,—սրանք զուտ Թրքաբնակ գիւղեր են՝ Բագւայ արևելեան կողմում, որոց մէջ ամառնային ամիսներումը վխտում ու վժժում էին հայ ընտանիքներ, կնանիք, աղջկերք և երեխաներ առանց տղամարդի, առանց տան մեծի։

Հայ տղամարդիկ իրանց ընտանիքը յիշեալ գիւղերն ուղարկելով՝ իրանք մնում էին քաղաքում, իրանց գործերի վրայ։ Եւ միմիայն կիւրակէներին ընտանիքներին տեսութեան էին գնում, իսկ երկուշաբթիներին դարձեալ քաղաք վերադառնում։

Եւ ոչ մի տարի, ոչ մի ամիս, ոչ մի շաբաթ և ոչ մի օր լսուած, կամ տեսնուած չէ, մի որ և է գիւղում, որ և է ամառանոցում, մի որ և է Թուրք՝ որ և է հայից մի բան գողացել է. կամ թէ՝ նրան անպատուել, նեղացրել է և կամ ծուռ աչքով վրան մըտիկ տուել։

Digitized by Google

Չ'մոռանանք, որ հայ ընտանիքների սեպհական կամ վարձովի ամարանոցների դռներն ու ցանկապատները, գիշեր-ցերեկ, բաց են եղել և, տօթալից գիշերներում, հայ ընտանիքներ՝ միայնակ կամ խմբովին ամբողջ ժամեր էին անցկացնում,—և այդ ամենայն ազատութեամբ և ապահովութեամբ,—ինչպէս գիւղերի հրապարակներում, նոյնպէս և բացօթեայ ընդարձակ այգիների ճեմելիքներում։

Մի և նոյն երևոյթը տիրում էր Բագու քաղաքի հայերի և Թուրքերի մէջ ևս։ Այնպէս երկու հարևաններն էլ իրաւունք ունէին միշտ և հանապազ բանաստեղծի հետ երգել թէ՝

«Ես ապրում էի խաղաղ—իմ նետը
Անտառի որսի վրայ էր միայն ուղղած,
Միտքս սպանութեամբ չէր ապականուած»։
(Շիլլեր, Վիլհելմ Տէլլ):

Եւ այս խաղաղ, եղբայրական՝ վայելուչ, այս իդիլլիական կեանքը Բագւայ և նրա շրջակայ հայերի և Թուրքերի մէջ՝ առ երևոյթս և առ ժամանակեայ չէր, այլ իսկական և տևական, որ ես վկայաբանում եմ «ոչ 'ի կայծ ընդոստուցեալ և ոչ 'ի լուր զարթուցեալ, այլ անձամբ անձին պատահեցի 'ի տեղւոջն և տեսի», ամբողջ 17 տարի, 1886—1903։

ԺԹ

Եկաւ 1903 թւականը, որոյ ամառը ինչպէս յայտնի է։ Բարձրագոյն հրաման դուրս եկաւ հայ եկեղեցական կալուածքները յարքունիս գրաւելու։ Եւ գրաւումը հետզհետէ տեղի ունեցաւ ժողովրդական յայտնի յուզումներով և սուր ընդհարումներով ոստիկանութեան և նոյն-իսկ զօրքի հետ։

Digitized by Google

ժողովրդական այդ յուզումների, այդ խիզախ բռնկումների, Դաւթի և Գողիաթի մենամարտութեան բուն հեղինակը ոչ այլ ոք էր, եթէ ոչ նոյն ինքը ժողովուրդը, նրա ազգային—կրօնական վիրաւորուած՝ բուռն զգացմունքը, տարիներից 'ի վեր նրա համբերութեան մոխրի տակ թագկացած կայծը, վրէժխնդրութեան հուրը, որ պետական անձին անվայել այնքան թեթեւամտութեամբ՝ բորբոքել էր. իշխան Գոլիցինը, որի երեւան ի վեր հայ ժողովուրդը երէկ էլ, այսօր էլ և վաղն էլ, միշտ և ամեն ժամանակ, և առանց խղճահարութեան ու առանց տարջանքի կամ զղջման կարող է բացականչել՝

»Դու վրդովեցիր խաղաղութիւնս,
Թունաւորեցիր անարատ միտքս.
Անսովոր բանին ինձ սովորեցրիր»:

Կովկասահայերի յուզումները պսակւեցին իշխան Գոլիցինի վրայ եղած սպանման փորձով, որոյ կատարողը,—ասում են,—Հնչակեան կուսակցութիւնն էր՝ յանձին ոմն Մհերի, որ, ինչպէս լրագիրներում գրուած էր, „դաշնակցութեան“ անդամներից մէկի ձեռքով յետոյ սպանւեցաւ:

Իւր անձին, իւր կոչման ու պատւին դէմ եղած այս վիրաւորանքն ու անարգանքը՝ իշխան Գոլիցինի մէջ էլ աւելի բորբոքեց հայատեցութեան ոգին, կիրքը:

Եւ ահա այդ օրւանից երևան եկաւ հայ-թրքական ընդհարումների դժոխային ծրագիրը Կովկասեան աշխարհում:

Այդ ծրագիրը՝ իւր էութեամբ՝ նոր չէր: Նա

ԴԱ

Ոստիկանութիւնը դաշնակցականների ամեն մի քայլը տեսնում, դիտում էր։ Նա շատ լաւ տեղեակ էր, թէ դաշնակցական երեկոյթներում ինչեր են կատարւում և ով ինչ է խօսում։ Բայց իրան այնպէս էր ձևացնում, իբրև թէ ոչինչ չէ տեսնում, ոչինչ չէ իմանում։

Իրանք միամիտ ժողովականներն էին, որ ամենևին չէին գլխի ընկնում, որ ամեն մի երեկոյթում ոստիկանութիւնը իւր յատուկ լրտեսներն է ունենում միշտ, նոյն իսկ երեկոյթներին համակրող, նրանում ջերմ մասնակցութիւն ցոյց տւողների թւում։

Եւ նրանք,— ժողովների կազմողներն իրանց միամտութեան մէջ այնքան առաջ էին գնում, որ պահանջում էին,— երբեմն նոյն իսկ սպառնում,— որպէս զի քահանաները ևս երեկոյթներին ներկայ լինէին, որ եթէ ոստիկանութիւնը յանկարծ ներս մտնի, քահանաները վկայեն, որ մկրտութեան կամ նշանադրութեան հանդէս են կատարում իբրև թէ։

ԴԲ

Քաղաքական որևէ աշխարհայեացքից զուրկ Բաքւայ Թուրքերի ռամիկ դասակարգը՝ չհասկանալով «Դաշնակցութեան» կազմած երեկոյթների իսկական նպատակը՝ կասկածում և տարակուսում էր։

Նրա կասկածը փարատում էին ոստիկանութեան

ր

րից։ Եւ ստուգել ու վերստուգել եմ այլ և այլ աղբիւրներից։— Ի վերայ այսր ամենայնի՝ եթէ իմ գրածների մէջ անճշտութիւններ կամ զրպարտութիւններ կան,— թող պատասխանը ինձ չվերագրւի, այլ նրանց, որոնք ինձ հաղորդել են։

յայտնի և գաղտնի ագենտներն, դրդռիչներն՝ բացատրելով իբրև թէ՝ հայերի այդ գաղտնի գործողութիւններն ուղղուած են Թուրքերի՝ իրանց դէմ։

Իբրև թէ՝ հայերը պատրաստում են իրանց սեպհական թագաւորութիւնը հիմնել Կովկասում և Թուրքերին դուրս քշել այնտեղից։ Եւ ուրիշ առասպելներ։

Երկու հարևաններին միմեանց դէմ գրգռելու, զինելու փորձն՝ արդէն տեղի էր ունեցել կառավարչապետի պալատում, երբ վիրաւորուած իշխան Գոլիցինը Աջառայի, Բագւայ և Գանձակի Թուրքերի ուղերձն ու պատգամաւորութիւնն էր ընդունում։ Մընում էր գրգռել ու զինել Թուրք ռամիկ դասը հայերի դէմ։ Իսկ դրա համար՝ գրգռիչների պատմած վերոյիշեալ առասպելներն էլ բաւական էին։ Եւ նա, Թուրք ամբոխը, հետզհետէ այն եզրակացութեան էր յանգում, որ, արդարև, և յատկապէս նրանց „Դաշնակցութիւնը“ մի ամենազօրեղ կուսակցութիւն է, որ ունի իւր զօրքերն ու զօրապետներն, իւր բանակներն իրանց ամեն տեսակ սպառազինութեամբ։

Թուրք հասարակ դասակարգը՝ գերմարդկային շնորք և ճարպիկութիւն էր գտնում այն հայ ահաբեկիչների մէջ, որոնք օրով-ցերեկով, քաղաքների յայտնի տեղերում, սպանում էին այս ու այն հարուստ հային, այս ու այն ծառայողին և խոյս տալիս ու ազատւում։

Եւ որովհետև հայ առաջնակարգ դասակարգի մարդիկ,—հոգևորականներ, վաճառականներ, ինտելիգենտներ իրանց կողմից ոչ մի միջոցի չէին ձեռնարկում այս կամ այն կերպով ոճրագործ դաշնակ-

ցականներին զսպելու, ուստի և Թուրք հասարակութիւնը կարծելով կարծում էր, որ „Դաշնակցութիւնը" ողջ հայ ազգն է ներկայացնում։ Եւ դաշնակցականների կատարած ամեն մի գործողութիւն ազգին էին վերագրում։

Այսպէս էր հասկանում և մեկնում իրերի դրութիւնը՝ մինչ օրս նահապետական կարգերով ու աւանդութիւններով ընթերցող մեր Թուրք հարևանը։

ՂԳ

Մի և նոյն հասարակ ժողովրդի կարծիքը յայտանում և պաշտպանում էին վերջերում՝ նաև Թուրք ինտելիգենտները, — խաղաղարար յանձնաժողովների անդամները, — գենեռալ նահանգապետի ներկայութեամբ։

Նրանք պարզ ի պարզոյ յանձնաժողովների հայ ինտելիգենտ անդամներին ասում էին՝ „դուք ամենքըդ էլ շատ լաւ ճանաչում էք ձեր դաշնակցական չէֆերին։ Եթէ նրանց բռնած գործերին չէք համակրում, կամ ինքներդ սանձեցէք նրանց և կամ իշխանութեանը յանձնեցէք։ Դուք այդ չէք անում, չէք ուզում անել. ընդհակառակը դուք նրանց նպաստում և հովանաւորում էք"։

Եթէ չեմ սխալւում՝ Թուրք ինտելիգենտները համանման կարծիք յայտնեցին նաև Փոխարքայի պալատում հայ-Թրքական համագումարի ժամանակ։

ՂԴ

Թուրքերի երևակայութեան վրայ աւելի ազդ[illegible] էին դաշնակցականների արած ցոյցերնի բանից այ[illegible]ու

Digitized by Google

այն ընկերի համար կատարուած հոգեհանգստեան կամ թաղման ժամանակ։

Այդ ծէսերի կատարել տալն 'ի հարկէ դաշնակցականների կրօնական զգացմունքի հետեւանքը չէր, այլ մի տեսակ ռեկլամ, մի. ցոյց։ Եւ իբրեւ այդպիսի մարդիկ աշխատում էին, որքան կարելի է, պերճ ու շքեղ կերպով կատարել.

Այդ ցոյցերից ամենավերջինը,—Միսակ անունով դաշնակցականի թաղումը,—որ Բագուի առաջին հայ թրքական ընդհարման նախօրեակին կատարուեցաւ, Նա մանաւանդ շատ լարեց ու գրգռեց Թուրքերին։

Եւ նրանց մէջ այլ եւս ոչ մի կասկածի տեղ չըթողեց, որ, ինչպէս գրգռիչներն նրանց ականջին շարունակ ասում ու պնդում էին,—իբրեւ թէ հայերը, արդարեւ, մի ինչ որ վատ բան մտածում են իրանց, —Թուրքերի դէմ։

Այժմ տեսէք, թէ ով էր հանգուցեալ Միսակը։

Նա դաշնակցական զինուոր էր։ Եւ, ինչպէս պատմում են, մի քաջ, սրտոտ երիտասարդ էր, Նոր-Բայազէտցի, ազգանունը՝ Ենգոյեանց, 25 տարեկան։

Մի անպիտան Թուրքի և մի անպիտան հայի մէջ մի գժտութիւն է ծագում անձնական, մասնաւոր պատճառաւ։ Հակառակորդները միմեանց սպառնում են։ Թուրք անպիտանը մի Ղօչիի է դիմում հային սպանելու, իսկ հայ անպիտանը Միսակին է ապաւինում՝ Թուրք հակառակորդին սպանելու կամ պաշտպանելու։

Մի օր Միսակը խփում Թուրք ղօչիին սպանում է։ Վերջինիս ընկերներից մինն էլ մի օր, խփում Միսակին է սպանում։

Digitized by Google

Ահա բոլորը։

Եւ առաւօտեան այդ Միսակի թաղումն էր, որ կատարւեցաւ 1904 թւի դեկտեմբերի 4-ին, ցոյց դեմօնստրացիու կերպով։ Բացի դաշնակցականներից յուղարկաւորութեանը մասնակցում էր կոմիտեակի հետաքրքրքիր ամբոխի հազարաւոր բազմութիւն։ Քաղաքում ընդունուած ընդհանուր սովորութեան հակառակ հանգուցեալի դիակը եկեղեցուց մինչև գերեզմանատուն՝ ձեռքերի և ուսերի վրա տարւեցաւ։

Գերեզմանոցում խօսւած ճառերի մէջ՝ այն էլ է առւել, որ Միսակի մահւան վրէժը պէտք է լուծել։

Թուրք հասարակութիւնը ափի բերան է մնացել անելով՝ մի՞թէ հայերի համար այդքան նշանակութիւն ունի մի դաշնակցական զինւորի սպանումը, որ ինքը առաջինն էր սպանել թուրքի, այն և ոչ թէ մէկի, այլ մի քանիսի։

Գրգռիչները,—պրովոկատորները.—հարկաւ, մեծապէս օգտւեցան Միսակի թաղման ցոյցով և վերին աստիճանի գրգռեցին թուրքերին,

Գրգռիչները թուրք խաւարամիտներին բացատրել էին, իբր թէ՝ դաշնակցականները երդւել են գերեզմանոցում. այնքան թուրք սպանել, որքան մազ կայ Միսակի գլխի վրայ։

Սա, ի հարկէ, բացարձակ ստութիւն ու զրպարտութիւն էր և է դաշնակցականների դէմ։

Բայց գիւանագէտների և գրգռիչների համար ե՞րբ և ո՞ր երկրում բարոյականութիւն և ճշմարտութիւն գոյութիւն ունեցել է, որ Բագւայ գրգռիչների համար ունենար։ Եւ ահա այս ու սրա նմա՞ն ա-

ռասպելների չնորհիւ՝ Բագւի մթնոլորդը դիւրավառ-նիւթով լցուած էր։

Մի կայծ էր միայն պակաս, որ հրդեհը բռնկի։

Եւ... 'ի մեծ հաճոյս իշխան Նակաշիձէի և նրա ադենտների, այդ կայծը ձգեցին հայերը,—կողմնակի մարդիկ արդեօք թէ դաշնակցականները.—ճիշտը չգիտեմ, միայն ինչպէս հայերի, նոյնպէս և թուրքերի հասարակաց կարծիքը այդ բանը «Դաշնակցութեանն» է վերագրում.

ԴԵ.

Ինչպէս ամենայն տեղ, նոյնպէս և Բագւում, սովորութիւն է, որ հայ ժողովուրդը կիւրակի օրերը յաճախում է եկեղեցի։—Բայց 'եկեղեցիների փոքրութեան պատճառաւ՝ չատ անգամ ստիպուած է դաւթում մնալ և մասնաւոր խօսակցութեամբ և զրուցատրութեամբ զբաղուել։

Այդ կողմից, Թիֆլիզի Վանքի աւագ եկեղեցուց յետոյ՝ աչքի է ընկնում Բագւայ ս. Լուսաւորիչ եկեղեցին, որ հայերի համար միակ եկեղեցին է և ինչպէս ինքը, նմանապէս և նրա դաւիթը չափազանց փոքր են ժողովրդի համեմատութեամբ։

Գաւթի հարաւային դրան կից՝ տախտակաշէն մի փոքրիկ խանութ կայ, որ երեցփոխանը վարձով է տալիս։ Խանութում բացառապէս գրքեր և լրագիրներ են վաճառւում։

Թէ այդ խանութի վարձողը և թէ քաղաքի չըրջիկ գրավաճառներն ու լրագրավաճառներն՝ կիւրակէներում գաւթի պատերին, թէ դրսի, թէ մանաւանդ ներսի կողմից, չարում են իրանց ծախու ապ-

Digitized by Google

րանքներն,—գրքոյկներ, լրագիրներ, ալբոմներ, գանազան գործիչների պատկերներն։ Այդտեղ, գաւթում, ցրւում են և՛ վաճառականների յայտարարութիւնները և՛ քաղաքական կուսակցութիւնների լեգալ և անլեգալ թռուցիկներն ու կոչերը։

Այսպիսով Բագւայ հայոց եկեղեցւոյ գաւիթը՝ կիւրակի օրերին՝ կատարեալ վաճառատեղ է դառնում, որ հեռաւոր կերպով յիշեցնում՝ է Քրիստոսի ժամանակ Երուսաղէմի տաճարի գաւիթներում կատարւած գործողութիւնները։

Տողերիս գրողը շատ անգամ ասել և կրկնել է, ում որ անկ է, որ ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ գաւիթը պրովոկացիայի համար ամենայարմար վայր է ներկայացնում, իսկ նրանում տեղի ունեցած առևտուրը պրովոկատորների առաջ միշտ լայն ասպարէզ է բաց անում։—Բայց մեզ չեն լսել։

Փոյթ չէ, տայ Աստուած, որ մենք անտեղի և աւելորդ երկիւղ լինենք կրելիս։—

ԴՁ

Ինչպէս ամեն տեղ և ամեն ազգի ու հասարակութեան մէջ, նմանապէս և Բագւի ու նրա ազգաբնակութեան, ուրեմն և հայերի մէջ վերջին տարիներում՝ զէնք կրելն անհրաժեշտութիւնից առաւել մօդա, նորաձևութիւն է դարձել։

Զէնք կրում է, ինչպէս իսկական կարիք, պէտք ունեցողը, կրում է և նա, որ 10—30—50 րուբլի կարող է տնտեսել, շատ անգամ բերանից կտրելով։ Զէնք կրում է և՛ աշակերտը և՛ պատանեակը։

Երբ այս այսպէս է, բնական է, որ Հայոց եկե-

դեցւոյ գաւիթում խառնուած խայտաճամուկ բազմութեան մէջ եւ զէնք կրողներ կարող են լինել։ Եւ անշուշտ կան։

Մենք գիտենք նոյն իսկ, որ վերջերումս ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ գաւիթում երկու հակառակորդ խմբակների մէջ զինեալ ընդհարում էր լինելու։

Բարեբաղդաբար հակառակորդների բանականութիւնը թէ կրօնային զգացմունքը՝ թոյլ չտւեց այդ աստիճան արատաւորելու ազգային եկեղեցւոյ պատիւը, նրա անունը, և վայնասուն ու իրարանցում ձգելու հարիւրաւոր և ամեն հասակի ու սեռի բազմութեան մէջ։

Մենք համոզուած էինք, որ հայ մարդը՝ ով ուզում է լինի, թէկուզ միանգամայն անկրօնին և անաստուածին մէկը՝ իրան թոյլ չի տայ իւր ազգակից հակառակորդի վրայ կրակ բաց անել եկեղեցւոյ գաւթում, նրա շուրջը։

Սակայն մենք համոզուած էինք նմանապէս, որ Բագւում չարունակ գործող ու ներգործող անարգ պրովոկացիան՝ ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շուրջը, մի օր, պէտք է, որ արիւն թափել տայ, ինչպէս և արաւ 1905 թւի փետրւարի 5-ին։

Դէ

Այդ օրը կիւրակի էր. կէս օրւայ պատարագը դեռ չվերջացած՝ եկեղեցւոյ գաւթից դուրս, արևմտեան կողմում, մի դէպք է պատահում, որ այլ և այլ կերպ է պատմւում։ Հաստատը միայն այս է, որ այդ դէպքը սերտ կապ և առնչութիւն ունի Մի-

Digitized by Google

տակի սպանման և այդ սպանումը յառաջացնողը մաս-նակի, անձնական հաշւի հետ։

Եւ ուրեմն հասարակական նշանակութիւն չպիտի ստանար, բայց, դժբաղդաբար ստացաւ։—

Բագւում բաւականին յայտնի, նաւթային գործով պարապող մի թուրք կար,—Աղա Ռիզա Բաբայեվ։—

Պատմում են թէ այս մարդը՝ եկեղեցւոյ պարս-պի կողքովն կառքով անցկենալիս երեք անգամ ատրճանակով կրակ է արձակում բազմութեան մէջ կանգնած մի հայ զինւորի վրայ և նրան ոտքից վի-րաւորում։

Հայ տղայքը բռնում են Բաբայեվին և ոստիկա-նին յանձնում, որ, սակայն, նրան չէ կալանաւորում։ —Եւ Բաբայեվը կառքի միջից ատրճանակ արձակե-լով օդի մէջ սկսում է փախչել։ Հայ տղերանցից մինը ատրճանակով թուրքի ճակատին է խփում և կառքից վայր գլորեցնում։ Մի երկու ուրիշ տղայք էլ գալիս են և բերութով դիակը ծակծկում, մի քանի տեղից կտրատում։

Մօտակայ բազարից վրայ են հասնում 5—10 թուրքեր և Բաբայեվի արնաշաղաղ դիակը ուսերի վրայ դրած՝ ման ածելով մի երկու թրքական փողոց-ներում «վրէժ, հայերից վրէժ» են աղաղակում։

Թուրք խուժանը գրգռւում կատաղում է, բայց սպանման տեղը զօրքերով (հեծեալ կօզակներ) շրջա-պատւած տեսնելով՝ սիրտ չէ անում յարձակում գործել հայերի վրայ։—

Այդ ես իմ աչքերով տեսայ, երբ թուրքերի և զօրքի մէջ եղած «Վռանկելսկի փողոցով անցնում էի։ Իրիգնապահին զինւորները քաշւեցան։

Այդ բանից, կարծես, սիրտ առած՝ «Հայկական և Վօրօնցօվսկի» կոչուած փողոցներում ատրճանակի ճարճատիւններ լսուել սկսան և մինչև ժամը 8-ը արդէն 26 հայեր վիրաւորուած էին։

—Հէնց բաղնիսի դռան առաջ,—ասաց ինձ «Ֆանտազիա» բաղնիսի հայ կապալառուն,—քառորդ ժամ առաջ 6 հայի վիրաւորեցին թուրքերը։

Եւ, ճշմարիտ, վերջիններս շատ և շատ գրգռուած խօսում էին փողոցներում, երբ ժամը 9-ին ես բաղնիսից տուն էի վերադառնում։ Այդ ժամանակ ես թուրքայ թաղումն էի ապրում։—

ԿԸ

Գիշերուայ սպանութիւններից տեղեկութիւն չունենալուցն էր անշուշտ, որ հետևեալ օրը, փետրուարի 6-ին, հայերը՝ ամեն ոք գնում էր իւր գործին, գոնէ երբ ես դպրոց էի գնում, հայի խանութները բաց էին 3 մեծ փողոցների վրայ էլ։—

Բայց ժամը 10-ին յանկարծ ատրճանակների և հրացանների ճարճատիւններով քաղաքը լցուեցաւ։—

Պարզ երևում էր, որ գիշերը խորհրդակցութիւն է եղել՝ հայերին յանկարծակիի բերելու։

Դպրոցից մինչև տուն, երեք մեծ փողոցներ, ոտքով անցայ (կառքերը փախել էին) և ոչ մի փողոցում, ոչ մի անկիւնում սովորական ոստիկաններից ոչ մէկին չհանդիպեցայ։

Փողոցները միանգամայն դատարկուած էին մարդիկներից։

Իմ հարևան ծանօթ թուրքերն յորդորում, խոր-

հուրդ էին տալիս ինձ աճապարել և շուտով տուն մտնել։—

Նրանք անիծում էին «սաբաբին»—պատճառին, առանց հասկանալու սաբաբի ով լինելը։

Մինչև ժամը 3-ը, ուրիշների նման, ես ինքս էլ փակուած մնացի տանը։

Ամբողջ քաղաքը մեռած էր թւում։ Միայն բոպէ առ բոպէ օդում լսուած հրազէնների մասնակի ճար-ճատիւններն և համազարկերն՝ ցոյց էին տալիս, որ մարդ գազանները այնտեղ, հայկական փողոցներում, միմեանց կոտորում, փողոտում են։

Այլ ևս անկարող լինելով տանը նստելու, ես ինձ մի կերպ փողոց ձգեցի և մօտայ հայկական թաղը,— Կրասնօվոդսկի, Տորգովի, Պրաչեչնի և Մարինսկի փողոցները միմիայն՝ սոսկ ստուգելու համար, թէ ինչեր են կատարւում։

Եւ, Աստուած իմ, ամեն մի քայլափոխում գրե-թէ՝ մի քանի դիակներ և՛ հայի և՛ թուրքի և ա-մենքն էլ անխտիր հասարակ, բանւոր, օրական վաս-տակով ապրող ջրկիրներ, մշակներ, գործակատար-ներ *)։

«Եւ հեծեցի, և՛ գնացին արտասուք» **)։ Հայ մարդիկ՝ 5—6 հոգի, այս ու այն փողոցի անկիւ-նում, այս ու այն տան շէմքում ծուարած, շուարած մնում են և ոչ ասելիքներն են իմանում, ոչ էլ անե-լիքները։

---

*) Թրքական թաղերում ապրող հայերի մասին ոչ մի տեղեկութիւն կարելի չէր իմանալ։

**) Նարպէյ։

Digitized by Google

Ինքնապաշտպանութիւնը, ինչպէս ասացի, դեռ կազմակերպուած չէ։

Պատահեցայ յեղափոխական չէֆերից մէկին։

Նա ինձ հաւատացրեց, որ հէնց այս գիշեր դաշնակցականները ու հնչակեանները միասին խորհրդակցելու են՝ ինքնապաշտպանութեան առթիւ։—

ԴԹ

Մալականի փողոցում ծխականներից մէկի տանը 1/4 ժամ հանգստանալով՝ ես տուն դարձայ՝ հայկական միւս փողոցներով։ Եւ մի և նոյն տեսարանները հանդիպեցայ, ինչ որ նախկին փողոցներում։

Իմ բնակարանի,—Զաւրովի փողոցի, անկիւնում ես 4 թուրք զօչիների հանդիպեցայ, որոնք մի թուրք թաղապահ ոստիկանի և 2 թուրք քաղաքապահների,—городовой, հետ խօսում էին։

Նրանք ինձ ճանապարհ տուին։ Ես բարևեցի և անցկացայ։

Մինչև փետրուարի 9-ը, երեկոյեան 3 ժամը ես այլևս տանից չեմ դուրս եկել։—Լսածի և հաւաստեաւ չեմ կարող ասել, թէ քաղաքում ինչ է կատարուել։

Ժամը երեքին յանկարծ հաշտութեան աղաղակները լսեցան և 3 օր իրանց տներում փակուած ժողովուրդը դուրս լցուեցաւ։

Սրբազան Առաջնորդի հրամանաւ՝ հետևեալ օրը ես գնացի նահանգապետին և պրօկուրօրին՝ հոգևորականութեանը դիւրութիւններ տալու՝ դիակները թաղելու նկատմամբ։—

Դատաստանական քննչի որոշած ժամին գնացի

քաղաքային հիւանդանոցը և դժբաղդութիւն ունեցայ կոյտերի՛, դիակների կոյտերի՛ հանդիպելու, ամենամեծ մասամբ հայերի։

Գնայի գերեզմանատուն և այնտեղի անատոմիկական սենեակում և նրա շուրջը՝ մի և նոյն աղէխարշ տեսարանը։—

Երեք օրուայ մէջ՝ սպանուած հայերի թիւն էր 196 հոգի, որոց դիակները հոգևորականութեան ձեռքով թաղուեցան։

24 վիրաւորուած հայեր էլ տներում են վեր ընկած։ Նրանց մեծագոյն մասի վէրքերը բուժելի են։

Այսպէս՝ հայ-թրքական **առաջին ընդհարումը**՝ Բագուայ հայութեան վրայ նստեց աւելի քան 200 հոգի մարդկային կեանքով։

Բացի դրանից հրձիգ եղան 7 հայկական տներ, որոնցից երեքը հոյակապ, եռայարկ տներ էին։

Իսկ կողոպտումների և աւարառութիւնների ոչ հաշիւ կայ և ոչ համար ու արժէք։

Եւ այս ամենը՝ ակնյայտնի և բացարձակ հետեւանք էր կառավարութեան քաղաքականութեանը.*)

Եւ հէնց այդ քաղաքականութիւնն էր և եթ, որ Թուրք ազգի տականքը կազմող, մեծ մասամբ

---

*) Ծանօթ. Իմ բնակած տան ներքին յարկում ոստիկանական մի Թաղապետ էր ապրում, որ այսօր վախճանուած է։

Փետրուարի 8-ին, պատասխանելով իմ հարցին Թաղապետը յայտնեց, որ եթէ Նահանգապետը (իշխ. Նակաշիձէն) իրաւունք տայ՝ ոչ թէ ոստիկանական ամբողջ կազմը, այլ 2—3 Թաղապետներ և եթ կարող են Թուրքերին զսպել և կարգն ու խաղաղութիւնը վերականգնել քաղաքում։

—Բացի ոստիկանական կազմից՝ քաղաքում որքան զօրք կայ, հարցրի ես։

Digitized by Google

գիւղերից քաղաք թափուած, խաժամուժ ամբոխին Հայերի և նրանց տների վրայ քշեց։

Գալով Բագւայ Թուրք ազգաբնակութեանը,—յանուն արդարութեան այս պէտք է արձանագրենք,—որ նա, այդ ազգաբնակութիւնը, ոչ միայն չէր մասնակցում ցեղակից սիրքօրների խժդժութիւններին, այլ և ամեն կերպ հովանաւորում և պաշտպանում էր իւր հարևան Հայերին ամեն մի փողոցում և ամեն մի տնում գրեթէ։

Եթէ Բագւայ Թուրք ազգաբնակութեան նոյն իսկ ամենաչնչին մասը՝ իրանց անարգ ցեղակիցների օրինակին հետևէին,—այսօր Բագւում ոչ հայ մնացած կը լինէր և ոչ էլ հայի կայք,

Ծ

Բագւի փետրվարեան կոտորածը, ինչպէս յայտնի է, նախադուռ եղաւ նոյն քաղաքի և առհասարակ Կովկասի հայ-թրքական ընդհարումներին, որոնք՝ որոշ սիստեմով և տակտիկայով կառավարութիւնը առաջ էր բերում երբեմն այստեղ և երբեմն այնտեղ։ Եւ է որ յօգուտ Թուրքերին և է՛ որ յօգուտ Հայերին։ Միմեանց հետ կռւող, միմեանց ջլատող ու թուլացնող

—Բացի տեղական պահնորդ զօրքից, քաղաքում կայ նաև 300 ձիաւոր կօզակների մի գունդ։

Թող ինձ 25 կօզակ տան և կը տեսնէք,՝ թէ ինչպէս ձեռաց կը խաղաղացնեմ քաղաքը,—պատասխանեց Թաղապետը՝ ազնիւ խօսք առնելով ինձանից և ինձ հետ եղող 2 Հայերից, որ մեր լածները հրապարակ չենք հանել։—

Բայց մի՞թէ իմ հարևան Թաղապետն էր միայն այդպէս խօսում, ոչ, այլ ամեն մի Թաղապետ, նոյն իսկ քաղաքի ոստիկանապետը։

Սենատօր Կուզմինսկին իւր կատարած քննութեամբ

Digitized by Google

կողմերից ոչ մէկն էլ գլխի չէր ընկնում, թէ այս՞ հողը «ուստի՞ գայ և յո՞ երթայ»։

Իսկ եթէ գլխի ընկնողներ ևս կային՝ յանձին թուրք բեգերի և հայ դաշնակցական չէֆերի,— նրանք էլ, դժբաղդաբար, այնքան կրքոտուած ու կուրացած էին, որ՝ հակառակ իրանց ցանկութեան՝ կառավարութեանը նպաստում էին կրակի վրայ շարունակ իւղ ածելով։

ԾԱ.

Շարունակ գրեցին ու ասացին, այժմ էլ գրում ու ասում են՝ նոյն իսկ հակադաշնակցականները, թէ այդ կուսակցութիւնը հայ-թրքական ընդհարումների ժամանակ՝ մեծապէս օգնեց հայերին՝ զինելով նրանց և ինքնապաշտպանութեան մղելով։ Դա ճշմարիտ է։ Սակայն ճշմարիտ է և այն, որ եթէ «Դաշնակցութեան» զինեալ միջամտութիւնը չլինէր, հայ-թրքական ընդհարումները այսքան ծաւալ թերևս չստանային։

„Դաշնակցութեան“ ղեկավարները, որոնք իրանց զարգացմամբ և աշխարհայեացքներով անտարակոյս բարձր են թուրք ո՛չ ինտելլիգենտ բեգերից և աղալարներից՝ հէնց առաջին անգամից պիտի ճանաչէին ընդհարման բուն հեղինակին և նրա յետին նպատակը

ինչպէս յայտնի է՝ ոստիկանութեանը մեղաւոր դուրս բերեց և դատի ենթարկեց։

Նահանգապետը,—հանգուցեալ Նակաշիձէն,—Կուզմինսկուն տուած իւր բացատրութեան մէջ՝ նոյնպէս մեղադրում էր ոստիկանութեանը։

Միշտ այդպէս է աշխարհի բանը։

Տկարը զօրեղի առաջ միշտ մեղաւոր է դուրս գալիս։

Digitized by Google

ըմբռնելով՝ աշխատէին խուչընդոտ հանդիսանալու ընդհարումներին։

Սա անհնարին գործ չէր, մանաւանդ սկզբներում։

Իսկ եթէ „Դաշնակցութիւնը“ չէր կարող կամ չէր կամենում չարիքի առաջն խաղաղութեամբ առնել, յայն դէպս առաւել լաւ կանէր, եթէ որ ձեռընպահ, չէզօք մնար։

Սա գոնէ չարիքների փոքրագոյնը կը լինէր մեզ համար։

—„Ձեռնպահ, չէզօք“ բառերիս վրայ, գիտեմ, շատ շատերը ծիծաղելու են։ Սակայն մի շտապէք։ Շուտով ես ձեզ կապացուցանեմ, որ „Դաշնակցութիւնը“ իսկապէս ձեռնպահ և չէզօք էր մնում, երբ իրական ոյժի էր հանդիպում և իրան համար վտանգ էր տեսնում։

Արդ՝ ես էլ ասում եմ, եթէ. որ այդ այդպէս էր լինելու,—ապա ուրեմն աւելի լաւ չէր, եթէ որ „Դաշնակցութիւնը“ սկզբից և եթ ձեռնպահ, չէզօք մնար։ Եւ ոչ թէ հուրը արծարծէր և ինքը պոկ գար, փախչէր։

Դրա փայլուն օրինակը մենք տեսանք Պօլսոյ Օսմանեան բանկի վրայ եղած յարձակման ժամանակ։ Շուտով կը տեսնենք և ուրիշ օրինակներ։

Կրկնում եմ աւելի լաւ կանէր «Դաշնակցութիւնը», եթէ որ սկզբից և եթ չէզօք մնար։

Սակայն նա այդ չարաւ, ոչ էլ խաղաղ ճանապարհների դիմեց, այլ, ընդհակառակը, մեծ ոգևորութեամբ պատերազմի դաշտը նետուեց ինքը և իրան հետ նետեց նաև հայ ժողովրդին, յատկապէս հայ գիւղացուն։ Առանց սակայն 'ի հաշիւ և 'ի քննութիւն առնելու, թէ դրա վախճանը ինչ է լինելու և ուր է յանգելու։

„Այդ վախճանը,—որ կը լինի ժողովրդի անտեսական վիճակի լիակատար քայքայում, նրա բարո-

Digitized by Google

յական կքումն ու յուսահատութիւնը և նրա վատ, ստոր բնազդ և հակումների յառաջ գալը,—եթէ ոչ այսօր, անշուշտ վաղը կամ միւս օր հայ ազգի առաջ կը դրւի իւր ամբողջ մերկութեամբ։

Եւ թող այդ ազգը և նրա ներկայացուցիչները, նրանց թեթևամիտ պետերն՝ բաց աչքով այն ժամանակ թող տեսնեն թէ ինչ և որքան է նստել իւր վրայ՝ «ազգային ինքնապաշտպանութիւն» կոչւած՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» աւանտիւրան։

ԺԲ

Թէ «Դաշնակցութեան» գործունէութեան մէջ առհասարակ՝ աւանտիւրան շատ մեծ դեր է խաղացել,—դրա համար փաստեր շատ կան թէ տաճկահայերի և թէ ռուսահայերի կեանքում։

Վերցնենք դրանցից մի երկուսը, ամենից թարմ փաստերը, որոնք մեր կողքին և մեր աչքի առաջ կատարւեցան.

Բաղա գիւղի գլխին եկած զուլումը՝ ամենքին յայտնի է.

Այդ գիւղի մասին՝ մեր լրագրութիւնում,—յաւյիշում եմ,—շատ բան գրւեցաւ և բաւականին մանրամասն կերպով։

Սակայն չգիտեմ գրողների կամ տեղեկատուների անտեղեակ լինելուցը արդեօք, թէ թթու ազգասիրութիւնից. և կամ,—որ ինձ աւելի հաւանական է երևում,—«Դաշնակցութեան» երկիւղից՝ մի գլխաւոր հանգամանքի մասին մի տող անգամ չգըրւեցաւ, չյիշւեցաւ գէթ հարևանցօրէն։

Բանը նրանումն է, որ Բաղան ամեն կողմից շրջապատւած է թրքական գիւղերով։

Վերջիններիս թւումն է և կալւածատէր Ալլահ-եարբէգ Զուլգուղարովի տունը։

Digitized by Google

Անցեալ 1905 թուականի նոյեմբերի սկիզբներին՝ «Դաշնակցութեան» զինուորներն՝ հատ ու կենտ ըսկըսում են մուտ ու ել գործել յիշեալ գիւղը՝ ժողովրդին զինելու նպատակաւ։

Բաղդայի հարևան Թուրքերը, որոնք իրանց սովորական գործերի համար՝ միշտ գնում գալիս են յիշեալ գիւղը՝ տեսնելով հայդուկների գործունէութիւնը սկսում են կասկածել։

Լուրը հասնում է Ալլահեարբէք Զուլգուդարովին։

Սա մի քանի մարդիկ է ուղարկում Բաղդա և հայ գիւղացիներին խորհուրդ տալիս, որ հայդուկներին չթոյլ տան ժողովրդի միտքը պղտորելու և հարեւանների մէջ փոխադարձ կասկածներ զարթեցնելու։

Զուլգուդարովը յորդորում է հայերին՝ Թուրք հարևանների կողմից միանգամայն միամիտ և ապահով լինել, որ նրանք նախայարձակ չեն լինել հայերի վրայ։ Եւ թէ՝ ինքը իւր բոլոր ազդեցութիւնը 'ի գործ կը դնէ, որ հարևանների մէջ ընդհարում տեղի չունենայ։

Սակայն գիւղում եղող հայդուկներն՝ նախատինքով և սպառնանքով բէգի մարդկանց յետ են դարձնում։

Մի քանի օրից յետոյ՝ հանդիսաւոր կերպով Բաղդա է մտնում «Դաշնակցութեան» Գ... խմբապետը 80 հոգի ձիաւոր, սպառազէն հայդուկներով։

Ճաշելուց և գիւղացիներին սիրտ տալուց յետոյ՝ խումբը գիւղից մեկնում է և Թրքաց գիւղերի միջովն անցնում է դաւուլ զուռնայի նուագածութեամբ։

Բացի 'ի դրանից՝ Ալլահեարբէգի տան առաջ՝ խմբապետ Գ... մի ցոյց է անում։

'Ի նշան իրանց ուժի՝ նա հրամայում է խմբին օդի մէջ մի երկու անգամ համազարկ տալ իրանց զէնքերից։ Եւ ապա հեռանում է, անցնելով Տամշաղնի վիճակը։

Digitized by Google

Այդ տմարդի ցոյցի հետեւանքը յայտնի է արդէն։

Ամանտուրիստ խմբապետի հեռանալուց երկու օր յետոյ՝ Թուրքերը յարձակւում են Բաղա գիւղի վրայ։ 300 տնից բաղկացած գիւղը քարուքանդ է լինում, լիուլի կերպով կողոպտւում ու Թալանւում. 135 հոգի սպանւում են, իսկ մնացեալները ցրիւ են գալիս։ Եւ մինչեւ այսօր Թափառական գիւղից գիւղ և քաղաքից քաղաք են շրջում և... մուրացկանութեամբ ապրում։ Եւ վայ այդ ապրելուն։

Այս պատմութիւնը ինձ արել է մի բանիբուն, անկողմնապահ և ականատես անձն, որին չհաւատալու ես ոչ մի հիմք չունիմ։

—Այժմ «ասացէք, եղբարք, հայեր», աւելի լաւ չէր, եթէ որ «Դաշնակցութիւնը» Բաղայի նկատմամբ ձեռնապահ, չէզօք մնար։

Ինչ և իցէ։

ԾԳ

Հիմի պատմեմ այն, ինչ որ ես իմ աչքովս եմ տեսել։

Յայտնի է թէ՝ հոկտեմբերի 17-ի Հրովարտակը ինչ մեծ ոգեւորութիւն առաջ բերեց ամեն տեղ։

Ուրիշ քաղաքների նման՝ Բաքուն էլ յետ չ՚մնաց ընդհանուր ցոյցերից։

Նրա ամբողջ ազգաբնակութիւնն էլ՝ հայ, Թուրք, ռուս, աշակերտ և աշակերտուհի,—ամենքը, անխտիր, խումբ խումբ անցուդարձ էին անում քաղաքով, որոյ կենդրոնավայրը՝ Պարապետ կոչուած մեծ հրապարակը՝ գըտնւում է ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ հարաւային կողմում։

Հոկտեմբերի 18-ին այդ հրապարակի վրայ ձեւաց երկու ամբիոններ էին շինուած։

Մէկի վրայից ճառախօսում էր մի Թուրք բըժիշկ՝ մայրենի լեզւով։ Միւսիցը՝ մի ինտելիգենտ հայ երիտասարդ՝ ռուսերէն։

Հրապարակում ասեղ գցելու տեղ չկար։ Երկու ճառախօսին էլ ես ուշի ուշով լսեցի։

Հաւատացնում եմ ձեզ՝ որքան որ Թուրք ինտելիգենտի ճառը՝ թէ բովանդակութեամբ և թէ արտայայտման ձևով իմաստալից էր և փայլուն, այնքան Հայ ինտելիգենտի ճառը՝ անփայլ, թեթև էր իւր անմիտ և սին բացականչութիւններով և երեխայական յոխորտանքներով։

Չնայած որ ոչ միայն ռուս ունկնդիրների, այլ նաև հայերի մէջ դժգոհութեան նշաններ էին արտայայտւում և նոյն իսկ քրթմնջող ռուսներ եղան, այնուամենայնիւ պ. ճառախօսը զօռ էր տալիս իւր հողմարածութիւններին։

—Սա էլ երէկւայ ցանցառիցը պակաս չի եղել, ասաց ինձ՝ կողքիս կանգնած մի հայ։

—Մի՞թէ երէկ էլ ճառեր են խօսել այստեղ, հարցրի ես։

—Այստեղ ոչ, այլ ընդհանուր նահանգապետի տան առաջ, պատասխանեց խօսակիցս և հետևեալը, պատմեց։

«Ամէն ազգի, հասակի և սեռի մեծ բազմութիւն երէկ գնում էր այցելութիւն բանտարկեալներին։ Ընդհանուր նահանգապետի դռան առաջ՝ բազմութիւնը կանգ առաւ։

Գեներալ Ցադեևը՝ դուրս եկաւ պատշգամբը։

—Շնորհաւորեց ժողովրդին կայսերական հրովարտակի առթիւ. յայտնեց, որ շատ բանտարկեալներին նա արդէն բաց թողնելու հրաման արձակել է, իսկ որոց մասին որ ինքը իրաւունք չունի՝ հեռագրով կը միջնորդէ, ուր հարկն է, որ նրանք էլ ազատւին։ Իսկ ինքը ինքնագլուխ կարող չէ։ Գեներալը յարգելով ժողովրդի խնդիրը՝ հրամայեց, որ զին-

Digitized by Google

ւորական նուագախումբը ժողովրդի հետ շրջի քաղաքում 'ի նշան ուրախութեան։

Այս միջոցին ահա,—աւելացրեց խօսակիցս,—պ. Բ... երիտասարդը յանկարծ սկսեց ռուսերէն լեզուով բարձրաձայն հայհոյել Ցադեւեվին տմարդի և գռեհիկ բառերով և պահանջելով, որ նա «շուտով ռադ լինի, կորչի Բագւից։

Ծերունի Ցադեւեվը երեսը շուռ տուեց և տուն մտաւ։

Մի րոպէ մարդիկ սկսեցին միմեանց հետ փըսփսալ, սակայն, թափօրը տեղիցը շարժւեցաւ և ցընծութեան աղաղակները դարձեալ օդը թնդացրին։

—Ասած է, սիրելի ընթերցող «գիժը հորը մի քար է ձգում. խելօքները հաւաքւում և դուրս հանել չեն կարողանում»։

Թէ Բ.... երիտասարդի և թէ Պարապետի ճառախօսի վարմունքները, 'ի հարկէ պախարակելի են։

Սակայն երկու մասնակի անձինքների այդ վարմունքները չէր, որ Բագւի հայութեանը հոկտեմբերի 20-ին մի նոր աղէտի ենթարկեց, այլ «Դաշնակցութեան» ցոյցը,—նրա մի նոր աւանտիւրան։

ԾԴ

Հոկտեմբերի 19-ին ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շուրջը և նրան կից Պարապետ կոչւած հրապարակում մարդկանց հոծ բազմութիւնից, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չկար։

Յանկարծ Գօլիւբաքինսկի փողոցի ծայրում երևեցաւ դաշնակցականների թափօրը, անցնելով Ստանիսլաւի, Տելեֆօնի, Մարսկոյ և Տօրգօվիյ հայաբնակ փողոցներով։

Թափօրը բաղկացած էր հազարաւոր մարդկան-

Digitized by Google

ցից, որոց մեծ մասը կողմնակի, հետաքրքիր անձինք էին 'ի հարկէ։

Թափորի առաջից գնում էին դաշնակցական զինւորներն՝ կրծքերի և թևերի վրայ կարմիր ժապաւէններ կրելով։

Զինւորների առաջից գնում է նրանց զօրավարը՝ հեծած ձիու վրայ, որոյ բաշերն նոյնպէս զարդարւած էին կարմիր ժապաւէններով։

Մի քանի ձողերի կպցրած դրօշակների վրայ՝ մեծ-մեծ տառերով գրւած էին «Դաշնակցութեան» տիտղոսը։

Մի քանի այլ ձողերից կախ արած դրօշակների վրայ էլ՝ գրւած էին «Դաշնակցութեան» այլ և այլ կօմիտետների անունները։

Դրանց ամենի մէջ տեղում տանում էին հանգուցեալ Քրիստափոր Միքայէլեանցի լուսանկար, ծաղկապսակ պատկերը,

Պէտք է ասած, որ, առհասարակ, թափորը չքեղ էր և ճաշակով կազմւած։ Եւ նա որոշ տպաւորութիւն թողեց ժողովրդի վրայ, ինչին որ ձգտել էին անշուշտ թափորի կազմողները։

ԺԵ

Եկեղեցւոյ հարաւային կողմում թափորը կանգառաւ... դաշնակցական զօրավարը մի թեթև զօրախաղ կատարեց,—աջ... ձախ... յառաջ... յետ... և այլն։

Զօրախաղը վերջացաւ։

Ամբոխն չլինելու պատճառաւ՝ մարդկանց ուսերի վրայ բարձրացաւ մի դաշնակցական պարոն և սկսեց խօսել, կոկորդը պատռելու չափ բարձր ձայնով։ Նա խօսում էր անկեղծօրէն, մոլեռանդօրէն։

Գովում և գովաբանում էր «Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը» և դատապարտում ու դատափե-

Digitized by Google

տում՝ էր այն ամենը, ինչին որ ինքը չէր համակրում կամ՝ չէր ըմբռնում։

Անկիրթ և պոռոտախօս, ժպիրհ մարդու տպաւորութիւն թողեց պ. ճառախօսը ինձ վրայ։

Նրան յաջորդեց մի այլ ճառախօս, որ թէև առաջինից փոքր ինչ չափաւոր էր երևում, բայց սա էլ ուրիշ տեսակ կարմիրներից էր։

Վերջ 'ի վերջոյ Թափօրը շարժուեց դէպ 'ի «Հայոց փողոցի» ծայրում գտնուած բանտը՝ բանտարկեալներին այցելելու արդեօք թէ ազատելու՝ չգիտեմ։

Մի ժամ չէր անցած, որ բանտի կողմից հրացանների համազարկի ճարճատիւններ լսուեցան յանկարծ։

Պարզուեցաւ, որ բանդապահ զինուորները՝ ժողովրդի վրայ կրակ են բաց արել։

Մի րոպէում դաշնակցական Թափօրի հետ՝ փողոցները և հրապարակի վրայ գտնուած ժողովուրդն ևս ցաք ու ցրիւ եկաւ։

Թափօրի մարդկանցից 18 հոգի վիրաւորուած են եղել։

ԾԶ

Սակայն չարիքը դրանով չվերջացաւ:

Բանից դուրս եկաւ, որ «Դաշնակցութեան» այդ Թափօրը ամենայարմար առիթ է տուել դաւադիրներին, պրովօկատորներին՝ հայերի դէմ այս անգամ գրգռելու արդէն ռուս ամբոխին, և ռուս հայրենասէրներին, որոց աչքում մեռած Քրիստափոր Միքայէլեանի պատկերը՝ դարձել էր Հայոց կենդանի Թագաւորն, որոյ զօրքն ու զօրավարը ամբոխը արդէն իւր աչքով տեսաւ։

Ուստի և ռուս հայրենասէրների ամբոխը՝ Թուրք խուժանի հետ միասին յարձակուեց Նիկօլայեւսկի, Կրասնօկրեստովսկի և Կլադբիշչենսկի փողոցներում հայկական տներին և նրանցից 14-ն այրեց—բոլորն էլ

Digitized by Google

հոյակապ, երկյարկանի, եռյարկանի և քառյարկանի տներ։ Կողոպտեց և յափշտակեց նրանց միջի թանկագին կահկարասին և փչացրեց, ջարդ ու փշուր արաւ այն ամէնը, ինչ որ չկարողացաւ կամ չկամեցաւ վերցնել։

Միւս օրը, հոկտեմբերի 20-ին նոյն ամբոխը և արդէն զինեալ կոզակների հսկողութեան տակ՝ փորձեց մուտք գործել բուն հայկական թաղը։

Եւ այդ օրը բաւականացան ջարդ ու փշուր անելով և կողոպտելով մի հայի բնակարանը Տօրգովի փողոցի ծայրում և ռմբակոծելով երկու հայի հոյակապ տներն Մարինսկի փողոցի ծայրում։

Երեք օրից յետոյ՝ հոկտեմբերի 25-ն՝ նոյն ամբոխը՝ աւելի սուարանալով թէ կոզակներով և թէ սպաներով՝ առաջնորդութեամբ քաղաքապահ* զօրքի պետի,—գնդապետ Պօլմազովի,—հանդիսաւոր մուտք գործեց հայկական քաղաքամասի ներսերը՝ անցնելով այն փողոցներով, որոցմով մի քանի օր առաջ անց էր կացած դաշնակցական թափօրը։

Եւ Ստանիսլաւսկի ու Բալախանսկի փողոցների մէջ՝ այրեց 7 հատ հոյակապ հայկական տներ, կողոպտեց ամեն ինչ։

Դրանով էլ չբաւականանալով՝ 84 հոգի էլ հայ մարդ սպանեց, գնդակահարեց։

Եթէ գնդակահարութեան այդ միջոցին վրայ հասած չլինէր Բաքանաչվիլի ազնիւ սպան,—անշուշտ մի քանի տասնեակ հայեր աւելի սպանուած կը լինէին։

ԷԾ

Այսպէս ահա հոկտեմբերի 19—23-ին Բաքւայ հայ ազգաբնակութիւնը մատնուած էր ռուս և թուրք խուժանի կամայականութեանը և ինչպէս այրուած ու կողոպտուած տների ողջ մնացած բնակիչները, այնպէս և

Հարեւան փողոցների հայերը իրանց գլուխը կորցրած՝ ոչ իրանց առելիքն էին իմանում, ոչ էլ անելիքն։

Իգական սեռի վայնասունը, աղաղակը, մանաւանդ՝ մարդու աղիքներն էր կտրատում։

Ելի լաւ էր, որ Տեխնիքական և Միքայէլեան դըպրոցների և տղայոց պրօգիմնազիայի վարչութիւնները այդ ընդարձակ շինութիւնների դռները լայն բաց արին լեզապատառ եղած հայ մարդկանց, նա-մանաւանդ կանանց և երեխաների առաջ և մի քանի օրպատսպարեցին նրանց կատաղի ամբոխի և զինուորների ձեռքից։

Անշուշտ ընթերցողը կը հետաքրքրուի իմանալ, թէ Նոկտեմբերեան այդ աղէտների օրերում որտեղ էին և ինչ էին շինում զօրախաղեր կազմող դաշնակցական զօրավարն և իւր զօրքը։

—Դաշնակցական զօրավարն ու զինուորները՝ մէջ տեղում չէին երեւում, սատանան գիտէ, թէ նրանք որ ծակն էին մտել։

Եւ,—միանգամայն անկեղծօրէն եմ ասում,—շատ խելօք բան էին արել։ Որովհետեւ իրանց երեւալով նըրանք ուրիշ ոչինչ չէին կարող անել, բայց 'ի այն, որ նորանոր զոհերի թիւը կաւելացնէին և նորանոր աւերածութիւններ առաջ կը բերէին։

Արդէն «Դաշնակցութեան» գործունէութեան էութիւնը, նրա ճակատագիրը՝ թէ Տաճկաստանում և թէ մեզ մօտ Կովկասում՝ մինչև այսօր այս է եղել գլխաւորապէս,—կոտորած և միմիայն կոտորած առաջ բերել, առանց սակայն մազի չափ օգնած լինելու այն գործին, որի անունով „Դաշնակցութիւնը" իւր գոյութեան օրից սկսել՝ այնքան ու այնքան բարոյական և նիւթական հարւածներ տւեց ազգին, այնքան կուժ ու կուլաներ ջարդեց նրա անտէր գլխին։

Digitized by Google

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այդ պօռոտախօս, աւանտիւրանների սիրահար կուսակցութեան՝ նոյն իսկ ղեկավարները կամ ջօջերը՝ առհասարակ կամ շատ բօբիկ կամ շատ միամիտ են և ժամանակակից քաղաքականութեան ու կեանքի նենգ ու անողօք իրականութեան վրայ ճիշտ այնպէս են նայում, ինչպէս Քեօռօղլին՝ հեքեաթներում և ինչպէս հանգուցեալ Րաֆֆին՝ իւր առասպելաբանութիւններում։

Փաստեր՝ որքան կամենաք։

ԾԸ

Ամեն անգամ՝ թէ մասնաւոր խօսակցութիւններում և թէ մամուլի մէջ՝ երբ մարդիկ «Դաշնակցութեան» ուշադրութիւնը տեղի ունեցած կոտորած ու աւերածների վրայ են դարձրել;—նրանց ստացած պատասխանն միշտ և հանապազ այս է եղել թէ՝ առանց զոհաբերութեան և զրկանքի բան չի դուրս գալ։—Մի ճշմարտութիւն, որ ոչ ոք չէ ժխտում, նոյն իսկ խաղաղութեան Աւետարանի աշակերտը, որ քաջ գիտէ, որ «եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ, բայց եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ»։

Սակայն սերմանացանը նախ քան սերմանելը՝ տեղեակ և ծանօթ պիտի լինի երկրի, հողի յատկութիւնների հետ և նրան այդ հատկութիւնները տըւող, նրան սնուցանող ու պարարող կլիմայի հետ։ 'Ի հակառակ դէպս՝ նրա սերմերը կընկնին ճանապարհների վրայ, ապառաժների վրայ և փշերի մէջ և ոտքերի կօխան կը լինեն, կը չորանան ու կը խեղդւեն (Ղուկ, Ը. 5—9)։

«Դաշնակցութեան» ամեն տեսակ յեղափոխական ձեռնարկութիւններն՝ մեր ազգի համար միմիայն

Digitized by Google

բացասական արդիւնքներ են արտադրել, նրա ցանած սերմերը կամ թռչուններից են կերուել, կամ նրանց ծլել ու չորանալն մէկ է եղել և կամ կողմնակի փշերից են խեղդուել, որովհետև այդ կուսակցութիւնը մինչև օրս գործել է և դեռ շարունակում է գործել, ուղիղաբար, անուղղակիաբար, փակ աչքերով:

Իսկ փակ, կուրացած աչքերով եղած առաջնորդութեան վախճանը, բնականաբար, խորխորատն է լինելու:

ԾԹ

«Դաշնակցութիւնը» իրան արդարացուցիչ փաստ է համարում և օրինակ է բերում Բալկանեան թերակղզու Սլաւօն ազգութիւնների անցեալ և ներկայ վիճակը:

Բայց «Դաշնակցութիւնը» մոռանում է, որ եթէ Յունաստանը, Բօլգարեան, Ղարադաղը և Սերբիան այն չեն, ինչ որ էին առաջ,—դա հետևանք է այս ու այն եւրոպական տէրութեան՝ յայտնի և գաղտնի, զինեալ կամ անզէն պաշտպանութեանը, միջամտութեանը:

Ապա թէ ոչ՝ յիշեալ ազգերի թափած արիւնը, նրանց տուած այլ և այլ զոհաբերութիւնները՝ ինքն ըստ ինքեան և առանց կողմնակի և գործնական օգնութեան ուրիշ ոչինչ չէին կարող առաջացնել, եթէ ոչ կոտորած և միմիայն կոտորած, այսինքն այն, ինչ որ այժմ մեզ, հայերիս է վիճակուած:

Արդ՝ „Դաշնակցութիւնը“ ում վրայ է իւր յոյսը դրել: Միթէ Ռուսաստանի՞:

Բայց չէ՞ որ Ռուսաստանը տարիներ առաջ ասել էր հրապարակաւ, որ թէև Տաճկահայաստանը իրան հարկաւոր է, միայն թէ՝ առանց հայերի: Թէ՝ նա,—Ռուսաստանը երբէք չի ցանկանալ, որ Տաճկահայաստանը իրան համար երկրորդ Բոլգարիա դառնայ.

Հարկաւ կուգայ ժամանակ,—եթէ միայն չի ե-

Digitized by Google

կել,—որ Ռուսաստանը կը հասկանայ իւր խոշոր սըխալը. կը հասկանայ, որ ազատ Տաճկահայաստանը Ասիայում իրան համար երկրորդ Բուլգարիա ոչ երբէք կարող էր դառնալ՝ իւր չուրջը չունենալով այն տարրերը, ինչ որ ունէր և ունի Բուլգարեան Եւրոպայում։

Բայց այդ արդէն ուշ կը լինի։ Արդէն լուսնեակը երդկից անց կացած կը լինի։

Գերմանական արծիւը իւր սուր ճանկերը՝ արդէն ճղաել, խրել է Փոքր Ասիայի սրտի մէջ։ Եւ Ռուսաստանին, նա մանաւանդ այժմեան Ռուսաստանին, անկարելի է Գերմանիայից յետ մղել։

«Դաշնակցութիւնը» արդեօք իւր յոյսը Ֆրանսիայի վրա՞յ է դրել։

Սակայն հասարակապետական Ֆրանսիան այժմ իւր դեկը կորցրած՝ ճիշտ այն նաւն է դարձել, որ ինքն իրան ծովի վրայ ման գալ չէ կարողանում, այլ միշտ խոշոր նաւերի պոչիցն է քարշ գալիս, սողոսկում։ Եւ գործնական տեսակէտով շատ էլ լաւ է անում։

Խելքին զոռ տալուց, իւր վերմակի չափից աւելի ոտքերն դուրս ձգելուց՝ ի՞նչ շահ, ի՞նչ օգուտ։

—Արդեօք Անգլիայի վրա՞յ է իւր յոյսը դրել «Դաշնակցութիւնը»։

Սակայն չէ՞ որ խորամանկ Ալբիոնը արդէն ասել է թէ՝ իւր նաւերը Հայաստանի լեռների վրայ ման գալ չեն կարող։

—Գուցէ Տաճկաստանի՞ վրայ։

Սակայն եթէ Տաճկաստանը իւր ունեցած խորամանկութեան մէկ տասներորդի չափ խորագիտութիւն ունենար,—հէնց այժմ էլ ամբողջ Բալկանեան րանը կը լինէր։

Ուրեմն „Դաշնակցութիւնը" ո՞ր արտաքին օգ-

նութեան կամ միջամտութեան ապաւինած՝ 15 տարուց 'ի վեր հայ ժողովրդին, պարբերաբար, կոտորել, քայքայել է տալիս։

—Ժօրէսների, Բէբէլների, Բրայսների և մի քանի այլ յայտնի և պատկառելի անձնաւորութիւնների վրայ,—պատասխանում եմ ես,—որոնց խօսքը, ձայնը գրեթէ ոչինչ կշիռ և ազդեցութիւն չունի իրանց կառավարութիւնների առաջ։ Եւ որոնց միջամտութիւնը ('ի հարկէ լոկ խօսքով) հայկական դատին, նոյն իսկ այդ դատի համար վնասակար է եղել և կը լինի։

ԾԺ

Ճշմարիտ է Ժօրէսների, Բէբէլների, Գլադստոնների ձայնը մեծ նշանակութիւն ունի հասարակաց կարծիք պատրաստելու և կազմելու նկատմամբ։

Բայց 'ի սէր Աստուծոյ, ասացէք ինձ, մինչ օրս կազմուած ու կազմակերպուած հասարակաց կարծիքներից՝ մենք ի՞նչ օգուտ տեսանք, որ հիմի էլ նոր կազմուելի հասարակաց կարծիքներից մի որ և է բան յուսանք, ակնկալենք։

Յայտնի է, որ Եւրոպայում եթէ կայ մի ազգութիւն, ուր հասարակաց կարծիքը կեանքի մէջ աննշան դեր չէ խաղացել,—դա անշուշտ Անգլիան է։ Սակայն յօգուտ Տաճկահայ դատին ի՞նչ և որքան բանաւորին այն տասնեկաւոր միտինգներն, որ կազմեցան Գլադստոնի, Արգայլի դքսի, Ջէմս Բրայսի նախագահութեամբ։

—Ոչինչ, կատարեալ ոչինչ։ Մինչև իսկ, որոշ չափով, վնաս տուին Տաճկահայ դատին։

Մեզ նման անօգնական և տառապեալ մի ազգի դատին օգնելու նկատմամբ, իմ կարծիքով, աւելի ձեռնտու, գործնական բան կը լինի մի որ և է կառավարութեան, նրա նախարարի, նրա դեսպանի ան

Digitized by Google

կեղծօրէն սատծ դրական խօսքը, նօտան, արած թեթեւ ցոյցը, քան հարիւրաւոր միտինգների կայացրած ճռճռան որոշումները։

Միայն բանը նրանումն է, սիրելի ընթերցող, որ կառավարութիւնները, ինչպէս տեսանք եւ գիտենք, մեզ չեն օգնիլ եւ եթէ օգնեն՝ դա կը լինի միմիայն իրանց օգտին համար, այլ ոչ թէ մասամբ գոնէ եւ մեր օգտին համար։

Եւրոպական հասարակաց կարծիքի վրայ եւս, տեսանք, չպէտք է յոյս դնել։ Ապա ուրեմն ինչ անել։

ՃԺԱ

Յեղափոխութիւնից ձեռք վեր առնել,—ահա իմ նուաստ կարծիքը այդ հարցին։ Ահա այն միակ ճամբը, որով «Դաշնակցութիւնը» կարող է փրկել մեր ազգին՝ ամէն տեղ եւ ամէն կողմից նրա գոյութեանը սպառնացող լուրջ եւ վերահաս վտանգից։

«Դաշնակցութեան» ամէն մի յեղափոխական ձեռնարկութիւնը՝ դէպ 'ի կորուստ է տանելու մեզ հետըզհետէ։

Եւ որքան շուտ աճի ու զօրանայ մեզանում «Դաշնակցութիւնը»,—այնքան ազգի կորուստը մօտ կը լինի, այնքան շուտ խաչ կը դրուի նրա ազգային եկեղեցական ինքնուրոյնութեան վրայ, այնքան շուտ եւ նորից կը խլեն մեր նորաբաց դպրոցները եւ կամ խիստ կը սահմանափակեն իրանց իրաւունքների մէջ։

Կարճ կապենք,—որքան շուտ լուծուի «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը»,—այնքան ազգը առաջ [illegible]է, այնքան նրա ներքին եւ արտաքին կեանքը՝ թէ Տաճկաստանում եւ թէ Ռուսաստանում՝ շուտ կը խաղաղուի, կը անդորրանայ եւ անձնատուր կը լինի քաղաքակրթական գործունէութեան, որին նա,—հայ ազգը՝

Digitized by Google

ամէն բանից աւելի հակամիտ է և տրամադիր և որի մէջ նա առաւել ընդունակ է ու կենսունակ։

Քաղաքակրթութեամբ, գիտական և բարոյական առաւելութեամբն է միմիայն, որ մեր ազգը, ինչ փոքրիկ տեղով, կարող պիտի լինի ազգերի ընտանիքի մէջ իրան համար պատուաւոր և բարեկեցիկ դիրք ստեղծել։

'Ի հակառակ դէպս «Հանա երեք աւուրք ևս, և Նինուէ կործանեսցի»։

Ես վերջացրի, թէպէտ և դեռ ասելիքներ ունէի։

'Ի միջի այլոց այս էլ էի ուզում ասել, որ ոչ մի տեսակի և գոյնի Պետական Դումա, ոչ մի Մէջլիս և ոչ մի Պարլամենտ՝ չեն կարող արգելք դառնալ, որ ռուս, պարսիկ և օսմանեան կառավարութիւնները՝ օրօրեն իրանց հպատակ հայ ժողովրդին, երբ այդ ժողովրդեան ինքնակոչ ներկայացուցիչները՝ իրանց անմտութիւնը մինչև այնտեղ են հասցնում, որ քրիստոնէական մի եկեղեցւոյ Պետի և ձեռքերը մարդկան արիւնով շաղախուած մի յեղափոխականի պատկերները՝ կողք կողքի դրած՝ կախ են տալիս ազգային եկեղեցական դպրոցում 'ի ցոյց և 'ի հրահանգութիւն հայ ժողովրդեան *)։

*) Ծան. Տես «Նոր Ջուղայի լրաբեր» լրագիրը № 1906. «Վեհափառ Հայրիկի և Անդրանիկի մեծադիր պատկերները՝ ծաղկեայ պսակներով զարդարուած էին Յովհաննեան ազգային դպրոցում»։

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

UNIVERSITY OF MICHIGAN
015 04146 8938
Digitized by Google

Digitized by Google